



Ե. Գ. ԱՂԱԹՕՆ

ՊՈԼՍՈՅ 1860-ի
ԵՒ
ԳԱՀԻՐԷՒ 1906-ի
ԲԱՐԵՑՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԿԵՆՏՐԱԿԱՆ ԵՄՈՒՄ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ
ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՊԵՏԱՄՈՒԹԻՒՆԸ



Տպագրութիւն
ՀԱՅ ԴՊՐՈՅ
Պրնեկն եւ Ժրնեկ, Զուիցերիա

ՊՈԼՍՈՅ 1860-ի
ԵՒ
ԳԱՀԻՐԷԻ 1906-ի
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ
ԾՆՈՒՆԴԸ ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ե. Գ. ԱՂԱԹՕՆ

Տպագրութիւն
ՀԱՅ ԴՊՐՈՅ
Պրնտէն եւ Ժընէվ, Զուիցերիա
(1931)

Գ. Տպագրութիւն
Գահիրէ 2023

Սոյն պրակը տպագրուած է
Գահիրէի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան
Սաթենիկ Ճ. Չագըր Հիմնադրամին միջոցներով

Խմբագիր՝ Մարուշ Երամեան

Նկատի առնելով այս աշխատասիրութեան Բ. Հրատարակութեան սպառած ըլլալը (լոյս տեսած Գահիրէ, 2019-ին), կը վերահրատարակենք զայն, ամբողջացնելով «**Տուցակ Բաժանորդաց Բարեգործական Ընկերութեան Հայոց Միւնչել 1860-ի Վերջը**» բաժնով, որ զանց առնուած էր նախորդ հրատարակութեան մէջ:



Սիրեցեալ հօրս Գրիգոր ԱՂԱԹՕՆԻ յիշատակին

Ութը տարեկան հասակիս զիս որբ թողուցիր: Ամբողջ ճիգս եղաւ անաղարտ պահել անունդ ու գլուխ հանել ազգիդ սիրոյն համար սկսած, բայց անաւարտ մնացած գործդ, սիրելի բարեկամիդ՝ Մեծն Նուպարի արժանավայել որդւոյն՝ ազգային բարերար երջանկայիշատակ Պօղոս Նուպարի շնորհիւ:

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

1860-ին Պոլսոյ մէջ «Բարեգործական Հայոց» անուամբ ընկերութիւն մը հիմնուած էր. այսօր շատեր կ'անգիտանան զայն: Փափաքեցայ մոռացութենէ ազատել սոյն ազգաշէն ընկերութեան յիշատակը:

Չկայ այսօր հայ մը, որ Բարեգործականին անունը լսած չըլլայ, բայց շատեր կ'անգիտանան, թէ ի'նչպէս, ի'նչ պարագաներու տակ ծնունդ առած է ան:

Անցեալին մէջ գտնուեցան ոմանք, որ բոլորովին սխալ տեղեկութեանց վրայ յենլով՝ իրականութեան հիմնովին անհամապատասխան պատճառներու վերագրեցին Բարեգործականին ծնունդը:

Առաջին օրէն գործին մէջ գտնուած ըլլալու՝ պարտականութիւն համարեցի յանձն առնել այս աշխատութիւնը, ապագայ սերունդները իրազեկ ընելու համար:

ԺԸՆԷՎ, 1931

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻՆ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ¹

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻՍ ՄԷՋ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ՄԸ ԳԱՂԱՓԱՐԸ ԻՆՉՊԷՍ ՈՒՆԵՑԱՅ

Տասնչորս տասնհինգ տարեկան եղած ժամանակս, երբ ամառնային արձակուրդներուն տուն կ'երթայի, մօրմէս հանգուցեալ հօրս *պարուջան* կ'ուզէի, անոր պարունակած թուղթերը կարդալու համար: Մայրս ալ տոպրակի մը մէջ մեծ խնամքով ամփոփած պահած այդ թուղթերը ինձ կը յանձնէր՝ պատուիրելով որ մէջէն բա՛ն չկորսնցնեմ կամ պատռեմ:

Սոյն *պարուջայի*ն մէջ գտայ տասնհինգէ աւելի նամակները հանգուցեալ Օտեան Գրիգոր էֆ.ի, որ հոչակաւոր Միտհաթ Փաշայի Ռումէլիի կուսակալութեան ժամանակ թարգմանի կամ քաղաքական տնօրէնի պաշտօնով Ռուսոճուք կը գտնուէր. ինչպէս նաեւ Միտհաթ Փաշայի հօրս ուղղեալ բարեկամական գաղղիներէն նամակները, ու շատ մը ուրիշ օտարազգի դեսպաններու եւ մեծամեծ անձնաւորութեանց նամակներ:

Հայրս կարգ մը թուղթերուն վրայ մատիտով նօթագրութիւններ ըրած էր, որոնց մէջ սա իմաստով տողեր գտայ.

«Հայ ազգը փրկելու համար բարեգործական մը հիմնելու է»:

«Որպէսզի կասկածի տեղի չտայ, երկրագործական նպատակ մը նշանակելու է այդ Միութեան» եւ այլն:

Այդ թուղթերուն մէջէն ելան մէկ տարեկան անդամավճարի ընկալագիր մը հօրս անուան, ստորագրուած գանձապետէն, որուն անունը չեմ յիշեր, եւ հրատարակուած պրակներու անջատ էջեր, որոնցմէ տեղեկացայ թէ հայրս այդ Ընկերութեան ատենապետ ընտրուած է եղեր:

Այս իրողութիւնը միտքիս վրայ զօրեղապէս ազդած ըլլալով, քանի՛ կը մեծնայի, ամէն տարի արձակուրդներու ատեն, աւելի՛ հետաքրքրութեամբ կը կարդայի հօրս *պարուջան*:

¹ Այս պատմութիւնը տարիներ վերջ, յիշողութեամբ միայն գրուած ըլլալով, հաւանական է որ թուականներ սխալ դրուած, կամ անուններ մոռցուած ըլլան. այս մասին ընթերցողէն կը խնդրուի ներողամիտ գտնուիլ:


Այսպէս Բարեգործականի գաղափարը մատաղ տարիքէս միտքիս մէջ դրոշմուած մնաց:

Յետոյ երբ, - Բարիզ երթալով երկրագործական ուսումնաւարտելէ վերջ, - Պոլիս վերադարձայ ու պաշտօնի անցայ, պարապոյ ժամերուս կրկին աչքէ կ'անցընէի այդ *պարութան*: Հետաքրքրութիւնս աւելի շարժելով, որս ժամանակին եւ իրեն տարեկից մարդոց կը դիմէի սոյն ընկերութեան մասին տեղեկութիւններ քաղելու համար: Հանգուցեալ Մկրեան Տէր Հայրը, որ անոր անդամակցած է եղեր, պատմեց ինձ թէ հայրս, 1860-ին, քանի մը բարեկամներով Հայոց համար այս Բարեգործական ընկերութիւնը հաստատեր է, որուն բաւական թիով պապական մեծամեծ անձնաւորութիւններ ալ անդամակցեր են: Բայց այն ժամանակուան հայ-կաթոլիկներուն Պատրիարքը՝ Հասուն, տեսնելով թէ անոնք շատ սիրով են հայ-լուսաւորչականներուն հետ եւ ձեռք ձեռքի տուած հայութեան զարգացման կ'աշխատին, եւ վախնալով որ օր մը լուսաւորչական դառնան, Եպարքոս Ալի Փաշայի կը մատնէ ըսելով, որ Ընկերութեան նպատակը Հայաստանի մէջ յեղափոխութիւն ընել է: Ալի Փաշա պէտք եղած հրամանները տալով Ընկերութիւնը կը խափանէ: Հանգուցեալ Մկրեան Քահանան պատմեց նաեւ, թէ սոյն Ընկերութիւնը միայն երկու տարի կեանք ունեցած էր եւ մինչեւ երկու հազար թրքական ոսկի հաւաքած: Այդ դրամը Կիւզէլ անունով հայ-կաթոլիկ սեղանաւորի մը յանձնուեր է, որ վերջէն Բարիզ երթալով դարձեալ սեղանաւորութիւն կ'ընէր: Ոչ ոք գիտէ այսօր, թէ ի՞նչ եղած է այդ դրամը:

Այսպէս ահա՛ պարտաւորուած էի անուղակի աղբիւրներէ ձեռք բերել զիս հետաքրքրող տեղեկութիւնները, քանի որ հայրս, 1868-ին, հագիւ ութ տարեկան եղած ատենս կորսնցուցած էի:

Յետոյ է որ տպագրեալ ծրագիրը գտայ, զոր ընթերցողը կը տեսնէ ամբողջութեամբ գրքոյկիս վերջը²:

² Ի նկատի առնելով որ շատերու անծանօթ է հին Բարեգործականի մը գոյութիւնը, պատշաճ դատեցի ամբողջութեամբ դնել գրքոյկիս վերջը, 1861-ի ծրագիրը, ինչպէս նաեւ անդամոց ցանկը, զի այդ հին անդամներուն թոռները եւ նոյնիսկ զաւակներէն ոմանք ողջ են, ու շատ հաւանական է որ տեղեկութիւն չունին իրենց պապերուն կամ հայրերուն այդ ազգանուէր ձեռնարկէն:



Ποητη Φωζα Ίλιωλη

ԻՆՉՊԷՍ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ ՀԻՄՆՈՒԵՑԱԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԸ

Սույթան Համիտի ժամանակ, ուր Հայոց դէմ հալածանքի շրջանը սկսած էր, ինձ համար անկարելի էր Բարեգործականի վրայ մտածել: Երբ, տարիներ վերջը, Պոլսէն փախչելով Եգիպտոս գացի հաստատուեցայ, այն ատեն փափաքեցայ հօրս սկսած գործը, ազգասիրական վերոյիշեալ ձեռնարկը շարունակելու աշխատիլ. բայց նպատակս գլուխ հանելու առիթները կը պակսէին:

Գահիրէի մէջ Պօղոս Փաշա Նուպարի տունը կը հանդիպէի յաճախ Զէյթունի հերոս՝ հանգուցեալ Ապահ Պետրոսեանի. լուրջ, ազգասէր երիտասարդ մըն էր: Օր մը Գահիրէի մօտ, Նեղոսի վրայ, Ռօտ-էլ-Ֆարակ ըստած գիւղին սրճարանը միասին նստած ազգային գանազան խնդիրներու վրայ խօսած ատեննիս, յայտնեցի իրեն Բարեգործական մը հիմնելու դիտաւորութիւնս ու ըսի, թէ այդպիսի գործ մը գլուխ հանելու համար, ընդհանուր ազգին ծանօթ եւ վստահութիւնը վայելող անձնաւորութիւն մը պէտք է գտնել, ու անելցուցի. «Միայն Պօղոս Փաշա Նուպարը կրնայ այս գործը յաջողցնել. բայց չեմ յուսար որ ընդունի, որովհետեւ շատ զբաղեալ է»:

Ապահ թելադրեց Փաշային որդւոյն՝ Առաքել Պէյին առաջարկել:

«Տակաւին շատ երիտասարդ է, պատասխանեցի, չեմ յուսար որ այդպիսի պաշտօն մը ընդունի: Բայց, Ապա՛հ, կրնանք այստեղ գլուխ գլխի տալով կանոնագիր մը շինել»:

Բարեկամիս գիրը գեղեցիկ ըլլալուն, բարեգործականի կանոնագիր-ծրագրի մը 5-6 յօդուած տուն տուի ու խնդրեցի, որ մաքուրի առնելով ինձ տայ:

Քանի մը տարի անցաւ ասոր վրայ. միշտ առիթ կը փնտռէի այս խնդրոյն մասին Պօղոս Փաշայի բացուելու եւ խնդրելու իրմէ, որ Հայաստանի հալածեալ հայոց համար Բարեգործական մը հիմնէ: 1905-ին Ապրիլ ամսոյ մէջ, եթէ չեմ սխալիր, երբ Պօղոս Փաշայի հետ նստած կը խօսակցէինք, Հաւասի հեռագիր մը կարդացինք, որով կը ծանուցուէր թէ Ռուսիոյ Քիէվ քաղաքին մէջ հրէից *polygod* (ջարդ) մը տեղի ունեցեր է ու մեծ թուով հրեաներ սպաննուեր եւ վիրաւորուեր են: Երբ սոյն հեռագիրը Փաշային կարդացի, «Հայերը, ըսաւ, Տաճկաստանի մէջ կը

ջարդուին, հրեաներն ալ Ռուսաստանի մէջ. այս երկու ժողովուրդներուն ճակատագիրն է ջարդը»: Հետեւեալ օրը, երբ Փաշային քովն էի, Հաւասի նոր հեռագիր մը կարդացի, որ կը ծանուցանէր թէ Բարիզի Ալիանս Իզրաէլիթը Քիէվի հրեաներուն իբր օգնութիւն, հեռագրաւ երկու հազար ոսկի ֆրանք ղրկեր է: Հեռագիրը Փաշային ցոյց տուի, ու կարդալէ վերջ ըսի. «Հայաստանի մեր խեղճ եղբայրներուն ալ յաճախ ջարդ կը պատահի եւ մինչեւ դրամական օգնութիւն դրկուիլը ամիսներ կ'անցնի: Ա՛խ, ի՞նչ աղէկ կ'ըլլար, եթէ մենք ալ ունենայինք այսպիսի ընկերութիւն մը, որ կարող ըլլար, ջարդ պատահած ժամանակ, անմիջապէս օգնութիւն հասցնելու»:

«Այո՛, ճիշդ է ըսածդ, պատասխանեց Փաշան, դժբախտաբար մենք այդպիսի ընկերութիւն մը չունինք»:

Ու հիւրեր գալով ուրի՛շ խնդիրներու վրայ սկսանք խօսիլ:

Նոյն տարւոյ, այսինքն 1905-ին, Յունիս ամսուն Կովկասի մէջ հայ-թաթարական կոհներ տեղի ունեցած եւ բաւական հայ գիւղացիներ վնասուած էին: Այդ ժամանակ էջմիածնայ Կաթողիկոսը Խրիմեան Հայրիկն էր, որ Պոլսոյ Պատրիարք Օրմանեան Սրբազանէ նամակով խնդրած էր իր իրաւասութեան տակ գտնուող թեմերուն գրել եւ օգնութիւն ուզել: Ամառուան եղանակին Բարիզ գացած էի: Սեպտեմբեր ամսոյ մէջ Գահիրէ վերադարձիս՝ Առաջնորդարանը, Օրմանեան Սրբազանի գրութեան վրայ՝ վեց-եօթը հոգիէ բաղկացեալ հանգանակիչ յանձնախումբ մը կազմած, զիս ալ, Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ փոխ-ատենապետի հանգամանքովս, այդ յանձնախումբին ատենապետ ընտրած էր: Բնական է ընկերներուս հետ սկսանք որչափ որ հայու խանութ կար այցելել ու դրամ հաւաքել: Չգտնուեցաւ մէկ խանութպան մը, մէկ հայ մը, որ մերժէր իր լուման տալ: Ամէն մարդ սիրով, քիչ կամ շատ, դրամ տուաւ: Կարելի է ոմանք շատ կրնային տալ եւ քիչ տուին, բայց վերջապէս մէկ խօսքով տուին: Երբ օր մը, երկու ընկերներով հայ ոսկերիչներու Խանը Խալիլ ըսուած տեղը պիտի մտնէինք՝ մեր ոսկերիչ եղբայրներէն դրամ խնդրելու, 60-65 տարեկան, ցնցոտիներ հագած, աղքատիկ վանեցի Հայ մը, որ թեւին վրայ 10-12 զոյգ մուճակ առած ծախելու համար կը պտղտէր, մեզի մօտենալով՝ «Աղանէ՛ր, ըսաւ, ի՞նչ կը փնտոռէք, այստեղ ի՞նչ կ'ընէք»: Երբ մեր նպատակը բացատրեցի իրեն՝ «Շա՛տ աղէկ, ես ալ պէտք է որ իմ լումաս տամ» ըսելով քսակը հանեց գրպանէն ու մէջը գտնուած մէկ հատիկ եգիպտական քսան դրուշնոցը

ինձ տուաւ: Զարմացայ մնացի: Այս խեղճ հայաստանցի հայուն կարելի է ամբողջ դրամագլուխը հարիւր դրուշ էր, եւ ինքը առանց վարանելու իր հարստութեան 20 առ 100ը մեզի տուաւ, իր ազգակիցներուն օգտակար ըլլալու համար: Այս պատուական հայուն ըրածը վրաս շատ ազդեց:

Պօղոս Փաշա Նուպար Հոկտեմբեր ամսոյ մէջ Գահիրէ եկած էր: Ամէն երեկոյ իրեն կ'երթայի եւ առիթ մը կը փնտռէի, իր մէկ ուրախ վայրկեանը գտնելով, բարեգործականի մը հիմնարկութեան նպատակս իրեն յայտնելու համար: Մէկ քանի օր վերջը, տեսնելով թէ ուրախ զուարթ էր, առիթը փախցնել չուզեցի. «Փաշա՛, ըսի, Ձեզի շատ կարեւոր խնդրոյ մը վրայ պիտի խօսիմ, բայց կ'աղաչեմ կը պաղատիմ որ խօսքս չընդմիջէք: Թողուցէ՛ք որ ինչ որ ըսելիք ունիմ ըսեմ վերջացնեմ եւ յետոյ Դո՛ւք խօսեցէք»: Փաշան խնդալով մը պատասխանեց. « Շատ աղէկ, ահա՛ քեզի մտիկ կ'ընեմ. ըսէ՛ ըսելիքդ»: «Տասնըհինգ օր է, ըսի իրեն, Կովկասի մեր հայ արկածեալներուն համար ժողովուրդէն դրամ կը հաւաքենք: Ամէն մարդ տուաւ. մէկ հայ մը չգտնուեցաւ որ չտար, բայց ի՞նչ օգուտ. ջարդը Յունիսին պատահեցաւ, այսօր Հոկտեմբեր ամսոյ մէջ ենք: Մեր ժողոված դրամը մինչեւ որ Կովկաս՝ արկածեալներուն հասցնենք Նոյեմբեր պիտի ըլլայ. ինչի՞ կրնայ ծառայել երբ այս օգնութիւնը վեց ամիս վերջը ժողովուրդին կը հասնի: Ասկէց քանի մը ամիսներ առաջ, օր մը Քիէվի հրեաներուն պատահած ջարդին հեռագիրը կարդացինք եւ անմիջապէս հետեւեալ օրն ալ Ալիանս Իզրաէլիթի 200,000 ֆրանք դրկած ըլլալուն հեռագիրը: Մենք ալ բարեգործական մը հիմնենք եւ, քանի որ հայ ժողովուրդը միշտ մեծ տրամադրութիւն ցոյց տուած է իր արկածեալ եղբայրներուն օգնելու, ամէն հայէ ամսական մը առնենք, որ սնտուկին մէջ պատրաստ գտնուի եւ երբ աղէտ մը պատահի, Ալիանս Իզրաէլիթին պէս, քսանըչորս ժամուան մէջ մեր օգնութիւնը կը հասցնենք, որով շատ մը ազգայիններու մահէ եւ հիւանդութենէ ազատելուն պատճառ կ'ըլլանք»: Փաշան ինձ պատասխանեց. «Գաղափարդ շատ լաւ է: Դուն այդ տեսակ ընկերութեան մը գլուխը անցի՛ր, ես ալ կը խոստանամ քեզի օգնել»:

«Ո՛չ Փաշա, ըսի, Դո՛ւք պէտք է անցնիք գործին գլուխը: Նուպար անունը ամբողջ չորս միլիոն հայութեան ծանօթ է: Հայաստանի ամենափոքր գիւղի մը բնակիչը Ձեր անունը լսած է: Երբոր ժողովուրդը իմանայ թէ Դուք՝ հայութեան համար՝ բարեգործական ընկերութիւն մը հաստատեր էք, սիրով պիտի մասնակցի մտածելով, որ Նուպար Փաշա

մը իրեն վստահուած դրամը պիտի չուտէ. իր նպատակին պիտի յատկացնէ զայն»: Փաշան, կարծելով որ այս խօսքերս զինքը փաղաքշելու համար էին, խնդալով մը ըսաւ. «Կը կարծե՞ս որ ժողովուրդը վրաս վստահութիւն ունենայ»:

«Պատուոյս վրայ կ'երդնում Փաշա՛, չկայ հայ մը, որ Նուպարի վրայ վստահութիւն չունենայ: Նամանաւանդ որ, 1896-ի վերջերը Բարիզ գտնուելով երբ, ինչպէս գիտէք, Ձեր հօրը քով կ'երթայի, Ձեր մեծանուն հայրը, որ մեծ ազգասէր մ'էր, մի քանի անգամներ հայութեան համար Բարեգործականի մը պէտքին վրայ խօսած էր: Ուստի այսօր երբ Բարեգործական մը հիմնէք՝ Ձեր հօր մեծ փափաքը իրականացուցած պիտի ըլլաք. իր ոսկորները պիտի խայտան գերեզմանին մէջ ու պիտի օրհնէ Ձեզ»:

Պօղոս Փաշան, որ իր մեծանուն հօր հանդէպ պաշտում մը ունէր, յոյժ զգացուելով՝

«Շա՛տ աղէկ, Աղաթօն, պատասխանեց, կ'ընդունի՛մ, բայց մէ՛կ պայմանաւ. պէտք է խոստանաս, որ մինչեւ վերջ ինձ պիտի աջակցիս⁴: Հիմա պէտք է որ Բարիզ գրես եւ Ալիանս Իզրաէլիթի կանոնագիրը բերել տաս, որպէս զի գաղափար մը կազմեմ»:

Ուրախութեամբ, Փաշային պատուոյ խօսք տուի որ մինչեւ մահս իրեն պիտի աշխատէի. եւ հետեւեալ օրը Բարիզ գրելով Ալիանս Իզրաէլիթի կանոնագիրը բերել տուի:

Մենք որ երկա՛ր, ընդարձակ կանոնագրի մը կը սպասէինք, երեք կամ չորս յօդուածէ բաղկացած կանոնագրի մը առջեւ գտնուեցանք, ինչ որ Փաշային գոհացում չտուաւ: Ապահ Պետրոսեանի հետ պատրաստած ծրագիրս իրեն ներկայացուցի. զայն ալ բաւարար չգտաւ: Ազգային գործերու մէջ մեծ փորձառութիւն չունենալու՝ փափաքելով սոյն տեսակ գործերու մասին հմտութիւն ունեցող անձի մը դիմել, Գահիրէէն Աղեքսանդրիա իջայ եւ սիրելի բարեկամիս՝ Տիգրան Կամսարականի հարցուցի թէ ո՞վ կրնար ինձ օգտակար ըլլալ: Կամսարական

⁴ Եթէ ընթերցողներուս մէջ գտնուին կարծողներ թէ այս գրքոյկը Պօղոս Փաշայի մահուընէն վերջ ի լոյս ընծայելով՝ ջանացած եմ ինձ վերագրել, յանիրաւի, բարեգործականի մը ստեղծման գաղափարը հանգուցելոյն ներշնչած ըլլալու պատիւը, կրնան դիմել Փաշայի զաւակներուն: Ասկէ գատ, Փաշային կոմէ նամակ մը ունիմ՝ որուն մէջ կը շեշտէ թէ ես եղած եմ առաջին անգամ իրեն թելադրող բարեգործական մը հիմնելու գաղափարը:

յանձնարարեց Լեւոն Մկրտիչեանը: Անմիջապէս այս վերջինին մօտ երթալով գործը հասկցուցի եւ իրմէ խնդրեցի, որ Հայկական Բարեգործական ընկերութեան մը ծրագիր-կանոնագիրը շինէ: Տիար Մկրտիչեան սիրով ընդունեց խնդրանքս եւ մէկ շաբաթ վերջ գաղղիերէն եւ հայերէն լեզուաւ բառական ընդարձակ ծրագիր մը ինձ ուղղեց Գահիրէ: Փութացի Փաշային նրկայացնել զայն: Փաշան կարդալէն վերջ կրկին անբաւարար գտնելով՝ «Ասոնց ամէնքը մէկ կողմ կը դնենք» ըսաւ: Փոքրիկ յանձնախումբ մը կազմեց, որ կը բաղկանար իրմէ, Եագուպ Փաշա Արթինէ, Շէրիտճեան Կարապետ Պէյէ, իր գործերուն տնօրէն՝ Մկրտիչ Անդրանիկեանէ եւ ինձմէ: Այդ միջոցին տոքթ. Ն. Տաղաւարեան Եգիպտոս կը գտնուէր. Փաշայէն խնդրեցի որ նա ալ յանձնախումբին անդամակցի, ու սկսանք Փաշային աշխատակցիլ: Ամէն երեկոյ, ժամը 6-էն 7:30 կը ժողվուէինք Փաշային տունը եւ ամէն մէկ յօդուածի վրայ բառական կարծիքներու փոխանակութենէ վերջ, Փաշան ինքը գրի կ'առնէր: Այս աշխատանքը երեք ամիս տեւեց: Խնդիրը բառական փափուկ էր: Մեր փափաքն էր, որ այս Բարեգործականը ամէն երկրի մէջ հիմնէինք, նոյնիսկ Տաճկաստանի մէջ: Թրքական կառավարութեան հայատեաց քաղաքականութիւնը մեզի ծանօթ լինելուն, կառավարութեան կասկածը մեր հիմնելիք Բարեգործականին վրայ չհրաւիրելու համար պէտք եղաւ ամէն մէկ բառի վրայ երկարօրէն մտածել. այդ պատճառաւ էր որ ՀԱՅԱՍՏԱՆ բառը չգործածեցինք եւ մասնաւոր յօդուածով մը յայտարարեցինք, թէ սոյն Ընկերութիւնը երբեք քաղաքականութեամբ պիտի չզբաղէր, այլ լոկ մարդասիրական նպատակաւ պիտի գործէր: Կրկին՝ դիտմամբ գրուեցաւ թէ մասնաժողովներուն մէջ քաղաքական Կուսակցութեանց պատկանող մարդիկ պիտի չկրնային ընտրուիլ: Եւ, որպէս զի օր մը Ընկերութիւնը արկածախնդիր յեղափոխականներու ձեռք չիյնայ, ծանր պայմաններ դրուեցան: Ծրագիրը մէկ քանի անգամ քննուելէ, բարեփոխուելէ վերջ, երբ Փաշան վերջնական կերպով մաքուրի առնել տուաւ զայն, երեկոյ մը մեզ հաւաքեց ու ըսաւ. «Ծրագիրը շինեցինք, բայց մէջը կտակի, նուիրատուութեանց եւ անձեռնմխելիութեան խնդիրներ գտնուելուն՝ պէտք կը տեսնեմ որ լաւ փաստաբանի մըն ալ ցոյց տանք եւ իր փորձառութենէն օգտուինք»: Հետեւեալ օրը զիս հետը առնելով՝ Գահիրէի երեւելի փաստաբաններէն, հրէական ծագում ունեցող Սէզար Ատայի գրասենեակը գացինք: «Սիրելի բարեկա՛մս, ըսաւ Փաշան

հանրաձայնօթ իրաւագէտին, մենք հայերս ալ ձեր Ալիանս Իզրաէլիթին նման ընկերութիւն մը հիմնել կ'ուզենք: Ծրագիր-կանոնագիր մը շինեցինք, զոր ահա՛ Ձեզ կը յանձնեմ: Կը փափաքիմ որ միասին աշխատակցելով կատարեալ բան մը շինենք»: Սէզար Ատա սիրով ընդունեց Փաշային առաջարկութիւնը եւ իր առաջին քարտուղարը կանչելով հրահանգ տուաւ. «Այսօրուընէ սկսեալ ամէն օր ժամը 5-էն 7 Փաշային հետ զբաղած պիտի ըլլամ. սոյն միջոցին մա'րդ պէտք չէ որ քովս գայ, նոյնիսկ եթէ Խտիվը ուզէ զիս, իրեն ըսէք թէ բացակայ եմ»: Այդ օրէն իսկ սկսանք աշխատիլ, երկու ամիս շարունակ, ամէն օր երկու ժամ յատկացնելով: Երբեմն մէկ բառի վրայ կէս ժամ ժամանակ կ'ացընէինք, որպէս զի Թուրք կառավարութիւնը ոեւէ կասկած չունենար եւ արգելք չըլլար Ընկերութեան Տաճկաստանի մէջ ալ ճիւղաւորուելուն: Երբ կանոնագիրը մի քանի անգամ սրբագրուելէ ու վերջնական ձեւ մը առնելէ յետոյ, փաստաբան Սէզար Ատա զայն Փաշային դրկեց, Փաշան կարդալով շատ գոհ մնաց եւ ինձ ըսաւ. «Հիմա պէտք է որ շնորհակալութեան նամակ մը գրեմ եւ միեւնոյն ժամանակ իր այս աշխատութեան վարձագինը ուզեմ: Կարծեմ բաւական սուղի պիտի նստի, բայց հոգ չէ, ազգին համար է, ի'նչ որ ուզէ կու տամ»: Սէզար Ատա այնքան համբաւաւոր ու յարգուած իրաւագէտ մըն էր, որ երբ դատական խնդրոյ մը մասին խորհուրդ հարցնելու համար մէկը իրեն դիմէր, ժամացոյցը դիմացը կը դնէր եւ մէկ ժամուան համար հարիւր անգլիական ոսկի կ'առնէր: Իրեն հետ երկու ամիս աշխատակցած էինք, ամէն օր երկու ժամ, որով հարիւր ժամէ աւելի կ'ընէր. հարիւրական ոսկիէն 10,000 ոսկի: Բնական է 10,000 ոսկի պիտի չպահանջէր. Փաշան կը կարծէր որ առ նուազն հազար ոսկի տալու պիտի ստիպուէր: Ո՛րչափ մեծ եղաւ զարմանքը, երբ հետեւեալ օրը, Սէզար Ատայի պատասխանը ստացաւ, որուն մէջ կ'ըսէր. «Ես արդէն ինքզինքս վարձատրուած կը զգամ մտածելով, թէ այս աշխատութեամբս պիտի կարենամ օգտակար ըլլալ հայ ժողովուրդին, որ այնքան տառապած է եւ որու հանդէպ մեծ համակրանք ունիմ», եւ սանթիմ մը իսկ չընդունեց: Ու Բարեգործականը հիմնուելէն վերջ ալ միշտ կը հետաքրքրուէր: Ամէն անգամ որ զիս տեսնէր, կը հարցնէր. «Ի՛նչպէս է Ընկերութեան վիճակը»: Երբ իրեն կը պատմէի թէ ամէն օր, ամէն տեղ անդամներուն թիւը կ'աւելնար եւ Միութեան դրամագլուխը այնինչ գումարին հասած էր, մեծ ուրախութիւն կը զգար: Ահա՛ ազնիւ հրեայի մը թանկագին

ծառայութիւնը հայ Բարեգործականին:

Քիչ առաջ մոռցայ ըսելու, թէ երբ Բարեգործականի մը հիմնարկութիւնը Փաշային առաջարկեցի եւ Փաշան ընդունեց, միշտ իր համեստութենէն մղեալ եւ չուզելով որ ինքն իր գլխուն այդպիսի հաստատութիւն մը ստեղծէ, ինձ ըսաւ. «Քանի որ կ'ըսես թէ ազգին օգտակար բան մըն է առաջարկածդ, թող ազգայիններէն մի քանի անձինք ինձ դիմեն եւ առաջարկեն, որպէս զի ես ալ ազգին փափաքին գոհացում տուած ըլլամ»:

Անմիջապէս Հանգանակիչ Մարմնին անդամները Տիգրան Փաշա Ապրոյի տունը, իր գործակատար ակնեցի Սեդրակ Դաւիթեանի սենեակը հրաւիրելով հետեւեալը ըսի. «Բարեկամներ, այսչափ օր է միասին աշխատելով դրամ կը հաւաքենք: Տեսաք որ ամէն մարդ, ամէն հայ տուաւ իր լուման եւ ոչ մէկը մերժեց: Մեր ժողովուրդին մէջ ազգասիրութեան զգացումը վառ պահուած է: Ամէն անգամ որ աղէտ պատահած է, իր օգնութիւնը զլացած չէ: Բայց մինչեւ որ դրամ հաւաքուի եւ իր տեղը դրկուի, ամիսներ կ'անցնին. միթէ անելի օգտակար չէ՞ր ըլլար, որ ընկերութիւն մը հաստատէինք, ամէն հայ իր կարողութեան համեմատ փոքրիկ ամսական մը տար, սնտուկին մէջ միշտ պատրաստ դրամ գտնուէր, որպէս զի աղէտի մը պարագային անմիջական օգնութիւն դրկուէր»:

Ընկերներս ամէնքն ալ, միաբերան համամիտ գտնուեցան եւ անելցուցին որ եթէ Պօղոս Փաշան այդպիսի գործի մը զուխը անցնէր, վստահ էին թէ գործը մեծ յաջողութիւն կը գտնէր: Ուստի իրենց առաջարկեցի, որ Փաշայէն ունկնդրութիւն մը խնդրեմ ու միասին երթանք յայտնենք իրենց փափաքը:

Այս թելադրութիւնս ուրախութեամբ ընդունուեցաւ: Անմիջապէս Փաշային գացի, որուն տունը Տիգրան Փաշայի տան կից էր, խնդիրը յայտնեցի: «Շատ լաւ, հաւանեցաւ, վաղը վեցին եկէ՛ք, կը սպասեմ»:

Հետեւեալ օրը մեր ընկերներով գացինք: Զիրենք ներկայացնելէ վերջ Փաշային, ըսի թէ իրեն առաջարկութիւն մը ունէին ընելիք. մեր ընկերներէն մին խօսք առաւ – ես դիտմամբ չխօսեցայ – ու իմ նախորդ օրուան ըսածներս կրկնելով, բարեգործական ընկերութեան մը հիմնուիլը խնդրեց եւ Փաշային աղաչեց, որ ինք այս գործը ստանձնէ: Փաշան գովելով յայտնուած նպատակը իբր ազգին օգտակար գործ մը, սիրով ընդունեց: «Ա՛լ ինձ թողուցէք, անելցուց, որ աշխատիմ եւ ձեր

փափաքը իրականացնեմ»:

Ամէնքը խորին շնորհակալութիւն յայտնեցին եւ մեծ ուրախութեամբ մեկնեցան:

Ինչպէս ընթերցողը կը հասկնայ՝ պարզ ձեւակերպութիւն մըն էր այս:

Երբ կանոնագրին մաքուրը Սէզար Ատայի կողմէ Փաշային յանձնուեցաւ, Փաշան մեզ ամէնքս Ապրիլ 15-ի Կիրակի օր մը հաւաքեց, կանոնագիրը կարդաց եւ առաջին ժողովի անդամ ընտրուեցան

Պօղոս Փաշա Նուպար	ատենապետ
Եագուպ Փաշա Արթին	փոխ ատենապետ
Երուանդ Աղաթօն	փոխ ատենապետ
Տոքթ. Ն. Տաղաւարեան	ատենադպիր
Մկրտիչ Անդրանիկեան	գանձապետ
Շէրիտճեան Կարապետ Պէյ	խորհրդատու անդամ
Մարկոսով Պէյ	խորհրդատու անդամ
Գրիգոր Եղիաեան	խորհրդատու անդամ
Առաքել Պէյ Նուպար	խորհրդատու անդամ
Յովհաննէս Ակրեան ⁴	խորհրդատու անդամ

Այդ օրը կատարուեցաւ Հ.Բ.Ը. Միութեան հիմնարկութիւնը եւ հետեւեալ օրէն սկսեալ մի քանի ընկերներով անդամագրութեան համար դիմեցինք նախ Գահիրէի ազգայիններու: Ամէն անդամ պէտք էր ամսական մը վճարէր, որուն նուազագոյնը 5 եգիպ. դահեկան էր, այսինքն մէկ անգլ. շիլին, եւ իբր մտից տուրք, մէկ անգամուան համար՝ տասը դահեկան: 400 անգլ. ոսկի տուողը «պատուոյ անդամ» կ'ընտրուէր, իսկ 1000 անգլ. ոսկի տուողը «բարերար անդամ» տիտղոսը կ'առնէր:

Այդ օրէն սկսեալ ինքզինքս Բարեգործականին նուիրեցի:

Երբ օր մը գոհարավաճառ Միհրան Ղազարոսեանի հետ Խան-Խալիլ՝ հայ ոսկերիչներու աշխատատեղին գացի եւ ոսկերիչ եղբայրներու Բարեգործականի մեր նպատակը յայտնեցի, ամէնքը սիրով ընդունեցին եւ մեծ ուրախութեամբ անդամագրուեցան: Տեսայ ոսկերիչ երիտասարդ աշկերտներ, որ իրարու կ'ըսէին. «Լեւո՛ն, Յակո՛բ, Հայաստանի համար

⁴ Որ մէկ շաբաթ վերջ հրաժարականը տուաւ:

Բարեգործական անունով ընկերություն մը կազմեր է Փաշան, ես գրուեցայ, դո՛ւն ալ գրուէ: Ասկէ վերջ կրնանք վստահ ըլլալ, որ մեր ազգին համար տուած դրամնիս իր նպատակին պիտի գործածուի ամբողջովին. ասդիինին, անդիինին գրպանը պիտի չմնայ»: Այս երիտասարդ ոսկերիչ աշկերտներուն իրարանցումը եւ խանդը անբացատրելի ուրախութեամբ մը լեցուցին զիս եւ այսօր, քսանըհինգ տարուան փորձառութենէ վերջ, պէտք է յայտարարեմ, որ մեր հայ ոսկերիչ եղբայրները, ո՛ր որ ալ գտնուած ըլլան, իրենց ազգասիրութիւնը ցոյց տուած են:

Գահիրէի մէջ աշխատակցելէ վերջ, բարեկամիս Մկրտիչ Անդրանիկեանի հետ Աղեքսանդրիա իջնելով սկսանք անդամագրութեան: Հայազգի Փարթող Փաշան, որուն հասկցուցի խնդիրը եւ, իր առատաձեռնութիւնը գիտնալով, առաջարկեցի մեր Ընկերութեան «բարերար անդամ» ըլլալ, սիրով ընդունեց եւ 1000 ոսկի տուաւ:

Երբ Եգիպտոսի մէջ, որ ազատ երկիր մըն էր, յեղափոխականներու հետ կը տեսնուէի եւ իրենց արկածախնդիր վարմունքովը ազգին պատճառած չարիքներուն վրայ կը խօսէի, ինձ կը պատասխանէին. «Այո՛, իրաւունք ունիք. սակայն մենք, տեսնելով որ ազգին ապագան մտածող եւ Հայաստանի հայութեան օգնող մարմին մը չկայ, ազգասիրաբար յեղափոխական եղանք եւ մեր անփորձութեան պատճառաւ, առանց հետեւանքը մտածելու փորձեր ըրինք, որմէ ազգը տուժեց: Եթէ օր մը տեսնենք որ հայութեան ապագան մտածող լուրջ մարմին մը կազմուած է, մենք ալ սիրով կը դադրինք մեր ձեռնարկներէն: Յանցանքը մեր մեծերունն է, որ ազգին համար բա՛ն մը չեն ըներ, բա՛ն մը չեն խորհիր»: Եւ ես իմ պարզամտութեամբս իրաւացի կը գտնէի ըսածնին: Երբ Բարեգործականը հիմնուեցաւ, կը յուսայի թէ մեր այդ յեղափոխական երիտասարդները սիրով պիտի ողջունէին անոր ծնունդը: Բայց ո՛րչափ ինձ ցաւ պատճառեց եւ մեծ եղաւ տխրութիւնս, երբ Դաշնակցական թերթերու մէջ Բարեգործական Ընկերութեան «չարագործական» ընկերութիւն անունը կու տային, միշտ կը չարախօսէին եւ մինչեւ այսօր ալ զայն «սեւացնել» ու ժողովուրդին ատելի դարձնելու կը ճգնին: Վստահ եմ որ եթէ սոյն կարգի թշնամութիւններ չըլլային, Բարեգործականը շատ ատելի կ'ընդարձակուէր եւ ազգին շատ ատելի մեծ չափով օգտակար կրնար ըլլալ:

Տոքթ. Տաղաւարեան, որ Պոլսէն փախչելով 1905-ին, որչափ որ կը յիշեմ, Եգիպտոս եկած էր ընտանեօք, ինքզինքը Բարեգործականին նուիրեց, եւ մինչեւ 1908 Բարեգործականի ընդհանուր քարտուղարութեան պաշտօնը ձրի վարեց: Շատ անգամներ Միութեան գրասենեակը կ'աշխատէր եւ երբ հիւանդները իրեն հեռաձայն կ'ընէին որ երթայ, «գործս լմնցնելէ վերջ կու գամ» կը պատասխանէր: Ծանօթ լինելով իր դրամական նեղ կացութեան, կ'ըսէի իրեն. «Տոքթօ՛ր, քանի որ հիւանդ մը քեզ կ'ուզէ, ձգէ՛ գործը, գնա՛, որպէսզի այցեզին ոսկիդ առնես»: «Ո՛հ, կ'ըսէր, ազգին գործը իմ շահէս աւելի նուիրական է», եւ մինչեւ երեկոյեան ժամը ութը Բարեգործականին համար կ'աշխատէր:

1908-ին երբ Երիտասարդ Թուրքերը սահմանադրութիւն հռչակեցին, Տաղաւարեան՝ Թուրքերուն Հայոց հետ ունեցած գիրկընդխառնումները անկեղծ կարծելով եւ յուսալով որ ա՛լ ջարդերու, հալածանքներու դարը անցած է Հայոց համար, ազգասիրական զգացումէն մղեալ Պոլիս վերադարձաւ, որպէս զի իր ազգին ու երկրին օգտակար ըլլայ: Բայց, աւա՛ղ, Ատանայի ջարդը ցոյց տուաւ, որ թուրքը միշտ եղած է եւ պիտի ըլլայ արհինարբու գազան մը: Ինչպէս գիտենք Տաղաւարեան ալ, 1915-ին, մտաւորականներու խումբին հետ աքսորուելով նահատակուեցաւ:

Տոքթ. Տաղաւարեանի Եգիպտոսէն հեռանալէն ետքն է, 1908-ի վերջերը, որ Վահան Մալեզեան Բարեգործականի Ընդհ. Քարտուղարութեան պաշտօնը ստանձնեց եւ ինքզինքը հոգուով սրտով անոր նուիրեց ու խիստ մեծ օգտակարութիւն ունեցաւ:

Վահան Քիրքճեան, Եգիպտոսէն Ամերիկա անցնելով Նիւ Եորք հաստատուելէ վերջ, իրեն աջակից ունեցաւ երկու ազգայիններ՝ Տոքթ. Այվազեան եւ Գաբրիէլեան՝ որոնք առաջին օրէն Բարեգործականի ջերմ համակիրներ հանդիսացան եւ անոր Ամերիկայի մէջ ալ տարածուելուն մեծապէս նպաստեցին:

Ողբացեալ Պօղոս Փաշա Նուպարի տուած խոստումիս համեմատ՝ 1906 թուականէն ինքզինքս նուիրեցի Բարեգործականի ծաւալման: Իմ անձնական ծախքովս Պոլիս, Իզմիր, Ֆիլիպէ, Սօֆիա, Վիեննա, Բարիզ⁵,

⁵ Բարիզի գործունէութիւնս բաւական արդիւնաւոր ըլլալուն, երբ տակաւին Կեդր. Վարչութիւնը Գահիրէ կը գտնուէր, ողբացեալ Պօղոս Փաշա, Միութեան կանոնագրին տրամադրութեան համաձայն, ժողովականներուն կ'առաջարկէ «բարեբար» անդամ անուանել զիս, տիտղոս, որ ինչպէս ծանօթ է, հազար ոսկի

Մանչէսթըր, Լոնտրա, Միլան, Ժընէվ, Մարսիլիա եւ այլ քաղաքներ երթալով Բարեգործականի մասին բանախօսութիւններ ու ժողովներ սարքեցի եւ սոյն քաղաքներուն ազգայիններուն դիմելով՝ տեղական մասնաժողովներ կազմեցի, ու տուն տուն, խանութ խանութ պտըտելով բաւական թուով անդամներ արձանագրեցի: Կտակներու մասին ալ բաւական աշխատեցայ եւ յաջողեցայ ազնիւ ազգայիններու Բարեգործականի ի նպաստ կտակներ եւ նուիրատուութիւններ ընել տալ, որոնք բաւական մեծ գումարի մը կը հասնին:

Ես ալ, նոտարի միջոցով 1000 անգլ. ոսկիի կտակ մը ըրած եմ Բարեգործականին: Մահուրնէս վերջ, սոյն դրամը *թորութ* ըլլալով, եկամուտը ամէն տարի պիտի յատկացուի Խորհրդային Հայաստանի մէջ երկրագործութեան քաջալերման:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Այս տոմարին մէջ օրը օրին եւ թուականի կարգով պիտի արձանագրուին Հ.Բ.Ը.Միութեան կտակներուն, ինչպէս եւ մասնաւոր նպատակի համար եղած նուիրատութեանց վերաբերեալ բոլոր վաւերաթուղթերը եւ այդ մասին փոխանակուած կարեւոր գրութիւնները:

Միութեան անդրանիկ Կեդր. Վարչ. Ժողովը, ներկայ յայտարարութիւնը Կտակներու եւ Նուիրատութեանց տոմարին գլուխը դնելով, կ'երդնու կէտ առ կէտ եւ կատարեալ խղճմտութեամբ գործադրել կտակարարներուն եւ նուիրատուներուն կամքն ու բացայայտ տրամադրութիւնները. կը խոստանայ ոչ մէկ գինով թոյլ չի տալ, որ ռուէ կամայական շեղում մը ըլլայ եւ կանխորոշ նպատակէն տարբեր ուղղութեամբ գործածուին կտակուած եւ նուիրուած գումարները. յանձն կ'առնէ մասնաւոր հոգածութեամբ մատակարարել Միութեան կողմէ պաշտօնապէս ընդունուած եւ այն տոմարին մէջ արձանագրուած բոլոր Կտակները եւ Նուէրները. եւ այժմէն պարտք կը դնէ իր յաջորդներուն վրայ, միեւնոյն ուխտը կրկնելով իրենց պաշտօնին սկիզբը, միեւնոյն

միանուագ նուէր տուողին կը տրուէր: Արդիւնաւոր աշխատութեան ի վարձատրութիւն գայն ստացողներուն առաջինը եղայ:

յօժարամտութեամբ եւ նախանձախնդրութեամբ գործադրելու Միութեան Կտակներուն եւ Նուիրատութեանց յարակից պայմանները, առանց իրաւատէրին օրինական հաւանութեան անոնցմէ ստորակէտ մը իսկ չի փոխելով:

Հ.Բ.Ը.Միութեան
Կեդր. Վարչ. Ժողովի Դիւան

Գահիրէ
1 Յունուար 1910

Ատենապետ
Փոխ-Ատենապետ
Փոխ-Ատենապետ
Ատենադպիր
Գանձապետ

Պօղոս Փաշա Նուպար
Եագուպ Արթին Փաշա
Երուանդ Աղաթօն
Վ. Մալէզեան
Մ. Անդրանիկեան
Առաքել Նուպար
Տ. Փիլիպպոսեան
Կ. Շէրիտճեան
Տիգրան Քէլէկեան

ԿՆԻՔ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ԻՐԱԻՎԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ

(Personnalité Juridique)

Բարեգործականի կանոնագրէն Պօղոս Փաշա Նուպար գաղղիերէն օրինակ մը ներկայացուցեր էր, պաշտօնական նամակով մը, եգիպտական կառավարութեան եւ անոր հաւանութիւնը ստացած:

Գտնուեցան ազգայիններ, որոնք կը փափաքէին իրենց կալուածը Բարեգործականի անուան արձանագրել տալ՝ անոր նուէր ընելով, բայց Բարեգործականը իրաւական հանգամանք չունենալուն, այդ կարգի գործողութիւն անկարելի էր: Շատեր Պօղոս Փաշային անուան կ'ընէին: Փաշան մտածելով որ կարելի է ապագային, իր մահէն վերջ, դժուարութիւններ ծագին, պէտք եղած աշխատութիւնը կատարելով՝ զուիցերական ընկերութեան մը վերածեց Բարեգործականը եւ, շնորհիւ զուից. օրէնքներու թոյլատուութեան, Բարեգործականը եղաւ զուիցերական հայ ընկերութիւն մը, որով ստացաւ իր իրաւական հանգամանքը:

ԹՐԸՍԹ

Բարեգործականի զանազան երկիրներու մէջ գտնուող մասնաճիւղերու կողմէ, անպաշտօն կերպով դիտել կը տրուէր. «Ձեր ծրագրին մէջ Միութեան դրամագլուխին անձեռնմխելիութեան վրայ կը խօսիք: Ասիկա բաւարար չէ: Ժողովուրդը Բարեգործականի Կեդր. Վարչ.եան բոլոր անդամներուն վրայ կատարեալ վստահութիւն ունի, բայց դուք ալ մահկանացուներ էք. կրնայ ըլլալ որ ձեր մահէն վերջ, 20-30 տարիէն, Բարեգործականի ղեկը այնպիսի անձերու ձեռքը գտնուի, որոնք չյարգեն անձեռնմխելիութիւնը եւ դրամագլուխին դպին: Ասոր համար պէտք է միջոց մը մտածէք»:

Պօղոս Փաշա Նուպար շատ իրաւացի կը գտնէր այս դիտողութիւնը եւ, որպէս զի ժողովուրդին յայտնած փափաքին գոհացում տրուի, *թրըսթի* դրութիւնը մտցուց եւ ասոր համար շատ մեծ աշխատանք թափեց:

Շատեր *թրըսթին* ինչ ըլլալը չէին գիտեր, որովհետեւ Անգլիոյ եւ Ամերիկայի մէջ միայն կը գործածուի ան: Ընկերութեան մը կամ անհատի մը իր ունեցածը *թրըսթ* ընելը ճիշդ թուրքերուն կան արաբներուն *վաքըֆ*

ընելուն կը նմանի: Անգամ մը որ տրուած դրամագլուխը *թրըսթ* ըլլայ, ա՛լ կարելի չէ զայն ետ առնել կամ մսխել. միայն եկամուտն է, որ կ'առնուի եւ կը դրկուի դրամագլուխին տիրոջ գրաւոր կերպով յայտնած կամքին համաձայն:

Անգլիոյ մէջ շատեր իրենց հարստութիւնը *թրըսթ* կ'ընեն կառավարութեան կողմէ արտօնեալ դրամատուներու՝ ի նպաստ իրենց զաւակներուն, զաւակներէն վերջ թոռներուն եւ այսպէս շարունակաբար: Ասիկա շատ խելացի բան մըն է, որովհետեւ կրնայ ըլլալ որ զաւակները իրենց հօր ձգած հարստութիւնը մսխեն ու հետագայ ժառանգորդները բոլորովին աղքատ մնան: Մինչդեռ *թրըսթի* դրութեամբ հարստութեան տէր անձ մը վստահ կ'ըլլայ, թէ ձգած դրամագլուխը պիտի չկորսուի եւ իր մահէն վերջ եկամուտը զաւակէ զաւակ պիտի ստացուի:

Ժամանակին, մեր պատուական ազգայինները, այրի կամ որբեայրի, իրենց կալուածը Պատրիարքարանին կամ այնինչ եկեղեցիին *վազըֆ* կ'ընէին: Հիմա ո՛չ առաջուան Պատրիարքարանը կայ եւ ոչ Տաճկաստանի նախկին օրէնքները կան: Այսօրուան կառավարութիւնը ամէն բան իւրացնել կ'ուզէ:

Օտար երկիր գտնուող այն պատուական ազգայինները, որոնք ամուրի կամ անզաւակ են եւ կը փափաքին որ ազգին օգտակար հանդիսանան, կրնան Բարեգործականի միջոցաւ իրենց հարստութիւնը *թրըսթ* (այսինքն *վազըֆ*) ընել, ինչպէս որ արդէն շատեր ըրած են:

Մահը տարիքի չի նայիր. շատ մը ժառանգորդ չունեցող հայեր հարստութիւննին դրամատուներու մէջ դրած էին: Իրենց մահէն վերջ, այնքան տարուան աշխատութեամբ ձեռք բերուած պտուղը, փոխանակ ազգին օգտակար ըլլալու, օտարներու *խըսմէթ* եղած է:

Պօղոս Փաշա Նուպարի հետ կտակներու եւ նուիրատութեանց մասին փոքրիկ տետրակ մը շինած ենք՝ որուն մէջ ամէն դիւրութիւն ցոյց տրուած է եւ որ ձրի կը տրուի փափաքողներուն⁶:

⁶ Սոյն տետրակին պարունակութիւնը ամբողջութեամբ կը դնեմ գրքոյկիս վերջը:

ՑԿԵԱՆՍ ԹՈՇԱԿ

(Rente Viagère)

Բարեգործ.ը, միշտ նկատի ունենալով հայ ժողովուրդին օգուտը, ցկանս թոշակի դրութիւնն ալ ընդունած է: Ահա թէ ինչ է այդ դրութիւնը: Տարիքը առած մէկը, այր կամ կին, 4000 ոսկիի հարստութիւն մը ունի օրինակի համար, զոր դրամատունը դրած է եւ 5 առ 100 տոկոսի հաշուով տարին 200 ոսկիի եկամուտ կը ստանայ, այսինքն ամիսը 16-17 ոսկի: Բայց այս գումարով նեղին կ'ապրի: Կը մտածէ որ եթէ ամիսը 25 ոսկի ստանայ, մինչեւ մահը շատ հանգիստ կրնայ ապրիլ: Արդ եթէ իր դրամագլուխը Բարեգործականին յանձնէ, այս վերջինը ցկեանս թոշակի դրութեան կանոններուն համաձայն, կրնայ պէտք ունեցած ամսական գումարը յատկացնել իրեն:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Անցեալին մէջ կարգ մը կրօնաւորներ եւ աշխարհականներ, թէպէտ ոչ շատ հարուստ, սակայն փափաքող իրենց քիչ շատ կարելոր մասնակցութիւնը բերելու Բարեգործ.ին, զանազան ընկերութեանց մօտ կեանքերնին ապահովագրած են, 200, 500 կամ 1000 ոսկիի ի նպաստ անոր, ամսական համեստ գումար մը վճարելով: Այդ ապահովագրուած անձերուն մահէն վերջ ընկերութիւնները կատարած են իրենց յանձնառութիւնը: Ասիկա ալ տեսակ մը դիւրութիւն է այն համեստ ազգայիններուն համար, որոնք կը փափաքին իրենց փոքր քարի կտորը ի սպաս դնել Բարեգործականի շէնքին:

Նախորդ էջերուն մէջ քանիցս առիթը ունեցայ յայտարարելու թէ հայը, ամէն դասակարգի, միշտ ու ամէն տեղ սիրով տուաւ քիչ կամ շատ:

Ահա՛ քանի մը օրինակներ:

Բարեգործականը հաստատուելէն հազիւ վեց եօթը ամիս անցած էր, Սուէտիայի գիւղերէն մէկէն Բենիամին Հէքիմեան անուն անձէ մը հայատառ տաճկերէնով նամակ մը ստացանք, ուղղեալ «Եգիպտոսի մէջ հիմնուած Բարեգործականի ժողովին անդամներուն», որուն իմաստը

հետեւեալն էր մերձաւորապէս.

«Իմացայ թէ Հայաստանի եւ հայութեան համար, դուք որ ազատ երկիր կը գտնուիք, ընկերութիւն մը հիմներ էք: Չէք գիտեր ո՛րչափ ուրախացայ եւ ո՛րչափ աղօթեցի ձեզի համար: Ուզեցի ձեր Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնել: Հակառակ ասոյին անդին ըրած դիմումներու երկար ատեն չյաջողեցայ: Վերջապէս Պոլսոյ «Աւետաբեր» թերթին դիմեցի, որ ինձ պէտք եղած տեղեկութիւնները հաղորդէ: Ես հարուստ մէկը չեմ, արհեստս գիւղերը երթալով մէկ դրուշի ակոյ պաշել է, բայց ինձ համար նուիրական պարտք մը կը սեպեմ իբրեւ հայ իմ պարտականութիւնս կատարել: Կ'արձանագրուիմ ամիսը 5 դրշ. անդամավճարով եւ 10 դրշ. մտից տուրքով: Այս տեղէն դրամ ղրկելու դժուարութիւն ունենալուս, մէկ տարուան անդամավճարիս՝ 60 դրշ. եւ մտից տուրքիս՝ 10 դրշ.ին փոխարէն 70 դրշ.ի թրքական դրոշմաթուղթ կը ղրկեմ»: Եւ նամակը կը վերջացնէր աղօթքներով: Կարելի չէ երեւակայել որքան զգացուեցայ սոյն նամակը կարդալով, եւ անմիջապէս իրեն հետ թղթակցութեան մտայ: Քանի որ, ըսի ինքնիրենս, մեր ազգին մէջ այսպիսի ազնիւ հայրենասէրներ կը գտնուին, այս ազգը պէտք չէ որ կորսուի, եւ կարծէք Բարեգործականի հանդէպ ունեցած սէրս ա՛լ աւելի սաստկացաւ:

Բարսեղ Պալըքճեան անուն կեսարացի մը, որ մեծ ջարդերէն մազապործ Եգիպտոս ապաստանած՝ Մանսուրայի մէջ ոտքի վրայ առուտուրով կը ճարէր իր ապրուստը, օր մը եկաւ յայտնելու թէ իր ամբողջ ունեցած հարստութիւնը, որ 4000 ոսկիէ կը բաղկանար, կ'ուզէր Բարեգործականին նուիրել, պայմանաւ որ այդ գումարին եկամուտը իրեն տրուի մինչեւ մահը. իսկ մահէն վերջ, կէսը կնոջը իբր ամսական, կէսն ալ Անատոլիոյ հայ գիւղերու աղքատիկ տղոց համար դասագիրք գնուելու յատկացուի: Կնոջ վերամուսնութեան պարագային անոր բաժինն ալ դասագրքերու գնման պիտի յատկացուէր:

Իր փափաքին համաձայն՝ այս կարգադրութեան պաշտօնական ձեւակերպութիւնները կատարուեցան կնոջը եւս հաւանութեամբ:

Հետաքրքրուելու վրայ, թէ ինչո՞ւ արդեօք կ'ուզէր մասնաւորապէս աղքատիկ տղոց համար դասագրքերու գնման յատկացնել իր նուիրատուութեան եկամուտը, յուզումով պատասխանեց.

«Տղայ եղած ատենս, Կեսարիոյ գիւղիս մէջ, բարեկեցիկ ընկերներու

ծեռքը պատկերազարդ գեղեցիկ դասագրքեր տեսնելով սրտէս արին կ'երթար. հօրս կարողութիւնը չէր ներեր որ ինծի ալ գնէր: Ա՛յնքան ազդած է վրաս մատաղ տարիքիս մէջ կրած այդ զրկանքս, որ կը փափաքիմ խնայել այդ վիշտը գոնէ՛ քանի մը աղքատ տղոց»:

Այս պատուական ազգայինը հետագային իր 4000 ոսկիի նուէրը 8000-ի բարձրացուց:

Անունը ժլատ ելած անձերու ալ մօտենալու է:

Բարեգործականի հաստատման սկիզբները՝ Գահիրէէն Զակազիկ գացի եւ երկու ծանօթ հայերու հետ, խանութ խանութ պտղտելով մեր ազգակիցները կ'անդամագրէի: Երբ հարցուցի թէ ուրիշ հայ մը չկա՞ր, որուն դիմէինք, ինձ ընկերացողները ըսին. «Ատանացի հայ բժիշկ մը կայ այստեղ, բայց ազգին համար մէ՛կ փարա չի տար: Քանի՛ քանի անգամներ զանազան խնդիրներու համար իրեն դիմած ենք, միշտ մերժած է: Պարապ տեղը իրեն մի՛ դիմեր, զի վստահ ենք որ քեզ ալ պիտի մերժէ»:

Ընկերներուս խօսքը մտիկ չընելով՝ «Հոգ չէ, երթա՛նք միասին» ըսի, եւ գացինք Տոքթ.ին տունը: Հազիւ 2-3 բառ արտասանած էի՝ «Ես ալ սիրով կ'անդամակցիմ» ըսաւ, «ամսական կէս ոսկի եւ մտից տուրքի համար ալ 10 ոսկի կու տամ»:

Ես ալ, ընկերներս ալ շուարեցանք: Տոքթօրը հասկցաւ. «Շատեր ինծի դիմած եւ դրամ ուզած են, բայց միշտ մերժած եմ, զի գիտեմ որ տալիք դրամս ընդհանրապէս ուզողներուն գրպանը կը մտնէ եւ ամբողջովին իր նպատակին չի յատկացուիր: Բայց քանի որ Պօղոս Փաշա Նուպար այսպիսի ազգասիրական գործի մը գլուխը անցած է, եւ վստահ եմ թէ դրամս ի զուր տեղը պիտի չվատնուի, սիրո՛վ արձանագրուեցայ»:

Շնորհակալութիւն յայտնելով շնորհաւորեցի զինքը ու մեկնեցայ:

Ուրիշ օրինակ մը:

Երբ Բարեգործականը Եգիպտոս հաստատուելէն վերջ Բարիզ գացի, այնտեղի ազգայիններուն դիմելով տեղական մասնաժողովը կազմեցի եւ խանութ խանութ պտղտելով անդամ կ'արձանագրէի. հանգուցեալ Ազաթան Թահթապրունի անունը յիշած էին ինձ իբրեւ հարուստ ազգային մը, բայց ատելցուցած էին, թէ որեւիցէ ազգային զգացում չունէր

Եւ ազգային գործերու համար դրամ չէր տար: Օր մը Բարիզ, Քաֆէ տը լա Բէ տեսնելով զինքը «անգամ մը փորձեմ» ըսի եւ իրեն մօտենալով մասնակցութիւնը խնդրեցի: Ո՛րչափ զարմանալի եղաւ ինձ երբ ըսաւ. «Զիս 10,000 ֆր.ի արձանագրեցէք»: Կարծեցի թէ սխալ իմացայ. ա՛յնչափ իրեն համար գէշ ըսած էին որ հազիւ 500 ֆր. կը սպասէի իրմէ եւ երկու անգամ կրկնել տուի: Հանգուցեալը հասկնալով հարցումիս նպատակը յայտարարեց վերը յիշած ատանացի բժիշկին նման. «Շատեր ինձմէ դրամ ուզած են բայց մերժած եմ, զի գիտեմ թէ դրամս ուզողին գրպանը պիտի մնայ. սակայն քանի որ Պօղոս Փաշա Նուպարի պէս անձնաւորութիւն մը այսպիսի սրբազան գործի մը գլուխը անցած է, սիրով 10,000 ֆր. կ'արձանագրուիմ եւ վաղը իսկ չէքս կը դրկեմ»: Եւ իրօք ալ դրկեց:

Այս երկու պարագաները օրինակ ըլլան Բարեգործականի բազմաթիւ բարեկամներու եւ գործիչներու, որպէսզի չվարանին ամենակծծի ճանչցուած ազգայինի մը իսկ դիմելու:

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԸ ՄԱՐԴ ԳԼՈՒԽ ԿԷՍ ՖՐԱՆՔ ԾԱԽՍԵԼՈՎ ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ՀԱՅ ՄԱՀՈՒԸՆԷ ԱԶԱՏԵՑ

1909-ին Ատանայի ջարդէն մի քանի օր վերջ, երբ երեկոյ մը բարեկամիս՝ Մկրտիչ Անդրանիկեանի գրասենեակը նստած Բարեգործականի գործերով կը զբաղէինք, յանկարծ *շալվար* հագած մէկը ներս մտաւ եւ թրքերէն լեզուով հարցուց թէ Բարեգործականի գրասենեակն էր, ու մենք ժողովին անդամներն էինք: Տիար Անդրանիկեան այժոռ մը հրամցուց ու զիս եւ ինքզինքը ներկայացնելով հարցուց, թէ ի՞նչ կ'ուզէր: Այդ անձը ըսաւ. «Ես Տէօրթեօցի եմ, Տէօրթեօլէն կու գամ ուղղակի: Մեր գիւղը հազարաւոր զինուորներէ եւ *պաշըպօզուքներէ* պաշարուած է: Երբ Ատանայի ջարդը սկսաւ, շրջակայ հայ գիւղերու ժողովուրդը մեր գիւղը ապաստանեցաւ եւ ահա՛ տասնհինգ օր է կը պատերազմինք: Բնական էր որ ամառուրնէ դիզած պաշարնիս մեր գիւղը ապաստանող մեր քոյրերուն եւ եղբայրներուն տրամադրէինք, ու այսօր գիւղին մէջ 10,000 հայութիւն կայ: Հազիւ երեք օրուան ուտելիք մնացած է: Ինձի պաշտօն տուին Եգիպտոս գալ եւ Բարեգործականին

իմացնել մեր վիճակը»: Երբ իրեն հարցուցի թե դրա՞մ կ'ուզեր արդեօք մեզմէ, «ո՛չ, ըսաւ, իմ ճամբու ծախսս տրուած է ինձ: Մահը աչքս առնելով պաշարման գծէն յաջողեցայ անցնիլ եւ հոս գալ: Ես դրամ չեմ ուզեր. կը խնդրեմ որ մեր գիւղը ալիւր հասցնէք»:

-Ի՞նչպէս կարելի է հեռագրաւ ձեզի ալիւր դրկել, դիտել տուի, քանի որ պաշարուած էք:

-Միջոցը շատ դիւրին է, պատասխանեց: Իսկէնտէրուն քաղաքը Տէօրթեօլէն երկու ժամ հեռաւորութեան վրայ կը գտնուի. այն տեղը իտալական դեր-հիւպատոս Քարթօնի հայասէր մէկն է եւ ալիւրի վաճառականութիւն կ'ընէ: Հեռագրաւ դրամը իրեն դրկեցէք, ան մեզի ալիւր կը հասցնէ», եւ ոտքի ելլելով անցուց. «Ես իմ պարտքս կատարեցի, դուք ալ ձեր պարտքը կատարեցէք: Բայց լաւ գիտցէք, որ եթէ մինչեւ երեք օր Տէօրթեօլ ալիւր չհասնի, ժողովուրդը՝ կիներ, աղջիկներ, մանուկներ անօթութեան պատճառաւ անձնատուր պիտի ըլլան թորքին, ու, բնական է, ան ալ պիտի ջարդէ մեզ: Իսկ եթէ ուտելիք ունենանք, մեր գէնքերուն շնորհիւ կրնանք տակաւին բաւական ատեն ինքզինքնիս պաշտպանել»: Ու մեկնեցաւ:

Խնդրոյն խիստ կարեւոր ըլլալը տեսնելով, անմիջապէս Պօղոս Փաշա Նուպարի մօտ գացի եւ պատմեցի: Փաշան, հակառակ իր տկարութեան, անկողինէն ելաւ, միասին իտալական կառավարութեան ներկայացուցիչին գացինք, որուն խնդիրը պարզելով ըսաւ. «Ձեզի վաղը 200 անգլ. ոսկի պիտի տամ. խնդրե՛մ անմիջապէս հեռագրեցէք Իսկէնտէրունի դեր-հիւպատոսին, որ, իր հսկողութեան ներքեւ, այդ գումարին արժէքով ալիւր հասցնէ Տէօրթեօլի հայոց»: Ներկայացուցիչը անմիջապէս հեռագիրը խմբագրելով Փաշային յանձնեց: Քառասունութը ժամ վերջը արդէն Մ. Քարթօնի կը հեռագրէր, որ իր հսկողութեան ներքեւ, շնորհիւ իր պաշտօնական հանգամանքին, յաջողած էր պէտք եղած ալիւրը Տէօրթեօլ տանիլ եւ ժողովուրդին յանձնել:

200 անգլ. ոսկին 5,000 ոսկի ֆրանք կ'արժէր այն ատեն, որով Բարեգործականը կրցաւ այդ չնչին գումարով 10,000 հայ մահէ ազատել:

Այս օրինակը անգամ մը եւս ապացուցուց, թէ պատրաստ դրամը երբեմն հրաշքներ կը գործէ եւ ատո՛ր համար է, որ Բարեգործականը ջանացած է միշտ պատրաստ դրամ մը ունենալ իր սնտուկին մէջ որպէս զի, եթէ մէկէն ի մէկ աղէտ պատահի, կարելի ըլլայ անմիջապէս օգնութիւն հասցնել, ինչպէս ըրած է միշտ:

ԻՆՉՈՐՒ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԸ ԱՅՍՔԱՆ ԱՌԱՋ ԳՆԱՑ

Պէտք է խոստովանիլ որ Բարեգործականը հիմնուած օրէն, իր ատենապետը՝ Պօղոս Փաշա Նուպար բոլորովին այս սրբազան գործին նուիրեց ինքզինքը: Երբ տակաւին Եգիպտոս կը գտնուէր, ամէն տարի գաղղիերէն լեզուաւ հրատարակուած տեղեկագիրը ինք գրի կ'առնէր եւ նոյնիսկ տպագրական փորձերը ինք կը սրբագրէր:

Պօղոս Փաշա կատարեալ եւրոպական կրթութիւն մը առած ըլլալուն, թէպէտ սրտով հայ, բայց եւրոպական մտայնութեամբ կը գործէր: Արեւելեան (*ալաթուրքա*) գործելու կերպը մուտք չգտաւ երբեք Բարեգործականի Բարձր Ժողովին մէջ: Միշտ աշխատուեցաւ կանոնագրին տրամադրութեանց համեմատ գործել ու երբեք բացառութիւն չընել՝ ո՛չ *խաթէր* համար, ո՛չ պաշտպանութեան համար: Եթէ Բարեգործականը արեւելեան մտայնութեամբ գործած ըլլար, շատո՛նց քայքայուած էր, ինչպէս մեր մէջ ծնունդ առած ու այդ մտայնութեան երեսէն անհետացած շատ մը ընկերութիւններ:

Ամբողջ հայ ազգը պէտք է գիտնայ, որ Պօղոս Փաշա Նուպար ամէնէս ատելի աշխատած ու ճգնած է: Նոյնիսկ հիւանդ պառկած ժամանակ ժողովի անդամները անկողնին քով կը հրաւիրէր եւ տրուած որոշումները իր գրչէն կ'ելլէին: Ա՛յսպէս ըրաւ, նաեւ, ազգային մեծ բարերար Կարապետ Մելքոնեանի 500,000 անգլ. ոսկիէ ատելի նուիրատուութեան խնդրոյն առթիւ:

Ծանօթ են Փաշային վերջին տարիներուս ըրած բարեգործութիւնները. Բարիզի Մատենադարանին շէնքը ինք ծախու առած եւ Միութեան նուիրած է. նուիրած է նոյնպէս իր եւ իր հօր՝ Մեծն Նուպարի գրադարանին գիրքերը:

Երեւանի մէջ, ի յիշատակ իր կնոջ՝ Մարի Նուպարի, ակնաբուժարան մը շինած ու անոր համար պէտք եղած կարասիները եւ գործիքները դրկած է:

Բարիզի մէջ շինած ու կահաւորած է Հայ Ուսանողական Տունը – հայկ. ոճով գեղեցիկ շէնք մը – 3 միլիոն ֆրանքէ ատելի ծախսելով: Հաստատած է Պրիւքսէլի Նուպարեան Սաներու Հիմնարկութիւնը:

Օքսֆորտի համալսարանին մէջ, Հայաստանի պատմութեան եւ գրականութեան ճիւղերուն համար մրցանակ մը հաստատած է, առ այդ

2500 ոսկի թրըսթ ընելով:

Նուպարաշէնի համար 100,000 տօլար տուած էր արդէն. իր մահէն մի քանի շաբաթ առաջ 100,000 տօլար եւս տուաւ զանազան նպատակներու:

Բոլոր այս եւ այս կարգի նուիրատուութիւնները, զորս ըրած է վերջին տարիներուս, Բարեգործականին բովէն անցուցած է:

1928-ի վերջերը ինքզինք շատ տկար զգալով, Միութեան նախագահութենէ հրաժարեցաւ: Հակառակ Կեդր. Վարչութեան անդամոց դիմումներուն եւ աղաչանքներուն, անդրդուելի մնաց իր որոշման վրայ: Վարչութիւնն ալ, առ ի յարգանս, մեծ բարերար եւ ցմահ պատուոյ նախագահ անուանեց զինքը ու փոխ-ատենապետները վարեցին ժողովները:

Յուսալի է, որ ասկէ վերջը Բարեգործականի նախագահութեան աթոռը գրաւողներն ալ, ողբացեալ Պօղոս Փաշային պէս, ինքզինքնին հոգով սրտով գործին՝ այսինքն ազգին շահերուն նուիրեն, յարգե՛ն կանոնագիրը եւ ուղիղ մտայնութեամբ ի գործ դնեն իրենց պաշտօնը:

Բարեգործականի զարգացման ու բարգաւաճման պատճառներէն մէկն ալ՝ որքան կուսակցական գոյնէ զերծ ըլլալը, նո՛յնքան ալ դաւանական ոեւէ խտրութիւն չդնելն է եղած: Ասիկա առիթ մը եղաւ, որ տեղական եւ շրջանային մասնաճիւղերու մէջ ամէն յարանուանութիւններէ անդամ գտնուի ու ատով լուսաւորչական, հայկաթոլիկ եւ բողոքական համայնքներուն միջեւ ժամանակին տիրող պաղութիւնը վերնայ:

1930-ին արդէն տարիքիս յառաջացած ըլլալուն եւ Բարիզէն հեռու ապրելուս պատճառաւ, մտածելով որ Բարեգործականի փոխ-ատենապետութեան պաշտօնը պէտք եղածին պէս կատարելու ի վիճակի չէի, հրաժարականս տուի, որպէսզի բարիզաբնակ ուրիշ կարող հայ մը ինձմէ աւելի օգտակար ըլլայ:

Այսօր մեծապէս ուրախ եւ երջանիկ կը զգամ ինքզինքս հօրս՝ Գրիգոր Աղաթօն Էֆէնտիի սկսած ազգասիրական այս գործը վերակենդանացնել եւ սիրելի ազգիս, կարողութեանս չափով, ծառայել ջանացած ըլլալուս համար: Այս մասին խիղճս հանգիստ է: Բայց կրկին կը յայտարարեմ, թէ Բարեգործականին քսանհինգ տարուան մէջ կատարած

նախախնամական դերին եւ զարգացման պատիւն ու փառքը երջանկայիշատակ Պօղոս Փաշա Նուպարի կը պարտինք. ես համեստ աշխատաւոր մը եղած եմ միայն:

1930-ի Հոկտեմբեր ամսոյ մէջ Բարեգործականի Կեդր. Ժողովը յոյժ ողբացեալ Պօղոս Փաշայի տեղ նախագահ ընտրեց աշխարհաճանօթ պատուական ազգային Տիար Գալուստ Կիւլպէնկեան, որոյ վարչական եւ ելեմտական կարողութիւնը, ինչպէս նաեւ ազգասիրութիւնը ծանօթ են ամէն լուրջ հայու: Ուրախ եմ յայտարարելու, թէ Տիար Գ. Կիւլպէնկեան հոգով սրտով փարած է իր այս դժուարին պաշտօնին ⁷:

Բարեգործականի Կեդր. Ժողովի այսօրուան կազմը
Տեարք

Գալուստ Կիւլպէնկեան	Ատենապետ
Գաբրիէլ Նորատունկեան	Պատուակալ Փոխ-Ատենապետ
Երուանդ Աղաթօն	Պատուակալ Փոխ-Ատենապետ
Տիգրան Խան Քէլէկեան	Փոխ-Ատենապետ
Զարեհ Պէյ Նուպար	Փոխ-Ատենապետ
Պօղոս Էսմէրեան	Փոխ-Ատենապետ
Լեւոն Կիւմիւշկէրտան	Գանձապետ
Վահան Մալէգեան	Վարիչ-Պատուիրակ եւ ընդհ. Տնօրէն
Գրիգոր Սինապեան	Իրաւագէտ-Խորհրդական
Առաքել Պէյ Նուպար	Վարիչ-Խորհրդական
Արայ Արապեան	Վարիչ-Խորհրդական
Սերովբէ Սվաճեան	Վարիչ-Խորհրդական
Տիգրան Փիլիպպոսեան	Վարիչ-Խորհրդական
Տիգրան Կամսարական	Վարիչ-Խորհրդական

Տ. Գաբրիէլ Նորատունկեան եւ Տ. Երուանդ Աղաթօն, առողջութեան եւ բացակայութեան պատճառաւ փոխ-ատենապետութենէ հրաժարած ըլլալուն՝ Պատուակալ Փոխ-Ատենապետ անուանուած են:

⁷ Տե՛ս նաեւ յաւելումածը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ⁴

Երբ Ազգերնուս բարոյական ու նիւթական վիճակը լաւցնելու համար պէտք եղած քննութիւնն ընելու եւ միջոց մը մտածելու ձեռնարկու կ'ըլլանք, այս նախապատրաստական ուսման մէջ անկարելի է աչքերնուս առջեւ չբերել Օսմանեան Պետութեան ազատասէր քաղաքականութիւնը մեր Ազգին վրայ ունեցած ազդեցութիւնը եւ յարուցած նորանոր պիտոյքները:

Այսօր, նրբամիտ հայու մը համար արեւու պէս յայտնի ճշմարտութիւն մ'ըլլալու է թէ, Օսմանեան կառավարութիւնը մեր Ազգին հետ այնչափ կապված է, եւ մենք ալ անոր այնչափ յարած ենք որ, անոր հարստութիւնն ու պայծառութիւնն ըզմեզ որչափ որ ճոխացուցեր ու բարեկրթեր են, այնչափ ալ անոր աղքատութիւնն ու տկարութիւնը մեր նիւթական ու բարոյական վիճակը կրնան վատթարացնել:

Այսօր, ողջամիտ քաղաքագէտ անձանց համար ճշմարտութիւն մ'եղած է որ դրացի, մերձակայ եւ մինչեւ անգամ հեռակայ ազգաց շահերը մի եւ նոյն են, իրարու հակառակ չեն եւ ըլլալու չեն: Ազգի մը ճշմարիտ օգտին դէմ է աղքատ ու տգէտ դրացի մ'ունենալ կամ աղքատ ազգաց հետ յարաբերութիւն ունենալ: Իրաւ է, դեռ այսօր ալ կան այս կարծիքին դէմ քարոզող ազգեր ու իմաստակներ, բայց տեսնելով որ նախապաշարմանց թանձր ամպերը օր ըստ օրէ փարատելով քաղաքակրթութեան կենսատու արեւը կը ծագի, ներելի է մեզի յուսալ, որ իր անընդդիմակաց ճառագայթներով պիտի հալեցնէ ու սպառէ միջին դարուն հնարած մարդատեաց քաղաքականութեան սառնամանիքը:

Եթէ իրարմէ տարբեր ու բացակայ գտնուող ազգերուն հետեւած քաղաքականութեանցը մէջ ներդաշնակութեան հարկը ուղղախոհ քաղաքագէտք ընդունած են, հապա մի եւ նոյն օդ ծծող, մի եւ նոյն երկիր բնակող, մի եւ նոյն բարք ու մի եւ նոյն շահ ունեցող ազգերը, որչափ աւելի հարկադրեալ են իրենց մասնաւոր բարելաւութեանը համար իրարու փոխադարձ բարելաւութեանը աշխատելու:

Նա մանաւանդ երբ կը տեսնենք ազգ մը, որ իր տիրապետական

⁴ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. Ի Ղալաթիա, ի տպարանի Յովհաննու Միւհէնտիսեան, 1861:

իրաւունքն ու զօրութիւնը վեհանձնաբար չափաւորելով նուաճած ազգերուն բարելաւութիւնը կը մտածէ, կրօնքնին ազատ կը թողու, ազգային սովորութիւննին անխախտ կը պահէ, անխտիր կը պաշտպանէ ամէն ազգի իրաւունքը, վերջապէս քաղաքակրթութեան բարիքները մի եւ նոյն չափով կը տարածէ ամէնուն վրայ, հարկ չէ ըսել թէ որչափ կը թեթեւնայ նուաճեալ ազգաց բեռը: Եւ որչափ որ քաղցրանայ լուծերնին, այնչափ ալ կ'աւելնայ պարտքն երախտագիտութեան, որչափ որ խօսելու ու շարժելու ազատութիւննին շատնայ, այնչափ ալ հասարակաց օգտին կամ երկրին բարելաւութեանը աշխատելու պարտքը կը մեծնայ:

Արդ, Օսմանեան պետութիւնն ալ, որոյ հովանաւորութեանը տակ գտնուած է բարեբախտաբար մեր սիրելի ազգին ամենամեծ մասը, Երոպական քաղաքակրթութեան օրինացը համեմատ ընթացք մ'ընդունելով, քսան երեսուն տարիէ ի վեր սկսած է յառաջանալ եւ հետեւաբար իր նոր ընդունած քաղաքականութեան ազատական սկզբանցը հաւատարիմ գտնուելով իր իշխանութեանը ներքեւ գտնուած զանազան կրօնքներ դաւանող, զանազան սովորութիւններ ունեցող, զանազան լեզուներ խօսող ազգերուն անանկ արտօնութիւններ շնորհած է, որոնցմէ զուրկ են ուրիշ շատ նուաճեալ ազգեր, նոյն իսկ Երոպայի մէջ:

Տարակոյս չկայ որ այս ընթացքով եւ դարին պահանջած արագութեամբը քայլելով, Օսմանեան տէրութեան նիւթական եւ բարոյական վիճակը օր օրի պիտի բարելաւի ու զարգանայ:

Բայց բաւական չէ որ ինքը միայն այս յօժարամտութիւնն ունենայ, պէտք է որ հասարակութիւնն ալ ուզէ քայլել ու նպաստամատոյց ըլլալ երկրին յառադիմութեանը: Տէրութիւնը կ'ուզէ, կը քարոզէ ու ամէն զոհ կ'ընէ ահա, այս նպատակին հասնելու համար, բայց հասարակութենէն ակնկալած նպաստին եւ ոչ մէկ քառորդը կը տեսնայ: Ուրիշ ամէն տեղ ժողովուրդին կողմէն կը սկսի շարժումը եւ Տէրութիւնները այն շարժման ենթակայ կ'ըլլան միայն, հոս ընդհակառակը Տէրութիւնն է շարժում տուողը, շարժման գլուխն անցնող եւ զանի աճապարողն անգամ: Ի՞նչեր կրնար ընել արդեօք եւ ի՞նչեր պիտի կրնայ ընել, երբ հասարակութիւնն ալ Տէրութեան չափ կամք ունենայ ու մասնակից ըլլայ:

Այս հասարակութեան մէջ հայոց ազգը մեծկակ մաս մը կը կազմէ եւ հայ ազգը գիտէ թէ իր ճակատագիրը Օսմանեան պետութեան ճակատագրէն կախեալ է, իր միակ ապաւէնը, իր ամբողջութիւնը

պահպանողը, իր կարօտութեան աղբիւրը, իր լեզուին եւ կրօնքին պաշտպանը, նոյն ինքն Օսմանեան կառավարութիւնն է, բայց չգիտեր թերեւս աղէկ մը թէ ի՞նչ միջոցներով եւ ի՞նչ սահմանի մէջ կրնայ նպաստել իր կենդանութեանը եւ յառաջդիմութեանը պատճառ եղող տէրութեանը եւ այն երկրին, որուն մէջն է իր հայրենիքն ալ:

Յայտնի է որ ազգ մը հարուստ եւ լուսաւորեալ կ'ըստի եւ հետեւաբար հզօր, երբ զայն կազմող անհատները հարուստ եւ լուսաւորեալ են, եւ ընդհակառակն ազգ մը աղքատ ու տգէտ կը կոչուի եւ հետեւաբար տկար, երբ աղքատ ու տգէտ անհատներէ բաղկացեալ ըլլայ: Եւ որովհետեւ հայ ազգը Օսմանեան Պետութեան հասարակութեանը մէկ մեծ մասն է, ինչպէս ըսինք վերը, ուրեմն եթէ հայ ազգը իր նիւթական եւ բարոյական վիճակին բարելաւութեանը աշխատի, անուղղակի կերպով օժանդակած կ'ըլլայ Օսման Տէրութեան պայծառութեանն ալ եւ երախտագիտութեան նուիրական պարտք մը հատուցած կ'ըլլայ այն ազգին, որոյ շնորհիւր դարեր թաւալելով մինչեւ այսօր կրցեր է ապրիլ ու զերծ մնալ ամէն վտանգէ: Եւ եթէ այս պարտքը չկատարէ, պարտաւոր կը մնայ առաջի Աստուծոյ, առաջի Կայսերական կառավարութեան, առաջի իր բազմարդիին նախահարցը եւ առաջի ապագայ սերունդներուն:

Ուրեմն եթէ Օսմանեան Տէրութեան պայծառութիւնը մեր ազգին ալ օգտակար ու կարեւոր է եւ եթէ ազգին յառաջդիմութիւնը անուղղակի կերպով Տէրութեան յառաջդիմութեանն ալ կը նպաստէ, մէկ բան մը կը մնայ մեզի գիտնալ, - գիտնալ ազգերնու բարոյական եւ նիւթական պիտոյքը եւ զանոնք գոհացնելու համար հարկ եղած միջոցներն ուսանիլ:

Քանի որ Օսմանեան կառավարութիւնը սկսած է Եւրոպայի պետութեանց քաղաքականութեանը հետեւիլ եւ անոնց պիտոյքներն ու ընթացքը իրեն սեպհականել, կառավարական ձեւն ու դրութիւնը, մասնաւորաց վիճակը, երկրագործութիւնը, առեւտուրը եւ արուեստները մեծամեծ փոփոխութեան ենթակայ եղան եւ մինչեւ անգամ յեղափոխութեան մէջ ընկան: Ասի բնական օրէնք մըն է որոյ չհետեւիլ անկարելի է, բայց նախատես եւ խոհեմ ազգ մը գուշակելով իր հետեւած քաղաքականութեանը ապագային վրայ ունենալիք ազդեցութիւնը, պէտք է որ պատրաստուի, իր ընթացքը դարին պահանջած արագութեանը համեմատել գիտնայ, նոր ի նորոյ ծնած կամ երեւան ելած պիտոյքները յագեցնելուն միջոցները սորվի, մէկդի նետէ նախապաշարմանց ցնցոտիքը, եւ ըզնոր մարդն զգենու, ըսել կ'ուզենք թէ որովհետեւ ազգը

Տէրութեան պէս Երոպայի քաղաքականութիւնը իրեն առաջնորդ բռնելու պարտաւորեցաւ, ալ պէտք է որ այն քաղաքականութեան պահանջած բոլոր փոփոխութիւնները ըստ պարագային ի գործ դնէ:

Արդեօք ազգերնիս այս նոր ծագած քաղաքականութեան ոգին հասկցա՞ծ է, իր նիւթական եւ բարոյական վիճակը քաղաքակրթեալ ազգաց վիճակին նմանցնելու համար ի՞նչ ըրաւ մինչեւ հիմա եւ ի՞նչ պէտք է որ ընէ, ահա մեզի համար ամենակարեւոր խնդիրը:

Երբ ազգերնու բարոյական վիճակը քննենք ու բաղդատենք քսան երեսուն տարի յառաջ ունեցած վիճակին հետ, յիշուի մեծ տարբերութիւն մը կը գտնենք դէպի բարելաութիւն, բայց ազգի մը բնականաբար ըրած յառաջդիմութիւնը բաւական չէ զանի պահպանելու համար, հապա հետեւած քաղաքականութեանը պահանջած արագութեանը համեմատ յառաջանալու է, որ կենդանի մնայ: Երբ ազգովին դաստիարակութեան կարեւորութիւնը ամէն բերան կը խոստովանի եւ կը քարոզէ, երբ ազգը իր բոլոր մտադրութիւնը այս ամենակարեւոր խնդրոյն վրայ դարձուցած կ'երեւի, ցաւելով կ'ըսենք որ դեռ գոհացուցիչ միջոց մը ի գործ դրուած չտեսնուիր ազգային դաստիարակութիւնը ծաւալելու համար: Դեռ այսօր Հայաստանի մէջ այնչափ հազուագիւտ է գրել կարդալ գիտցող մարդ մը, որչափ հազուագիւտ է Ովկիանիայի վայրենիներուն մէջ:

Արդ պէտք է սա լաւ ի միտ առնել, որ եթէ ասանկ դանդաղ ու յամրաքայլ յառաջ երթանք, ապագային մեր գործն աւելի եւս կը ծանրանայ, այսինքն քանի մը տարիէն աւելի մեծ արագութեամբ ընթանալ կը հարկաւորի, որոյ համար աւելի ազդու ու հզօր միջոցներու կը կարօտինք:

Եթէ ասանկ վարանեալ ու տատանեալ ամէն մերձակայ ազգերէ ետ մնանք, այն կարողութիւնն որ այսօր ունինք, քանի մը տարիէն ետք կը մնա՞յ արդեօք: Եւ այն կարողութիւնն որով այսօր հնար է գործել, քանի մը տարիէն ետքը կը բաւե՞ արդեօք: Ո՞ր թողունք որ մէկ կողմէն ալ նիւթական վիճակնիս օր ըստ օրէ գէշնալու վրայ է:

Ազգի մը նիւթական վիճակին, բարելաութեանը որչափ որ կ'օգնէ իր բարոյական վիճակը, նոյնչափ ալ նիւթական վիճակը կը նպաստէ իր բարոյական զգացմանց զարգացմանը, մէկը առանց միւսին չկրնար լաւանալ, կամ երբ մէկին աշխատինք, միւսին ալ աշխատած կ'ըլլանք: Ասկէ կը հետեւի որ եթէ բարոյական կացութիւննիս դեռ յետախաղաց վիճակի մը մէջ է կամ ծանրաքայլ կը յառաջանայ, տարակոյս չկայ որ

նիթական վիճակնիս օր քան զօր պիտի վատթարանայ, մանաւանդ որ, ինչպէս վերը ըսինք, Օսմանեան պետութեան հետեւած նոր քաղաքականութիւնը մեծ յեղափոխութեան մէջ ձգած է երկրիս հողագործական, առետրական ու արուեստական կացութիւնը:

Եւրոպիոյ մեքենաշարժ ճարտարութիւնները մեր բնիկ ձեռագործ արուեստներուն յաջորդեցին, Եւրոպիոյ դրամական առատութիւնն ու ելեւմտական ճարտար կարգադրութիւնները իրենց սեպհականեցին մինչեւ ցարդ մեր բնիկ սեղանաւորաց ըրած շահերը: Եւրոպիոյ լուսաւորեալ երկրագործութիւնը հալածեց եւ խափանեց մեր հինաւորց երկրագործութիւնը, արդէն իսկ Եւրոպիոյ երկրագործական շատ բերքերը սկսած են գալ մաքառիլ մեր բնիկ բերքերուն հետ աշխրհի էն պարարտ հողին վրայ եւ էն գեղեցիկ կլիմային տակ:

Երբ կը տեսնենք ամէն օր ամէն վայրկեան այս անհրաժեշտ յեղափոխութեանց քաղցր եւ միանգամայն դառն արդիւնքը, երբ կը տեսնենք որ հազարաւոր արուեստաւորներ ձեռվընին ծոցերնին դրած աչվընին ապարդիւն գործիքներուն վրայ ձգած ու օրական հացերնին ճարելէ յուսահատած անշարժ ու տխուր նստած կը մտածեն, երբ կը տեսնենք որ հարիւրաւոր ընտանիքներ հարստութեան ու շքեղ պալատներու մէջ կը քնանան ու դառն չքաւորութեան ճանկերուն մէջ կ'արթնան, երբ կը տեսնենք որ խումբ խումբ որբ ու անտէր մանկտիք փողոցներն ու շուկաները կը թափառին, մոլութեանց օդը միայն ծծելով կ'ապրին, ազգերնուս անպատուութիւն ու բեռ եւ Տէրութեան վնասառիթ հպատակներ կ'ըլլան, երբ կը տեսնենք Ասիայի բազմաբեղուն դաշտաց շատերը եւ անոնց մէջ Հայաստանի պատուական երկիրները լքեալ ու խոպան, երբ կը տեսնենք իր արիասիրտ զակընները օտար աշխարհներ պանդխտած, սով ու քաղց յանձն առած, իրենց ու սիրելեաց ոգեպահիկը ճարելու համար հազար տեսակ տառապանաց ենթակայ եղած ու տարիներով իրենց սիրուն ընտանեաց գգուանքէն զրկուած ..., ոհ, ո՞ր ինքնամոլ հայն է այն, որուն սիրտը ի գութ չշարժի ու անտարբեր աչօք կարենայ նայիլ իր արենակցացը այս աղէկտուր վիճակին վրայ:

Եթէ այսօր ինքն անոնց վրայ չըլլայ, զանոնք չմխիթարէ, անոնց չօգնէ, վաղն իրեն վրայ ալ լացող մը, իրեն օգնող մը, զինքը մխիթարող մը չպիտի գտնէ: Վասնզի իրեն ալ ճակատագիրը մի եւ նոյն է, ինք ալ մի եւ նոյն տգիտութեամբ կուրացած, ու մի եւ նոյն դժբախտութեանց ենթակայ:

Այն մարդն, որոյ սրտին մէջ դեռ չէ կորսուած բոլորովին կարեկցութեան սերմը եւ որոյ սիրտը չէ բոլորովին փակուած եղբայրասիրական զգացմանց, չկրնար անտարբեր հանդիսադիր ըլլալ այսքան թշուառութեանց ու աղէտից եւ չկրնար դարման մը չփնտռել:

Ո՞րն է արդեօք այս դարմանը:

Շատ դիւրութեամբ լուծուելու խնդիր մըն է ասի: Ի բնէ արհեստաւոր ու երկրագործ ազգ մը իր ձեռքի արուեստն ու երկրագործութիւնը անպիտանալուն համար թշուառութեան մատնուած ուրիշ կերպով չկրնար կանգնիլ, բայց միայն նոր քաղաքականութեան պահանջած արուեստներն ու երկրագործութիւնը ձեռք բերելով: Այն ատեն ահա կրնանք հաւասար զօրութեամբ մրցիլ մեր հողին վրայ օտարոտի ճարտարութեանց արուեստներու եւ երկրագործութեան հետեւ մեր բնիկ երկրացի ըլլալու շնորհիւն ի բաց վանել զանոնք, որով եւ մեր ճակտին քրտինքովը մեր հացը գտնել ու ուտել այն հողին վրայ, ուր այս Աստուածային վճիռը տրուեցաւ առաջին մարդուն:

Ասոր համար ալ ազգին ընելիքը յայտնի կեցած է. – Ազգին աղքատ ու խեղճ մասին զակըններն առնել ու պզտիկուց անոնց զանազան արհեստներ ու մանաւանդ երկրագործութիւն սորվեցնել գիտութեան ընծայած նոր լոյսերուն համեմատ, միանգամայն փնտռել գտնել ու հայթաթայթել այն միջոցները, որոնցմով կարենան զբաղիլ այն արհեստներուն ու երկրագործութեան եւ ապրիլ անոնցմով:

Եթէ կարենանք այս արդիւնքը ձեռք բերել, ազգին նիւթական վիճակն ու բարոյական վիճակը միանգամայն բարելաւած կ'ըլլանք եւ ազգին կեանքը մօտահաս վտանգէ մը ազատած կ'ըլլանք:

Ժամանակնիս սուղ եւ աշխատութիւննիս ծանր է: Ասանկ ժամանակներու մէջ եւ ասանկ գործ մը ի գլուխ հանելու համար ընդհանուր ազգին բոլոր նիւթական, մտաւորական ու բարոյական զօրութիւնները պէտք է միանան ու ի մի ձուլուին, նոյն իսկ հեռաւոր ապագայէ մը մութ ու նսեմ ներկային վրայ ցոլացեալ յուսոյ նշոյլներուն առջեւ. յոյս մտաւորական յառաջդիմութեան եւ բարեկեցիկ վիճակի մը, իբր խորշակահար ըյնին անձնական կիրքերը, կուսակցութեան ոգին, կրօնական խտրութիւնները, եւ իրաքանչիւր իր նիւթական ու բարոյական լուման բերէ ձգէ ազգային լուսաւորութեան գանձանակին մէջ: Եկեղեցականք իրենց կողմէն աշխատելով, ազգին ճշմարիտ հովիւներ յարուցանելով, ըստ առաքելոյն որբոց եւ այրեաց խնամածու

ըլլալով, սէր քարոզելով ժողովրդին եւ իրենց օրինակովը զանոնք առաքինութեան կրթելով: Աշխարհականները մոռնալով իրենց մէջ երեւան ելած այն հինօրեայ անիմաստ խտրութիւններն, որ կամ աստիճանի կամ քաղքի եւ կամ կրօնքի զանազանութենէ յառաջ եկած են, հարուստ եւ ուսումնական իրաքանչիւր իր քանքարը նուիրելով ազգին յառաջդիմութեանը համար, եւ Լուսաւորչական եւ Հռոմէական եկեղեցիէն դուրս ձեռք ձեռքի տալով ընդհանուրին օգտին համար:

Այս նպատակով եւ այս սկզբունքներով հաստատուեցաւ ահա համազգային ընկերութիւն մը ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ անունով:

Այս ընկերութեան հաստատութիւնը բարի գործէ մ'ալ աւելի, Ազգային հարկաւորութիւն մըն էր, անհրաժարելի պէտք մըն էր:

Շատերը ազգին մէջ սկսեր էին զգալ որ երկրին այս ընդհանուր յեղափոխութեանը մէջ, յեղափոխութիւն որ տակն ու վրայ կ'ընէ հին կարգերն ու կանոնները եւ անոնց վրայ հիմնեալ ընկերական շէնքը, հայ ազգին առջեւ նոր եւ ահագին խնդիր մ'երեւան կ'ելնէ, կենաց եւ մահու խնդիր մը, կամ ան է որ ազգն սթափելով եւ հին նախապաշարմանց լուծը թօթափելով ընկերական նոր կեանքի մը մէջ պիտի աճի ու զօրանայ, կամ բոլորովին մեռնի փճանայ: Արդէն ամէն կողմէն հեծութեան ու շփոթի ձայներ կը սկսէին լսուիլ ու ամէն կողմէն ընդհանուր եւ հիմնական ճար մ'ընելու ետեւէ կ'ըլլային: Այս ճարն ալ շատերը կռահած էին ու վերջապէս օրին մէկն ալ մէկտեղ եկան ու վերոյիշեալ ընկերութիւնը հիմնեցին:

1860 Սեպտեմբերի առաջին օրն էր որ առաջին անգամ ժողուրդուելով զանազան կրօնքէ ութ ազգայինք ի դիմաց եռսունի չափ ընկերաց, զանոր հիմնադրութիւնն ըրին որոշելով նպատակը եւ տարեկան բաժանորդագրութեան գինը: Ութ օր ետքը երկրորդ ժողով մ'ըլլալով, նախընթաց ժողովին ըրած որոշմանը գործադրութեանը սկսիլ յանձնառու եղան ժողովականք եւ բաժանորդագրութիւնն սկսան ազգին մէջ ասոնց ձեռքով: Երրորդ ժողովի մը մէջ, որ գումարուեցաւ Սեպտեմբերի 18-րդ օրն ի Բէրա եւ ուր ներկայ գտնուեցան 26 անձինք, ընկերութեան հիմնական կանոնադրութիւնը Յանձնաժողովի մը յանձնուեցաւ խմբագրել. այս Յանձնաժողովը կը բաղկանար հետեւեալ անձանցմէ.

Պն.Պն. Ալիշանեան Սերովբէ
Աղաթօն Գրիգոր Էֆէնտի
Աղաթօն Մկրտիչ
Թագուրեան Սերովբէ
Շիշմանեան Յովսէփ Տոքթոր
Օտեան Գրիգոր Էֆէնտի

Կանոնադրութեան յանձնաժողովը ամիս մը միջոցի մէջ պատրաստելով իրեն յանձնուած գործը, Հոկտեմբերի 30-րդ օրը Ընդհանուր Ժողով գումարեցաւ Ընկերութեան անդամոց ի Բէրա եւ անդ ի ներկայութեան 44 ընկերաց կանոնադրութիւնը ընթերցաւ: Կանոնադրութեան ընթերցումը չեղած Յանձնաժողովին անդամներէն մէկը հետեւեալ ճառը կարդաց, որ Ընկերութեան նպատակը եւ Կանոնադրութեան ինչ ինչ յօդուածները կը բացատրէ հանդերձ իրաքանչիւրին պատճառաբանութեամբը:

Պարոններ,

Երբ հինգ վեց շաբաթ առաջ այս Ընկերութեան քսանուհինգի չափ հիմնադիրքը մեզի յանձնեցին հիմնական կանոնները շինել, ամէնուն ալ խելքը կը հասներ որ նոր բան չկար մեզի հնարելու, այլ տեղեկանալու եւ ժողովելու:

Արեւմուտք, ուսկից արեւուն լուսէն զապ ամէն լոյս կը ծագի յԱրեւելս, երկրագործութեան եւ արուեստից համար զանազան բարեգործ ընկերութիւններ հաստատուած է, որոնց հետեւիլ հաստատարութեամբ մեր միմիայն ջանքը պիտի ըլլայ: - Հաստատարութիւնը որ շապ ազգայինք կ'ուզեն զլանալ իրենց ազգին, մեզի այնպէս կ'երեւայ թէ իր ձիրքերէն էն մեծն է, վասն զի հայը 4000 տարի է հաստատարութեամբ ապրեր, իր լեզուն պահեր եւ Ասիայի մէջ մի միայն Քրիստոնեայ ազգ մնացեր է մինչեւ զայսօր եւ պիտի մնայ:

Ուրեմն այս առաքինութենէն զուրկ չըլլալով կը մնայ մեզի հետեւիլ Երոպոյ այն ազգաց շաւիղներուն, որք որք եւ անտէր տղոց երկրագործութեան ճրի դպրոցներ բանալով, աղքատութիւնը բարեկեցիկ կեանքի դարձնելու, մուրացկանութիւնը բառնալու, տգիտութիւնը հալածելու, եւ ապականեալ մարդը որ քաղաքներու թանձր մթնոլորտին մէջ մարմնով ու հոգով կը թաւալէր, վերանորոգելու համար աշխատեցան գեղերու մաքուր օդով:

Այս դպրոցներուն մէջ տղայք, հողագործին զաւակներուն պէս կը կրթութիւն մաքուր բայց խիստ, երկրագործ աշխատութեանց մէջ, մէկ կողմէն մարմինները կորովի ու տոկուն կ'ըլլան, միւսէն հոգին ու միտքը կը մշակուին:

Այս դպրոցներուն նպատակը թուամորթ քաղաքացիներ հրահանգել չէ, այլ զօրաւոր գործաւորներ հասցնել, որ տոկան աշխատութեանց, չփախչին գործքէ, եւ որոնց միմիայն երջանկութիւնը իրենց ճակտին քրտինքովը հասած հունձքերուն վայելքն ըլլան:

Հոգ չէ թէ միայն հարկաւոր ուսմանց տեղեկութիւն կը տրուի իրենց, այլ նաեւ արհեստ մը որ առօրեայ հացն ալ իրենց կ'ապահովէ: Անոր համար մասնաւորապէս կը ջանան տղոց նորեկ զօրութիւնը անով զբաղեցնելու եւ միայն արտաքոյ կարգի յարմարութիւն ունեցողները արհեստից կը պարապեցնեն եւ արհեստներէն զանոնք կը վերադասեն որ երկրագործութեան ատելի վերաբերութիւն ունին:

Հողի մշակութիւնը մեծամեծ օգուտներ ունի: Երբ տղոց մարմինը ուժով եւ առողջ կ'ընէ, մտքերնին կրօնական սկզբունքներով ալ կը զարդարէ: - Տղայք կարգ կանոն չեն հասկնար, երկրագործութեան մէջ ամէն բան կարգ կանոն կը գտնեն: Տղայք թեթեւաբարոյ են, երկրագործութիւնը զիրենք ուշադիր կ'ընէ. իրենք անհամբեր ամէն բանի պտուղը շուրջ վայելել կ'ուզեն, բնութիւնը ծանր համբերել կը սովորեցնէ իրենց. իրենք շուրջ կը յուսան, բնութիւնը գիտէ զիրենք փորձառութեան խոնարհեցնել:

Կրնա՞ր երկրագործ տղան գերագոյն պատճառին վրայ երկբայիլ: Ստեղծողը շարունակ իրեն մտքին հետ կը խօսի, իրեն երեւակայութիւնը կը դրդէ, ամէն վայրկեան երկնաւոր ձեռքն է, որ արգասաբեր անձրեւը կը պարգեւէ կամ բազմակտոր կարկուտը կ'արձակէ:

Նախախնամութեան վճիռ է, որ աշխատութիւնը, որ ամենակարեւորն է մարդու, ըլլայ բարոյականի դաս մը իրեն եւ հանգիստ ու կանոնաւոր կեանքի մը եւ երջանկութեան աղբիւր:

Ահա այս տեսակ դպրոցի նկարագիր մը մեր ամենուս մտքին մէջ յեղեղելով, Բարեգործական անունէն ատելի շարժումն թերեւս երկրագործական անունը նախադասելի կ'երեւար եւ ամենորոշ, բայց մենք Բարեգործական անունը տալով Ընկերութեան ուզեցինք.

Ա-Շահու դիտաւորութիւնը հեռացնել,

Բ-Արուեստները երկրագործութեան ընկերութենէն դուրս չնետել:

Գանք Ընկերության գործոց վարչությանը:

Յայտնի է որ զանազան ժողովներ եւ զանոնք կազմելու համար բազմութիւն անձանց աւելի արգելք կ'ըլլան շաւր անգամ գործելու, մանաւանդ թէ գործ մը հաստատելու եւ առաջ տանելու, անոր համար ալ եւրոպիոյ ընկերութեանց մեծ մասը կը տեսնենք որ գործոց վարչութիւնը մէկ կամ սակաւաթիւ անձանց ձեռքն է յանձնած, եւ պատմութիւնն ալ մեզի վկայ է որ ոչինչ խնդիրներ մեծամեծ եւ վնասակար տարածայնութեանց պատճառ ըլլալով, հոն ուր միութիւն պէտք էր գործին առաջ երթալուն, արգելք եւ մահ բերեր են: Այս բանիս օրինակներն աչքերնուս առջեւ ունենալով, վարչութեան համար մէկ ժողով մը միայն ընդունեցինք եւ այն ալ հինգ հոգիէ բաղկացած: Կրնայ մէկը մեզի առարկել, թէ ինչո՞ւ հինգ հոգոյ յանձնելու տեղ մէկ հոգոյ ջլանձնեցինք վարչութիւնը: - Թէ որ զեղծման երկիւղը չունենայինք, անշուշտ մէկ հոգոյ մը կը յանձնէինք ամէն բան, որպէս զի տարածայնութիւն, վեճ, դանդաղութիւն եւ հետեւաբար անգործութիւն, որ ժողովներու յանցանքն եղած է, մեր բաժինը չըլլար. բայց դարձեալ կը կրկնենք, մարդուս բնական զեղծման ենթակայ ըլլալը մեզ վախցուց եւ հինգ հոգոյ յանձնեցինք մէկ մարդու մը ընելիքը: Եւ որպէս զի ասոնց ընտրութիւնն ալ հասողութեամբ եւ ընտրելիք անձանց քաջ ծանօթութեամբ ըլլայ, ընդհանուր քուէարկութիւնը հիմն ամէն ընտրութեան ընդունելէ ետք, Տնօրէն ժողովին ընտրութիւնը անուղղակի ձեւով ընել մեզի օգտակար եւ անհրաժեշտ թուեցաւ, այսինքն Ընկերութեան ընդհանուր ժողովը գաղտնի քուէարկութեամբ 20 հոգի զարէ իր մէջէն, եւ այն քսան հոգին ընտրեն Տնօրէն ժողովին անդամները: Այս պատճառներուն համար էր դարձեալ, որ Տնօրէն ժողովին կանոնները իրեն յանձնեցինք շինել ու գործադրել: Թէ որ այս գործի ժողովը խել մը կանոններով կապէինք կաշկանդէինք, անդամալոյծ ժողով մը պիտի ունենայինք: Վերջապէս ձեր ընտրութենէն ելլելու մարդիքը խոհեմ, ազգասէր եւ բարեկամ հաւատալով եւ ամէն կանոն իրենց խոչընդոտն համարելով, առանց զիրենք ճանչնալու (վասն զի ներկայ քուէարկութիւնը մեզի անոնք պիտի ճանչցնէ), կատարեալ վստահութիւն ունեցանք իրենց վրայ, որովհետեւ մեզի անկարելի է հաւատալ, թէ երբ առանց շահու, մեծ ու պզտիկ, գիտուն եւ անգէտ, հարուստ ու չքաւոր, եկեղեցական եւ աշխարհական մէկտեղ կու գան, առանց կրօնի խտրութեան, առանց կարծեաց զանազանութեան մէկ

աղէկ գործ մը կատարելու համար, այսպիսի նեղ ժամանակիս իրենց քսակը բանալով, քեզի անկարելի կ'երեւայ, կ'ըսենք, որ գէշ ընտրութիւն մը կարենան ընել թէեւ ուզեն նէ ալ, նոյնպէս մեզի անկարելի կ'երեւայ որ հինգ հոգի աղէկ ճանչուած համարմունքի արժանի մարդիկ հեռանան այս սուրբ նպատակէն, վարենն այս նուիրական արծաթը չարութեամբ, անխելքութեամբ կամ շահասիրութեամբ:

Այս ճառէն ետքը Կանոնադրութեան ընթերցումն ու յօդուած առ յօդուած քննութիւնն ըլլալով մէկ քանի փոփոխութեամբք որ առ ժամին կատարուեցան, ընդունուեցաւ եւ ստորագրուեցաւ Ընդհանուր Ժողովէն: Իսկ Կանոնադրութեան համեմատ Ընդհանուր Ժողովոյ դիւանին եւ Տնօրէն ժողովոյ ընտրութեան համար պահանջուած 20 անձանց ընտրութիւնն ընելու համար Նոյեմբերի 13-րդ օրը երկրորդ Ընդհանուր ժողով մը ընել որոշուեցաւ:

Ահաասիկ Ընկերութեան Հիմնական Կանոնադրութիւնը.

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

307. Ա. Բարեգործական Ընկերութեան նպատակն է Ազգին որբ, անտէր եւ չքաւոր տղայքը Երկրագործութեան եւ արուեստից զբաղեցնելու միջոցներն ի գործ դնել:

307. Բ. Ընկերութեան անդամ է ամէն հայազգի, որ տարեկան բաժին մը կը վճարէ:

307. Գ. Մէկ բաժինը տարեկան մէկ Օսմանեան լիռա է. ուզողը կրնայ աւելի բաժին գրուիլ:

307. Դ. Ընկերութեան անդամ մը որ տարեկան բաժինը վճարելէն կը դադրի, Ընկերութեան մասնակցութենէն կը զրկուի:

307. Ե. Ընկերութեան անդամոց մէկտեղ գալովը կը ձեւանայ Ընդհանուր Ժողովը:

307. Զ. Ընդհանուր Ժողովը Տնօրէն Ժողովի մը կը յանձնէ Ընկերութեան գործոց վարչութիւնը:

307. Է. Տնօրէն Ժողովին պաշտօնն է ստակ հաւաքելու միջոցները ճոխացնել, հետզհետէ հաւաքած ստակը Ընկերութեան նպատակին ծառայեցնել, եւ վերջապէս զԸնկերութիւնը շուտով եւ ապահով կերպով իր նպատակին հասցնելու համար ամէն հնարք ի գործ դնել:

30Դ. Ը. Տնօրէն ժողովը կը բաղկանայ հինգ հոգիէ, որոնք Ընկերութեան անդամոց մէջէն պիտի ընտրուին:

30Դ. Թ. Ընդհանուր ժողովը կ'ընտրէ Տնօրէն ժողովին անդամները անուղղակի ընտրութեան ձեւով:

Այսինքն Ընդհանուր ժողովը գաղտնի քուէարկութեամբ իր մէջէն 20 հոգի կ'ընտրէ, որոնք դարձեալ գաղտնի քուէարկութեամբ Տնօրէն ժողովին անդամները կ'ընտրեն:

30Դ. Ճ. Տնօրէն ժողովը մինչեւ հինգ տարի անփոփոխելի է, հինգ տարիէն ետքը Ընդհանուր ժողով կը գումարուի, որ իր բոլոր անդամներուն բացարձակ բազմութեամբը կ'որոշէ Տնօրէն ժողովին փոփոխութիւնը:

Երբ Տնօրէն ժողովը փոխուելու ըլլայ, նախորդ Տնօրէն ժողովին անդամներէն մէկը գոնէ յաջորդ ժողովոյն մէջ պիտի մնայ, նախորդ Տնօրէն ժողովին ընտրութեամբը:

30Դ. ՃԱ. – Երբ Տնօրէն ժողովին անդամներէն մէկը պակսի կամ հրաժարի, Տնօրէն ժողովը երեք հոգի կ'առաջարկէ, որոնց մէջէն մէկը կ'ընտրէ Ընդհանուր ժողովը ըստ Թ. Յօդուածին:

30Դ. ՃԲ. – Տնօրէն ժողովը իր ներքին վարչութեան կանոնները ինք կ'որոշէ ու կը գործադրէ:

30Դ. ՃԳ. – Տնօրէն ժողովը տարին անգամ մը Ընկերութեան գործոց վիճակին վրայ տեղեկագիր պիտի տայ Ընդհանուր ժողովին:

30Դ. ՃԴ. – Տնօրէն ժողովը կը գումարէ զԸնդհանուր ժողովը:

30Դ. ՃԵ. – Ընդհանուր ժողովը կը գումարուի.

ա. Տնօրէն ժողովին տարեկան տեղեկագիրը մտիկ ընելու համար:

բ. Տնօրէն ժողովի անդամոց ընտրութեան համար:

գ. Հիմնական Կանոնադրութեան վերաքննութեանը համար:

30Դ. ՃԶ. – Ընդհանուր ժողովին գումարումը ամիս մը առաջ Տնօրէն ժողովը պէտք է ծանուցանէ օրագրի միջոցով, օրն ու տեղը նշանակելով:

30Դ. ՃԷ. – Ընդհանուր ժողովը մէկ Ատենապետ, մէկ Ատենապետի Փոխանորդ, մէկ Ատենադպիր եւ մէկ Ատենադպրի Փոխանորդ պիտի ունենայ, որոնք կը կազմեն Ընդհանուր ժողովին դիւանը:

Ընդհանուր ժողովին դիւանը 5 տարին անգամ մը Տնօրէն ժողովին հետ փոփոխելի է:

30Դ. ՃԸ. – Ընդհանուր ժողովը որոշում մը ընելու համար պէտք է որ

Ընկերության անդամոց կեսէն աւելի ներկայ ըլլայ:

ՅՕԴ. ԺԹ. – Ընդհանուր Ժողովին մէջ ամէն որոշում ներկայ գտնուող անդամներուն մեծագոյն մասին հաւանութեամբը կ'ըլլայ:

ՅՕԴ. Ի. – Երբ Ընդհանուր Ժողովին մեծագոյն մասը ներկայ չըլլայ, եթէ տարեկան տեղեկագիրը կարդալու համար գումարուած է, Տնօրէն Ժողովը ներկայ եղողներուն առջեւ կը կարդայ իր տեղեկագիրը, եթէ ընտրութեան կամ Կանոնադրութեան քննութեան վրայ ըլլայ խնդիրը, ներկայ եղողներն իրենց քուէն տալէն ետեւ ներկայ չեղողներուն ալ քուէն գրով կ'ուզուի ու էն քիչը շաբաթ մը ժամանակէն ետեւ, ըստ օրինի քուէհամարը կ'ըլլայ Ընդհանուր Ժողովի դիւանին միջնորդութեամբը ու Տնօրէն Ժողովին ներկայութեամբը:

ՅՕԴ. ԻԱ. եւ ՎԵՐՁԻՆ – Ներկայ Հիմնական Կանոնադրութիւնը Ընկերութեան Ընդհանուր Ժողովը ընդունելէն եւ ստորագրելէն ետեւ, անփոփոխելի է նաեւ Ընդհանուր Ժողովին կողմէն: Իսկ եթէ գործադրութեանը մէջ Տնօրէն Ժողովը ինչ ինչ յօդուածներու փոփոխութիւնը հարկատր դատէ, Ընդհանուր Ժողովին կը դիմէ եւ անոր հաւանութիւնը առնելէն ետքը պէտք եղած փոփոխութիւնները կ'ընէ:

Ընդունուած Ընդհանուր Ժողովով, 1860 Հոկտեմբեր 30:

Նոյեմբերի 13-րդ օրը գումարուած Ընդհանուր Ժողովին ներկայ էին միայն 75 ընկերք, այս թիւը բոլոր Ընկերութեան անդամոց մեծագոյն մասը չներկայացնելով, Կանոնադրութեան 20-րդ յօդուածին համեմատ քուէարկութիւնը նոյն օրով սկսելով 14 օրի չափ բաց ձգուեցաւ ու Նոյեմբերի 27-րդ օրը 43 ընկերաց ներկայութեանը եւ Կանոնադրութեան Յանձնաժողովին ու միմիայն այս պարագային համար ընտրեալ 4 քննիչներու միջնորդութեամբ քուէհամարը կատարուեցաւ, որոյ համեմատ Ընդհանուր Ժողովոյ դիւանին անդամ ընտրուած եղան.

Պն. Պն.	Աղաթօն Գրիգոր Էֆէնտի	Ատենապետ
	Օտեան Գրիգոր Էֆէնտի	Ատենապետի Փոխանորդ
	Պէշիկթաշլեան Մկրտիչ	Ատենադպիր
	Եուսուֆեան Տիգրան	Ատենադպիր Փոխանորդ

Եւ Տնօրէն Ժողովին ընտրող.

Պն. Պն. Ալիշան Սերովբէ
Աղաթօն Գրիգոր Էֆէնտի

Աղաթօն Մկրտիչ
Եուսուֆեան Տիգրան
Եսայեան Թովմաս
Թագուորեան Սերովբէ
Հէքիմեան Սրապիոն
Մինասեան Մինաս Էֆէնտի
Միւհէնտիսեան Մարտիրոս
Միւհէնտիսեան Մկրտիչ
Շիշմանեան Յովսէփ Տոքթոր
Շիշմանեան Պօղոս
Պէշիկթաշլեան Մկրտիչ
Պէտան Պէյ
Սաքըզլեան Յովհաննէս Էֆէնտի
Սվաճեան Յարութիւն
Վարդան Բաշա
Տավութեան Յակոբ Տոքթոր
Փէշտիմալճեան Սահակ
Օտեան Գրիգոր Էֆէնտի

Սոյն ընտրողները Դեկտեմբերի 11-րդ օրը գումարուելով ի Բէրա, գաղտնի քուէարկութեամբ եւ մեծագոյն մասին հաւանութեամբն ընտրեցին Տնօրէն Ժողովոյ անդամ հետեւեալ անձինքը.

Պն. Պն Աղաթօն Գրիգոր Էֆէնտի
Թագուորեան Սերովբէ
Միւհէնտիսեան Մկրտիչ
Շիշմանեան Յովսէփ Տոքթոր
Օտեան Գրիգոր Էֆէնտի

Որով ընդհանուր Ժողովոյ Ատենապետի փոխանորդը միանգամայն Տնօրէն Ժողովոյ անդամ ընտրուած գտնուելով իրենց առաջին պաշտօնէն հրաժարական տալու պարտաւորուեցան եւ Յունուարի 18-րդ օրը Ընդհանուր Ժողով գումարուելով իրենց տեղը ընտրուեցան Ընդհանուր Ժողովոյ դիւանին անդամ.

Պն. Պն. Աղաթօն Մկրտիչ Ատենապետ
Պէտան Պէյ Ատենապետի փոխանորդ

Այս հակիրճ պատմութենէն կը տեսնուի, որ Ընկերութիւնն իր

հաստատութեանը եւ կազմութեանը վերաբերեալ աշխատութիւնները լմնցուցած ու իր ընթացքին ապահով կերպով շարունակութեանը եւ ձեռնարկութեանն յաջողութեանը համար պէտք եղած խնամածութիւնը Տնօրէն Ժողովին յանձնած է:

Ընկերութիւնը վստահ է որ կամաց կամաց ազգին բոլոր մասերէն ու ամէն կողմէ հաճոյքով պիտի գան բազմացնել ու զօրացնել զինքը ամէն ճշմարիտ Հայու սիրտ կրող ազգայինք, արք եւ կանայք, եկեղեցականք եւ աշխարհականք, ի Պոլիս եւ մինչեւ էն հեռաւոր երկիրներէն, ուր հայու զաւակ կը գտնուի: Ընկերութիւնը վստահ է դարձեալ, որ այս քրիստոնէական ու մարդասիրական գործին հաշտ ակամբ պիտի նային ամէն կողմի եւ ամէն քաղաքականութեան ծառայող անձինք, զի բարեգործութիւնը եւ ոչ մէկուն շահին կրնայ վնասել, եւ հաստատ յոյս ունի որ Օսմանեան բարեսէր տէրութեան հովանաւորութեանը ներքեւ եւ ազգասիրաց ակըմբին համակրութիւնն իրեն վահան ու զօրավիգ ունենալով, անարգել պիտի կրնայ իր ընթացքը շարունակել:

Եւ վերջապէս Ընկերութիւնը առ Աստուած կ'ապաւինի իր ձեռնարկած գործն ի գլուխ հանելու համար, զի Աստուած կը հաճի այս գործին եւ իր ամենազօր Ափովը պահապան կ'ըլլայ ասանկ ձեռնարկութեան մը, որ աղքատին մշտնջենաւոր հաց ճարելու եւ անկեալին ձեռք կարկառելու սուրբ նպատակն ունի, եւ որոյ նշանաբանն է

ՍԷՐ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆ

Հասարակաց դիրութեան համար հարկ կը համարինք հրատարակել հոս այն անձանց անունները, որք ազգասիրաբար յանձնառու եղան ընկերագրութեան հսկել եւ խնամք տանիլ.

Պն. Պն.

Ալթունճեան Համբարձում

Աղաթօն Մկրտիչ

Արշակ Յակովբոս

Ֆըլճեան Յովհաննէս

Երկանեան Նիկողոս

Կոճիկեան Անդրանիկ Պէյ

Հովիւեան Յովհաննէս

Ճէվահիրճեան Եղիազար

Էսայեան Թովմաս

Եուսուֆեան Տիգրան

Խուրտաճեան Գրիգոր

Կիւմիլեան Խաչիկ

Կիւմիլեկերտանեան Ռուբէն

Պէշիկթաշեան Մկրտիչ

Պէտան Պէյ

Պուրունսուլեան Յակոբ

Միւիէնտիսեան Մարտիրոս
Նէվրուզ Յովակիմ
Նուրեան Յովհաննէս Էֆէնտի
Շահանեան Օքսէն
Պէյլիկճեան Ճանիկ
Օտեան Նշան

Սագըզլեան Յովհաննէս Էֆէնտի
Սամանճեան Մկրտիչ
Սըվաճեան Յարութիւն
Տավութեան Յակոբ Տոքթոր
Փէշտիմալճեան Սահակ

Ուզողը թէ այս անձանց եւ թէ Տնօրէն ժողովին անդամոց ձեռքով
կրնայ գրուիլ:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Բարեգործական Ընկերութեան նոր հաստատուած ժամանակը, Ազգային օրագիր մը դիտողութիւն մ'ըրած էր, եկեղեցականաց Ընկերութեան մէջ ընդունուելուն դէմ: Այս դիտողութիւնը Ընկերութեան ոգւոյն հակառակ ըլլալով, կանոնադրութեան Յանձնաժողովը փութաց իր անդամներէն երկուքին ստորագրութեամբը նամակ մը հրատարակել տալ նոյն օրագրին մէջ, ի բժշկութիւն գայթակղեալ մտաց: Անօգուտ չենք համարիր հոս դնել այն նամակը, ինչպէս նաեւ Կանոնադրութեան Յանձնաժողովին անդամներէն մէկ ուրիշին ետքէն իր կողմէն գրած մէկ նամակը մի եւ նոյն նիւթին վրայ:

17 Հոկտեմբեր 1860 Կ. Պոլիս

Մեծարգոյ խմբագիր,

Ձեր լրագրոյն 452 թուոյն մէջ նորահաստատ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վրայ խօսելով քանի մը տեղեկութիւն տալ եւ քանի մը խորհրդածութիւն ընել հարկաւոր սեպեր էիք: Նոյն գրութեան մէջ կ'աւելցնէիք նաեւ, աւելի ճիշդ ու ընդարձակ տեղեկութիւններու պէտք ունենալնիդ:

Ուստի պարտք կը համարինք գիտցնել թէ «Բարեգործական Ընկերութեան նպատակն է ազգին որբ, անտէր ու չքաւոր տղաքը երկրագործութեան ու արուեստից զբաղեցնել»:

Նոյնպէս գիտութեան արժանի է թէ ընկերութեան առաջարկութիւնը ոչ ի Հռոմէական Հայոց առ Լուսաւորչական եղած է եւ ոչ ի Լուսաւորչականաց առ Հռոմէականս: Վասնզի այս Ընկերութեան

հիմնադիրները Հայ են միայն եւ իրենց կրօնական պարտքը ու խղճմտանքին հաշիւը իրենց Աստծոյն տալէն վերջը, Եկեղեցիէ դուրս ամենեւին կրօնքի խնդիր եւ խտիր չեն յարուցաներ: Իրենք աղէկ համոզուած են, թէ ասկէ վերջը ազգին մէջ եղած կրօնական բաժանմունքները կան ու պիտի մնան, անոր համար ալ անկարելի միութեան խնդիրը յարուցանելու ոչ կամք եւ ոչ փափաք ունին: Բայց իրենց համար սուրբ սկզբունք մըն է

ԱԶԳՈՒԹԻՒՆԸ

Եւ սրբազան պարտք մըն է առ նոյն ազգը

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ:

Ասոր համար ալ, Յարգոյ Խմբագիր, այս Ընկերութեան հիմնադիրքը ոչ երկու, երեք, տասը կամ յիսուն հոգի են, այլ Ազգին այն անհատներն են, որ առանց կրօնի խտրութեան կու գան կը միանան բարի գործ մը ընելու համար, հաց ճարելու ազգին անօթի զաւկըներուն, հայր ճարելու որբերուն, մտքի սնունդ ճարելու տգէտներուն, ապագայ մը անտէրներուն:

Ուստի այսպիսի նպատակ ունեցող գործի մը առջեւ, մեր եւ մեր բոլոր ընկերներուն փափաքը այն է որ լռեն ամէն տեսակ բեմի վէճեր եւ բաժանման առիթներ, վասն զի մեր ամէնուն ալ կրօնական կոհուններուն մէջ նաեւ իմաստուն բարեգործութիւնը քարոզուած է միշտ, անխտիր ամէն քրիստոնեայ բեմերուն վրայէն:

Իսկ ձեր վերջի դիտողութեան սա կը պատասխանենք:

Մեծ նախատինք ըրած կ'ըլլայինք քրիստոնէութեան եւ Ընդհանուր ազգին եւ ծանր վերք մը տուած կ'ըլլայինք անխտիր ամէն եկեղեցականաց, իրենց մէկ քանիին սխալմանցը համար բոլոր եկեղեցական մարմինը եթէ ուզէինք ի բաց մերժել: Քահանան առաքելոց յաջորդը, Քրիստոսի փոխանորդը, երբ իր պաշտօնը արժանաւորապէս կը կատարէ, հրեշտակ մըն է մեզի համար, եւ երբ ինք սէրը սիրտը, խաղաղութիւնը բերանը, գիտութիւնը ճակատը կու գայ մեզի եւ մեր սուրբ գործին օգնութեան ձեռք կը կարկառէ, մենք այդ ձեռքը յարգանօք մեր ճակատը կը տանինք: Վասն զի մենք հաւտացեր ենք միամիտ սրտիւ, թէ Ընդհանուր ազգին զանազան եկեղեցականքը աղէկ համոզուած են, որ իրենց ժողովրդոց սիրելի եւ պատկառելի ըլլալու համար, իրենց երկնաւոր վարդապետին հրամանը պէտք է անհրաժեշտ

կատարեն «ճրագը աշտարակին վրայ հանելով եւ ոչ գրուանի* տակ ծածկելով»:

Ընդունեցէք, յարգոյ խմբագիր, մեր յարգանաց հաւաստիքը:

Մ. Աղաթօն

Յովսէփ Շիշմանեան

Յարգամեծար տէր,

Ձեր պատուական լրագրոյն 456 թուոյն մէջ մեծապատիւ Աղա Յ. Ոսկանին Բարեգործական Ընկերութեան առթով գրած նամակը շնորհակալութեամբ եւ ուրախութեամբ սրտի կարդացի: Նոյն նամակին մէջ յարգոյ հեղինակը կասկած կը ցուցնէ, թէ եկեղեցականք աշխարհականաց համեմատ անխտիր ոգով իրենց ազգայնոց բարերարելու եռանդը չունենան: Ասոր դէմ զրուցելու քանի մը խօսք ունենալովնիս, նախ անոր խորհրդածութիւնները կը դնենք հոս եւ հետեւաբար մերինները կ'առարկենք բացայայտ ու որոշ հասկցուելու համար: «Դիցուք թէ, կ'ըսէ գրոյս հեղինակը, աշխարհականներէն անոնք միայն անդամ գրուին ընկերութեան, որոնք անխտրութեան ոգին ունին կամ անկէ չեն խորշիր, բայց նոյն կարծիքը կրնա՞նք ունենալ առհասարակ բոլոր եկեղեցականց համար ալ»:

Կը պատասխանեմ նախ, թէ ինչո՞ւ այս անխտրութեան ոգին թէ եւ աշխարհականաց մէկ մասին մէջ կը գտնենք, բոլոր աշխարհականները առ հասարակ առանց հարցուփորձի արժանի կը գտնենք ընկերութեանս անդամակից ըլլալու, երբ անաչառութեամբ բոլոր եկեղեցականներէն կը պահանջենք այս անխտրութիւնը, անոնցմէ զմանս ապահովապէս ընդունելի ընելու համար մեր ընկերութեան մէջ, մենք կը կարծենք թէ անելի բանաւոր եւ իրաւացի է ըսել թէ ո եւ իցէ հայ մարդ, եկեղեցական եւ աշխարհական, ընկերութեանս կանոնները ընդունելէն վերջը տէր է անոր անդամակից ըլլալու, բաւական է որ ինքը յօժարամիտ ըլլայ այսպիսի բարեգործ ձեռնարկութեան մը նպաստելու, եւ այս առանց վտանգ մը պատճառելու ընկերութեան: «Բայց, կ'ըսէ, (եկեղեցականք) յայտնի անխտրութեան սկզբանը կրնա՞ն ծառայել առանց իրենց յատուկ սկզբանը վնասելու, եւ եթէ ծառայեն միթէ՞ անձին իշխանութեամբ է թէ արտօնութեամբ, եւ այս արտօնութիւնը ո՞րակից»: Ի՞նչու, կ'ըսենք, իրենց

* Գրուանի տակ դնել=ծածկել, պահել, ուրիշներէ թաքցնել:

յատուկ սկզբանը կը վնասեն երբ ձեռնտուութիւն կ'ընեն ընկերութեան մը, որ ատոք հունձք, կամ ազնիւ պտղատու ծառեր, կամ արհեստից մէջ գործածելի զանազան փայտեր, արմատներ, տունկեր հասցնող եւ բանձարէ կամ օսլայէ շաքար շինող մարդիկներ պատրաստելու նպատակն ունի, արդեօք եկեղեցականք նախանձորդութիւն մը՝ ունին աշխարհականաց հետ այս առուտորներուն մէջ: Դարձեալ, ո՞ր եկեղեցական իշխանութիւնն է որ այսպիսի ընկերութեան համակրութիւն ունեցող եկեղեցականը դատապարտէ կամ արգիլէ որ այսպիսի համակրութիւն չունենայ, միթէ զբարին կամ զանվնասը սիրելու համար հարկ կա՞յ արտօնութիւն ունենալու: Ես թէ որ հայ կամ կաթոլիկ հայ եկեղեցական մը ըլլայի, ոչ միայն հայոց կամ կաթոլիկ հայոց մէջ գտնուած այսպիսի ընկերութեան իմ նպաստս կը մատուցանէի, այլ նաեւ ուրիշ ազգաց մէջ եղածին ալ իմ ձեռքէս եկածին չափ եւ այն ազգին ունեցած համակրութեանս համեմատ օգնութիւն կ'ընէի, եւ այս՝ առանց իմ սկզբանցս վնասելոյ ամենափոքր խղճմտանքն ալ ունենալու, կամ ասոր համար արտօնութիւն ստանալոյ հարկաւորութիւնն զգալու: - Թէ որ ազգին իրաքանչիւր մասին եկեղեցականները իրենց պաշտօնէն թելադրեալ խտրութիւն կ'ընեն նէ երկու ժողովրդեան մէջ, ասի յայտնի է թէ միայն կրօնական խնդիրներու մէջ է, եւ անհաւատալի է ըսել, թէ իրենց մոլեռանդութիւնը այն աստիճանի սաստիկ ըլլայ որ այս ժողովրդեան եկեղեցականը, սոսկապէս աստեաց բարութիւնը զլանայ այն ժողովրդեան, կամ աւելի պարզ խօսելով, այս ժողովրդեան եկեղեցականը փափաքի որ միւս ժողովուրդը տգէտ, աղքատ եւ թշուառ մնայ, զայս հաւատալ անտանելի է: - Երկրորդ, թէ եւ եկեղեցականք այսպիսի զգուելի գաղափարի տէր ալ կրնան ըլլալ, զոր երբեք չենք հաւտար, մեր ընկերութեան նպատակը ամենեւին յարաբերութիւն մը չունենալով անոնց գիտութեանը հետ, անկարելի կամ խիստ դժուարին է իրենց որ այս ընկերութեան գործոց տնօրինութեան մէջ կարենան պաշտօն մը, հետեւապէս անոր տիրապետելու կամ վնասելու առիթ մը ունենալ, թող թէ, մեր երկրագործ եւ արհեստաւոր աշկերտը մեր դասարանները ընդունուելէն առաջ սորված պիտի ըլլայ իր կրօնքին ուսմունքը իրաւանց տիրոջը քով: Հուսկ յետոյ, հեղինակը *վաղամտեիկ* Համազգեաց ընկերութեան դժբախտ դէպքը ի մէջ բերելով կը փափաքի, որ այս նորահաստատ ընկերութեան հիմնադիրքը աւելի զգոյշ եւ խորագէտ ըլլան այն հզօր եւ իր օգուտը փնտռող եկեղեցապետութեան

հնարիցը դէմ: Մենք Համազգեաց ընկերութեան վրայ հոս երկար բարակ խօսիլ չենք ուզեր, բայց ակամայ երկու խօսք կը գրուցենք, կարծելով թէ կարենանք այս երկու ընկերութեանց թէ նպատակին եւ թէ կազմութեան մէջ եղած տարբերութիւնը ցուցնել, որով եւ փարատել այն սնտոի երկիւղը, զոր հեղինակին վերոյիշեալ խորհրդածութիւնները կրնան ոմանց մտքին մէջ յղանալ: Համազգեաց ընկերութիւնը նպատակ ունէր քաղաքներու, ասաններու, գիւղերու մէջ նախնական դպրոցներ կառուցանել պզտիկ տղոց թէ հոգետոր եւ թէ արտաքին գիտութիւններ սորվեցնելու: Համազգեան ընկերութիւնը կանոն մը ունէր նուիրական, որուն մէկ տառը խիստ անընդդիմադրելի փաստերը նաեւ չէին կարող տեղէն շարժելու, չէր կրնար փոխել իր նպատակը, եւ նախապատրաստական դպրոցներու տեղ չափահաս եւ իր հոգետոր եւ սկզբնական ուսմունքը սորված աշկերտներու համար սահմանեալ բարձրագոյն եւ արտաքին գիտութեանց վարժարաններ բանալ, չէր կրնար դարձեալ նպատակը պահելով իր կանոններուն մէկ յօդուածը փոխել եւ պզտիկ տղոց հոգետոր ուսմանց հոգը անոնց հաւատալ, որոնց կը վերաբերի: Մենք ոչ այսպիսի կանոն ունինք եւ ոչ այսպիսի նպատակ. այս երկու ընկերութեանց մէջ իր մը չկայ որ երկուքին հասարակ ըլլայ, ուրեմն այս երկու մարմիններուն կազմուածքը անհամեմատ տարբեր է մէկզմէկէ, եւ թէ որ Համազգեաց ընկերութիւնը չկրցաւ ապրիլ այն տարերաց մէջ, մենք շատ յոյս ունինք, որ Բարեգործական ընկերութիւնը հոն մեծ սնունդ առնու գարգանայ, եւ գուցէ մեր փափաքը անակնկալ կերպով վարձատրէ:

Թէ որ այս գրածիս նիւթ եղող նամակին արգոյ հեղինակը եւ անոր հետ զիս կարդացող սիրելի ազգայինք վերոգրեալ առարկութիւններէս համոզուեցան, կը մնայ հեղինակին իր ճարտար գրիչը դարձնել ի հրաւեր անդամակցութեան այս ազգօգուտ ընկերութեանս առ ի պատուական ազգայինները, եւ ազգայնոց ալ ունենալ սէր եւ ջանք ի բազմացուցանել ասոր անդամներուն թիւը:

Բարեհաճեցէք, յարգամեծար տէր, տեղի մը շնորհել այս գրութեանս ձեր պատուական լրագրոյ էջերէն մէկին մէջ:

Կ. Պոլիս 12 Նոյեմբ. 1860

Ն. Ծ.

Ս. Թագուորեան

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԿՏԱԿՔ⁹
ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Հ.Բ.Ը.Միութիւնը իր հաստատութեան թուականէն ի վեր (1906) բաւական թուով նուիրատուութիւններ եւ կտակներ ընդունած է, որոնցմէ շատերը իրենց ամենամեծ կարեւորութեամբ հնարաւոր դարձուցած են Միութեանս օգտակար գործ կատարել եւ իր գործունէութիւնը ընդարձակել, ինչպէս ան ըրաւ վերջերս Հայաստանի մէջ, շնորհիւ Յակոբեան փաշայի եւ Մէօթէմէտեանի կտակներուն:

Միութիւնս մինչեւ հիմա բաւարար ճիգ մը չէր ըրած այս օրինակ կտակներ յինքն ձգելու համար, բայց այսօր որ ան վերածուած է զուիցերիական ընկերակցութեան մը եւ ունի իրաւական գոյութիւն եւ օրինական դիրք մը, որ կը թոյլատրէ իրեն ստանալ եւ վարել ամէն նուիրատուութիւններ եւ կտակներ, հիմա՝ Միութիւնը աւելի դիւրութիւն եւ երաշխաւորութիւն կ'ընծայէ նուիրատուներուն:

Արդ նկատելով, մէկ կողմէ, վերջին իրադարձութեանց առթիւ ստեղծուած նոր կացութիւնը, - մասնաւորաբար Պոլսոյ Հայ Պատրիարքարանին համար, - եւ միւս կողմէ՝ նկատելով բազմաթիւ թելադրութիւնները, որ կ'ըլլան Միութեան իր Մասնաժողովներուն կամ անհատներու կողմէ, որպէսզի ան աւելի աշխուժի զբաղի նուիրատուութեանց եւ կտակի խնդիրներով՝ Կեդր. Ժողովը որոշեց այս անգամ յատուկ միջոցներ կիրարկել անոնց իրագործումը դիւրացնելու համար, ի նկատի առնելով մանաւանդ մեր հայրենակիցներու տատամսումը, որոնք ցարդ չէին գիտեր որո՞ւ դիմել կամ ի՞նչ ընել պէտք եղած պաշտօնական ձեւակերպութիւնները կատարելու համար: Կեդր. Ժողովը որոշեց ուրեմն կազմել, *Կտակաց Հոգաբարձութիւն* անուան տակ երեք յանձնաժողով, մին Բարիզի, երկրորդը Գահիրէի եւ երրորդը Նիւ Եորքի մէջ, որոնց պիտի անդամակցին իրաւագէտներ, որպէսզի այս յանձնաժողովները կարենան օրինական թուղթերու պատրաստութիւնը կատարել համաձայն իւրաքանչիւր երկրի օրէնքներուն:

Այս Յանձնաժողովները, ինչպէս նաեւ մեր բոլոր Մասնաժողովները,

⁹ ԲԱՐԻԶ, 1925, ԳԵՂԱՐՈՒԷՍՏԱԿԱՆ ՀԱՅ ՏՊԱՐԱՆ

պաշտօն պիտի ունենան հայթայթելու ամէն հայու, Միութեան անդամ ըլլայ ան թէ ոչ, պէտք եղած տեղեկութիւններն ու լուսաբանութիւնները կատարուելիք ձեւակերպութեանց մասին, որպէս զի նուիրատուները բաղձալի ամէն ապահովութիւն ու երաշխիք ունենան եւ վստահ ըլլան, որ ձեռնհասօրէն ամէն խորհուրդ պիտի տրուի իրենց, որպէս զի պատրաստուելիք թղթերը օրինական ըլլան:

Այս կերպով, շատ մը հայեր որ կը փափաքին նուիրատուութիւն մ'ընել, բայց չեն գիտեր որո՞ւ դիմել կտակ մը ընելու համար, կամ որո՞ւ տրամադրել դրամագլուխը, զոր կը փափաքին յատկացնել բարեգործական կամ ազգային հաստատութեան մը, չի պիտի հարկադրուին, ինչպէս անցեալին մէջ, օտար ընկերութիւններու դիմելու կամ իրենց մտադրութենէն ետ կենալու: Անոնք պիտի կրնան ասկէ վերջը զայն ամենայն ապահովութեամբ յանձնել Միութեան, վստահ ըլլալով որ իրենց կամքը խղճմտօրէն պիտի գործադրուի եւ յարգուի:

Անոնք պիտի կրնան նուիրատուութիւններ ընել զանազան ձեւերու տակ, որ կը տարբերին իրաքանչիւր խնդրի համար եւ առաջադրուած նպատակին համեմատ: Իրենց ընտրութեան համաձայն անոնք պիտի կրնան կամ ուղղակի Միութեան յանձնել իրենց կտակին կամ նուիրատուութեան դրամը, կամ զայն դրամատան մը մէջ պահ դնել, trust-ի ձեւին տակ: Այս նպատակաւ Միութիւնը խորհրդակցած է առաջնակարգ դրամատուներու հետ, որոնք պիտի ընդունին իբր ասանդ, ի հարկին մշտնջենապէս, կտակներ ու նուիրատուութիւններ, զանոնք պիտի վարեն իբր trustee եւ անոնց եկամուտները ամէն տարի պիտի վճարեն Միութեան, որպէս զի ան կարենայ զանոնք գործածել կտակին կամ նուիրատուութեան տրամադրութեանց համաձայն:

Իբր օրինակ ստորեւ կը յիշատակենք մի քանի կարեւոր պարագաներ, որոնք կրնան ներկայանալ:

1. Նուիրատուն Միութեան կը յանձնէ դրամագլուխը, անոր թողլով զայն վարելու եւ եկամուտները իր *աքթին* մէջ որոշուած նպատակին յատկացնելու հոգը:

2. Նուիրատուն Միութեան կը յանձնէ դրամագլուխը, բայց իրեն կը վերապահէ եկամուտները, մինչեւ իր մահը, կամ իրմէ վերջը նշանակելիք անձի մը, իբր ցկեանս թոշակ:

3. Նուիրատուն, եթէ կը նախընտրէ, կրնայ իր որոշած դրամատան մէջ ասանդ դնել դրամագլուխը, անձեռնմխելի trust-ի

կամ ուրիշ ձեւի տակ, պայմանաւ որ դրամատունը յանձնառու ըլլայ պահել սոյն աւանդը եւ տարուէ տարի Միութեան վճարել անոր եկամուտները:

Այս պարագային, ինչպէս նաեւ նախորդներուն մէջ, նուիրատուն բնականաբար կրնայ եկամուտները վերապահել իրեն կամ իր նշանակելիք անձին, մինչեւ մահ:

Այս վերջին կարգադրութիւնը մշտնջենապէս ամէն երաշխիք ներկայացնելու առաւելութիւնը ունի, նոյն իսկ եթէ օր մը Միութիւնը լուծուի, ըստ հիմնական կանոնագրին 23-րդ յօդուածին:

Իբր տեղեկութիւն կը կցենք ներկայիս այդ տեսակ *աքթի* մը օրինակը, որ վերջերս ստորագրուեցաւ հայրենակցի մը եւ Միութեանս միջեւ, եւ որ կը կազմէ մշտնջենական աւանդ մը զուիցերիական դրամատան մը մէջ:

4. Նուիրատութիւնը կամ կտակը կրնայ նաեւ ըլլալ *fidéicommiss** ձեւով, նոյն իսկ *վազըֆի* ձեւով այն երկիրներուն մէջ, որուն օրէնքները կ'ընդունին այս իրաւական ձեւերը:

5. Նուիրատուն կրնայ նաեւ կեանքի վրայ ապահովութիւններ կնքել, վճարելով ցմահ տարեկան *բրիմները*, յետ մահու Միութեան կը վճարուի ապահովագրուած դրամագլուխը եւ Միութիւնը կը գործածէ զայն կտակին կամ նուիրատութեան պայմաններուն համաձայն: Այս ապահովագրուած դրամագլուխը կամ անոր եկամուտները կրնան նուիրուիլ վերոյիշեալ ձեւերէն միոյն համաձայն, այսինքն դրամատան մը մէջ աւանդ, ցկեանս թոշակ ի նպաստ այս ինչ անձին, են:

6. Վերջապէս պէտք է գիտնալ, որ Միութիւնը կ'ընդունի նաեւ վարել ամէն կտակները, որոնք եղած են հայկական ընկերութիւններու կամ հաստատութիւններու կամ անհատներու անուան, եթէ այս վերջինք կը փափաքին յանձնել զանոնք Միութեան, որ յանձնառու կ'ըլլայ ամէն տարի իր վարչութեան հաշիւը ներկայացնել անոնց:

Իբր տեղեկութիւն տրուած այս մի քանի օրինակները բաւական են ցոյց տալու ձեւերու այն մեծ պէսպիսութիւնը, որոնց մէջէն նուիրատուները կրնան ընել իրենց ընտրութիւնը:

Պօղոս Նուպար

* deposit, աւանդ (Իսլր.):

ՕՐԻՆԱԿ Ա.
Հայ ամուրիի մը համար

Արամեան անուն հայ մը, ամուրի, կրցած է իր աշխատութեան շնորհիւ, առաւել կամ նուազ հարստութիւն մը դիզել, հայրենիքի սէրն ալ միշտ վառ պահած է սրտին մէջ:

Յառաջացեալ տարիքի մը հասած՝ կը փափաքի մահուընէ առաջ բարիք մը ընել իր դժբախտ հայրենակիցներուն: Անորոջ է, չի գիտեր ի՞նչ ընէ, կամ ինչպէ՛ս ընէ:

Համարենք թէ մօտաւոր կամ հեռաւոր ազգական չունի: Իր հարստութիւնը կը բաղկանայ մասամբ հնչուն դրամէ եւ մասամբ արժեթուղթերէ, զորս ի պահ դրած է դրամատան մը մէջ եւ որոնց վրայ ձեռք պիտի դնէ դրամատունը կամ fisc-ը իր մահէն վերջ, ի մեծ վնաս իր ազգին: Եթէ իր հարստութիւնը կը բաղկանայ նաեւ ապրանքներէ, կալուածներէ, հողերէ, իր մահուանէ վերջ իրեն գտնուած երկրին կառավարութիւնը ըստ օրինի պիտի գրաւէ զանոնք:

Ահա թէ ի՞նչ խորհուրդ կու տանք ընել այդ հայրենասէր հայուն:

Ան կրնայ գրել դրամատան, ուր կը գտնուի իր հարստութիւնը, զայն փոխանցել Հ.Բ.Ը.Միութեան, պայման դնելով որ զորչափ ինք ողջ է, իր արժեթղթերուն տոկոսները ինքը միայն իրաւունք պիտի ունենայ զանձելու:

Իր մահէն վերջ իր հարստութիւնը Հ.Բ.Ը.Միութեան պիտի պատկանի, որով դրամատունը պարտաւոր պիտի ըլլայ գործել համաձայն այն հրահանգներուն, զոր իրեն պիտի տայ Միութիւնը:

Այն դրամատունը, ուր կը գտնուի Պր. Արամեանի հարստութիւնը, պարտաւոր պիտի ըլլայ բառ առ բառ գործադրել Հ.Բ.Ը.Միութեան Կեդր. Ժողովին իրեն տուած հրահանգները: Այդ հրահանգները պիտի կրեն ստորագրութիւնները Նախագահին, Դեր-Ատենապետներէն միոյն, Ատենադպիրին եւ Գանձապետին:

Պր. Արամեան այդ նամակը դրամատան գրած օրն իսկ պիտի գրէ նաեւ Հ.Բ.Ը.Միութեան նախագահին, անոր ղրկելով դրամատան ուղղած նամակին մէկ պատճէնը եւ խնդրելով Միութենէն, որ իր մահէն վերջ իր հարստութեան եկամուտները գործածէ այս ինչ հաստատութեան կամ

նպատակին, զորս պիտի նշանակե¹⁰:

Պր. Արամեան իրաւունք պիտի ունենայ պահանջելու Միութենէն, որ իր տուած դրամագլուխը անձեռնմխելի մնայ: Պիտի կրնայ պայման դնել նաեւ, որ Միութիւնը ազատ ըլլայ ծախելու արժեթղթերը եւ գնելու ուրիշներ, որոնք իրեն աւելի ապահով կամ հասութաբեր թուին, առանց սակայն նուազեցնելու դրամագլուխը: Պր. Արամեան իրաւունք պիտի ունենայ նաեւ պահանջելու Միութենէն, որ այն հաստատութիւնը, որուն կը սահմանէ իր հարստութեան եկամուտները, իր անունը կրէ:

Այն պարագային, երբ Պր. Արամեան ունի մէկ կամ աւելի հեռաւոր ազգականներ, որոնց կը փափաքի յատկացնել մինչեւ իրենց մահը մաս մը իր նուիրատութեան տարեկան եկամուտներէն, կամ մի անգամ ընդ միշտ գումար մը իր նուիրատութենէն, կրնայ նշանակել զայն Միութեան գրելիք իր նամակին մէջ, յայտնելով անունը, մականունը, հասցէն իր ազգականին: Միութիւնը, այդ նամակը ստանալուն, զայն իր վարչական ժողովին նկատառման կը յանձնէ եւ իրեն կը պատասխանէ պաշտօնապէս:

Գալով անշարժ կալուածներուն, ինչպէս խանութ, տուն, հող, այգի եւն. եւն. Պր. Արամեան որպէսզի կարենայ զանոնք օրինաւորապէս Միութեան փոխանցել, նուիրել կամ կտակել եւ յետ մահու կնճիռներ չծագին, պարտի դիմել Միութեանս, որ իբր գուիցերիական իրաւական գոյութիւն ունեցող ընկերութիւն, ցոյց կու տայ իրեն այն ամէն միջոցները, որոնց պէտք է դիմէ ինք, համաձայն իր գտնուած երկրին յատուկ օրինաց: Միութիւնը կրնայ նաեւ մատակարարել իր կալուածները եւ մինչեւ իր մահը գանձել անոնց վարձքերը:

Գալով իր ունեցած ապրանքներուն եւ կարասիներուն, պաշտօնական *աքթով* մը կրնայ իր գտնուած քաղաքին Հ.Բ.Ը.Միութեան Մասնաժողովին, եւ եթէ գոյութիւն չունի, ամենէն մերձաւոր քաղաքին մէջ գտնուած մասնաժողովին պաշտօն յանձնել վաճառելու իր ապրանքները եւ կարասիները, վճարելու – եթէ հարկ կայ – կառավարական տուրքը, պայմանով որ այդ վաճառումէն գոյացած զուտ հասոյթը դրկուի ուղղակի Հ.Բ.Ը.Միութեան Կեդր. Ժողովի նախագահին:

Պր. Արամեան կրնայ նաեւ, իր կենդանութեան, այդ արժեթղթերը դրկել ուղղակի Հ.Բ.Ը.Միութեան Կեդր. Ժողովի նախագահին, պայման

¹⁰ Գրքոյկին մէջ կը գտնուէր ցուցակը այն կարեւոր հաստատութիւններուն, որք կրնան հիմնուիլ Հայաստանի մէջ:

ընելով որ ամէն տարի, կամ ամէն վեցամիս, այդ արժեթուղթերուն տոկոսները իրեն ղրկուին:

Եթէ Պր. Արամեան պէտք չունի իր արժեթուղթերու տոկոսներուն եւ կը փափաքի որ իր կենդանութեան ան յատկացուի հայրենիքի այս ինչ հաստատութեան կամ ազգին այս ինչ պէտքին, կրնայ նոյն իմաստով գրել Միութեան, որ գործադրէ իր կամքը ամենայն խղճմտութեամբ:

ՕՐԻՆԱԿ Բ.

Անզաւակ ամուսիններու համար

Պր. Նշան ամուսնացած է. երկար տարիներէ ի վեր կ'ապրի իր կնոջը հետ, երկուքն ալ տարիքոտ են, ոչ ժառանգորդ ունին եւ ոչ ալ մերձաւոր ազգականներ, կամ եթէ ունին, չեն ուզեր իրենց հարստութիւնը անոնց թողուլ, որովհետեւ կամ իրենց ազգականները կարօտ չեն, եւ կամ ուրիշ պատճառներ ունին այդպէս ընելու:

Պր. Նշան կ'ուզէ իր հարստութիւնը Միութեան նուիրել, բայց որովհետեւ անոր եկամտովը կ'ապրի, կը փափաքի որ իր մահէն վերջը այդ եկամտուր ծառայէ ցմահ կնոջ, եւ կամ եթէ իր կինը իրմէ առաջ վախճանի, իրեն ծառայէ ցմահ: Մին եւ միւսին մահէն վերջն է, որ իր կտակած հարստութեան եկամտուր պիտի յատկացուի իր նշանակած հաստատութեան:

Պր. Նշան կը հարցնէ, թէ արդեօ՞ք Միութիւնը կ'ընդունի այս պայմանը: -Այո՛:

Կը յանձնարարենք որ այն անձերը, որոնք Պր. Նշանի պարագային մէջ կը գտնուին, իրենց կենդանութեան Միութեան յանձնեն արժեթուղթերէ բաղկացած իրենց հարստութիւնը: Միութիւնը պիտի փութայ գործադրել իրենց կամքը:

Անոնք իրաւունք պիտի ունենան գրելու Միութեան, որ ծախէ այս ինչ արժեթուղթերը, անոնց տեղ ուրիշներ գնէ, իրենք որոշելով գնուելիք թուղթերը: Եւ ապահով կրնան ըլլալ, որ իրենց կամքը պիտի յարգուի:

Գալով անշարժ կալուածներու՝ խանութ, տուն, հող եւն. անոնց համար կրնան հետեւիլ այն եղանակին, որ ցոյց տրուած է Ա. օրինակին մէջ:

Կառավարական ծանր տուրքերէ զերծ մնալու համար, տուրքեր, որոնք հարստութեան մը մինչեւ 74 % կրնան սպառել, կը յանձնարարենք ջերմապէս, որ կտակողները իրենց կենդանութեան միջոցին ընեն իրենց

նուիրատուութիւնը Միութեան:

Միութեան յանձնուած արժեթուղթերը Եգիպտոս կը դրկուին Միութեան դրամատան մէջ ի պահ դրուելու համար, ուր, երկրի օրէնքին համաձայն, եկամուտները ամէն տուրքերէ զերծ են:

Կրնանք յիշել օրինակը անզուակ ամուսիններու, որք տասը տարի առաջ Միութեան յանձնած են կարեւոր գումար մը, հետեւեալ պայմաններով.

1. Յանձնուած գումարով առաջնակարգ եգիպտական պետական արժեթուղթեր գնել:

2. Այդ արժեթուղթերուն տարեկան եկամուտը իրենց վճարել:

3. Ամուսնոյն մահուան պարագային, այդ եկամուտը ամբողջովին կնոջը յանձնել, մինչեւ անոր մահը:

4. Կնոջը մահէն վերջ, այդ եկամուտով գնել դպրոցական դասագրքեր, գիւղի դպրոցներու աղքատ աշակերտներուն համար:

5. Եթէ ամուսնոյն մահէն վերջ կինը վերամուսնանայ, ոչինչ տալ անոր եւ գործածել բոլոր եկամուտը այնպէս, ինչպէս նշանակուած է 4-րդ պայմանին մէջ:

Տարակոյս չկայ, որ Միութիւնը երկար տարիներէ ի վեր խղճմտօրէն յարգած է կամքը այդ վեհանձն նուիրատուին, որ իր պատանեկութեան շատ աղքատ ըլլալով, նեղուած էր դպրոցական դասագրքի պակասէն, երբ կը յաճախէր իր գիւղին դպրոցը:

Այն պարագային երբ անզուակ ամուսիններ ուզեն իրենց մահէն վերջը իրենց հարստութեան մէկ մասը նուիրել Միութեան եւ միւսը՝ անելի կամ պակաս մօտաւոր ազգականներու, կրնան հետեւիլ այն եղանակին, որ ցոյց տրուած է մեր առաջին օրինակին մէջ, այսինքն յայտնել Միութեան՝ անունը, մականունը, հասցէն իրենց ազգականին եւ նշանակել գումարը, զոր կ'ուզեն անոր յատկացնել:

ՕՐԻՆԱԿ Գ.

Զուակներ ունեցող ամուսնուհիներ

Այն պարագային, որ զուակներ ունեցող հարուստ ընտանիքներ կը փափաքին որոշ գումար մը նուիրել հաստատութեան մը, օրինակի համար հիւանդանոցի մը, եկեղեցիի մը եւ կամ դպրոցի մը կառուցման

համար, եւ ուրիշ գումար մ'ալ որպէսզի անոր տոկոսները ծառայեն այդ հաստատութեան մատակարարութեան, կրնան իրենց նուիրատուութիւնը վստահիլ Միութեան, որ սիրայօժար կը ստանձնէ իր հսկողութեան տակ կառուցանել մտադրուած շէնքը եւ անոր կը յատկացնէ որոշուած եկամուտները եւ կը հսկէ ու կը վարէ այն հաստատութիւնը: Տարակոյս չկայ որ բոլոր այս հաստատութիւնները նուիրատուին անունը պիտի կրեն:

Այս կարգին պատկանող նուիրատուները պէտք է գրեն Միութեան, յայտնելով իրենց կամքը, ամէն հարկաւոր մանրամասնութիւններով: Միութիւնը ուշի ուշով կը քննէ խնդիրը եւ նուիրատուներուն ցոյց կու տայ լաւագոյն միջոցները, իրագործելու համար իրենց փափաքը:

ՕՐԻՆԱԿ Դ.

1.- Ապահովագրութիւն

Բարի հայրենասէր հայ մը կը փափաքի Հայաստանի մէջ օգտակար գործ մը ընել, բայց իր կարողութիւնը չի ներեր, քանզի այդ գործին ծախքերը իր կարողութենէն վեր են: Այն հայը կրնայ ամուրի, ամուսնացեալ կամ ընտանիքի տէր ըլլալ:

Այս պարագային կը յանձնարարենք իրեն Ապահովագրական ընկերութեան մը մօտ, զոր Միութիւնը ի հարկին կրնայ իրեն ցոյց տալ, Միութեան ի նպաստ կեանքի ապահովագրութիւն մը կնքել, իրեն յարմար դատած գումարով մը: Իր ապահովագրութեան պայմանագրին մէջ աւելցնել կու տայ, որ իր մահուան պարագային ապահովագրուած գումարը ամբողջութեամբ Հ.Բ.Ը.Միութեան յանձնուի:

Միութիւնը արդէն օրինակ ունի բարի հայու մը, որ իր կեանքը ապահովագրած էր ի նպաստ Միութեան, բայց իր մահէն յետոյ, քաղաքական դէպքերու բերմամբ նուիրատուին կինը եւ զաւակները իրենց բոլոր հարստութիւնը կորսնցուցած ըլլալուն, Միութիւնը նուիրատուին այրի կնոջ խնդրանքին վրայ, ապահովագրուած գումարը նոյնութեամբ անոր վերադարձուց:

ՕՐԻՆԱԿ Ե.

2.- Ապահովագրություն

Գործատու մը, փոքր արհեստատու մը, համեստ հայրենասէր մը կ'ուզէ բարի գործ մ'ընել իր հայրենիքին համար, բայց հարուստ չէ, ոեւէ խնայողութիւն չունի, զոր կարենայ յանձնել Միութեան:

Ան կրնայ իր կեանքը ապահովագրել ընկերութեան մը մօտ, զոր Միութիւնը կրնայ իրեն ցոյց տալ, տարուէ տարի վճարելով *բրիմ* մը, որ կը տարբերի ապահովագրուած գումարին կամ ապահովագրողին տարիքին համեմատ:

Ապահովագրողը կրնայ իր կեանքը ապահովագրել 500, 1000, 10,000 կամ ւելի մեծ գումարի մը համար, ըստ այն *բրիմ*ին, զոր ան կրնայ տարուէ տարի վճարել իր խնայողութիւններով:

Այս պարագային պէտք է որ այդ հայրենակիցը տեղեկացնէ Միութեան գումարը, որուն համար ինքզինքը ապահովագրած է ի նպաստ Միութեան, եւ *բրիմ*ը, զոր տարուէ տարի պիտի վճարէ, նշանակելով նպատակը, որուն Միութիւնը պարտի յատկացնել ապահովագրուած գումարը, կամ անոր եկամուտը, իր մահէն յետոյ:

Միութիւնը ունի իրեն ի նպաստ եղած այս տեսակ ապահովագրութիւններէն տասնեակ մը, որոնք կնքուած են համեստ անձերու, նոյն իսկ եկեղեցականներու կողմէ, որոնց մահէն յետոյ Ապահովագրական ընկերութիւնը իսկոյն վճարած է Միութեան ապահովագրուած այդ գումարները, որոնք յատկացուած են իրենց որոշեալ նպատակներուն:

ՕՐԻՆԱԿ Զ.

Յկեանս թոշակ

Տարիքոտ այր կամ կին մը, որ ունի պզտիկ հարստութիւն մը, կազմուած ամբողջութեամբ արժեթուղթերէ կամ կալուածներէ, եւ կամ մաս մը արժեթուղթերէ եւ մաս մը հասութաբեր կալուածներէ: Մին կամ միւսը կ'ապրին իրենց ստացուածքներուն եկամուտներովը, որոնք սակայն չեն բաւեր վայելչօրէն ապրելու համար, անոնք կը փափաքին ունենալ քիչ մ'աւելի դրամ իրենց ծերութեան օրերուն մէջ: Ի՞նչ կրնան

ընել:

Կրնան իրենց բոլոր հարստութիւնը Միութեան յանձնել, պայմանաւ որ մինչեւ իրենց մահը Միութիւնը իրենց վճարէ թոշակ մը:

Օրինակ մը տանք ատելի լաւ բացատրելու համար. 65 տարեկան մարդ մը ամսական 20 անգլ. ոսկիի եկամուտ մ'ունի, որով կ'ապրի նեղութեամբ. երջանիկ պիտի ըլլայ եթէ 30 ոսկի ունենայ. կը խորհի թէ Միութիւնը կրնա՞յ արդեօք այս տեսակ կարգադրութիւն մը ընդունիլ:

Այո՛, Միութիւնը կ'ընդունի այս տեսակ կարգադրութիւն մը եւ կրնայ այդ յաւելուածական գումարը վճարել շատ մը պարագաներու մէջ:

Եթէ այն անձը, որ Միութենէն ցկեանս թոշակ մը ստանալու համար անոր կը յանձնէ իր հարստութիւնը եւ կը փափաքի նաեւ, որ իր մահուան պարագային Միութիւնը կատարէ իր թաղումը եւ նոյն իսկ իրեն համար գերեզման մը շինէ, Միութիւնը կ'ընդունի այս բոլոր պայմանները:

Մի եւ նոյն բանը կարելի է նաեւ ընել ամուրիներու եւ անզաւակ ամուլներու, եթէ կը փափաքին այս տեսակ կարգադրութիւն մը:

ԿՏԱԿ

Միութիւնը կ'ընդունի ամէն տեսակ կտակ, որոնց պայմանները դատերու տեղի չեն տար:

ՅՈՒՅԱԿ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Ձոր կարելի է հիմնել Հայաստանի մէջ եւ կամ ուրիշ երկրի մը մէջ, ուր բաւականաչափ հայ գաղթականներ կը գտնուին:

1. Հիւանդանոցներ կամ դարմանատուներ այն քաղաքներուն մէջ, ուր անոնք գոյութիւն չունին:
2. Վեներական ախտերու դարմանատուներ:
3. Աչքի հիւանդութեան դարմանատուներ եւ կուրանոցներ:
4. Ծննդաբերական մայրանոցներ:
5. Հիւանդ տղաներու դարմանատուներ:
6. Ծերանոց եւ անկելանոց:
7. Փոխանցիկ հիւանդութեանց եւ թոքախտի սանաթօրիոմներ:

8. Իւրաքանչիւր գիւղախումբի համար բժիշկ մը, փոխադրելի

դեղարանով մը, որպէս զի գիւղ գիւղ այցելէ, հիւանդները դարմանէ եւ գիւղացիներուն հարկաւոր առողջապահական խորհուրդներ տայ:

9. Ճահիճներու չորացում:

10. Ըմպելի ջուրի փոխադրում:

11. Քսան անգլ. ոսկիի մրցանակ մը հաստատել այն գործաւորին կամ արհեստաւորին, որ որբուհիի մը հետ կ'ամուսնանայ:

12. Գործաւորական տուներ կառուցանել եւ զանոնք տալ նոր ամուսնացած գործաւորներու:

13. Մրցանակներ հիմնել այն գիւղացիներուն, որոնք վեց ողջ զաւակ ունին:

14. Գիւղեր կամ թաղեր հիմնել գաղթական կամ գործաւոր ընտանիքներու համար:

15. Նպաստներ հաստատել, ձմեռուան եղանակին կարօտ ընտանիքներու ուտելիք եւ զգեստեղէն բաշխելու համար:

16. Դպրոցական աղքատ ուսանողներու տաք ապուր բաշխել:

17. Բաղնիքներ, կամուրջներ եւ աղբիւրներ կառուցանել:

18. Մեղուաբուծութիւնը քաջալերել:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

1. Դպրոցներ կառուցել այն գիւղերուն մէջ, ուր չկան:

2. Վարժապետներ ղրկել այն գիւղերուն, ուր գիւղացիին աղքատութիւնը թոյլ չի տար վարժապետին վարձքը ապահովել:

3. Գիւղի դպրոցներուն քով պարտէզներ շինել, որպէս զի դասատուն կարենայ աշակերտներուն սորվեցնել ծաղիկի, բանջարեղէնի եւ պտղատու ծառերու մշակութեան նախագիտելիքները:

4. Գիւղի դպրոցներուն ձրիաբար հայթայթել գրքեր եւ գրենական պիտոյքներ:

5. Ուշիմ աղքատ աշակերտներու համար քսակներ հաստատել, որպէս զի կարենան յաճախել բարձրագոյն վարժարաններ:

6. Գիւղերուն մէջ հաստատել ընթերցասրահներ, ուր շաբաթը

անգամ մը վարժապետը գիւղին չափահաս բնակիչներուն ժողովրդական բժշկական եւ երկրագործական թերթերուն մէջ պարունակուած յօդուածներուն ամփոփոյքը ընէ:

7. Ընթերցասրահները օժտել ցուցատախտակներով, որոնք ցոյց տան ալքոլային ըմպելիներու պատճառած վնասները, արգիլելու համար ալքոլամոլութեան հակումը:

8. Ընթերցասրահներուն մէջ հաստատել փոքր գրադարաններ, որոնք պարունակեն երկրագործութեան, պատմութեան, քաղաքացիական բարոյականի վերաբերեալ գրքոյկներ:

9. Արհեստի եւ արուեստի վարժարաններ հիմնել:

10. Քաղաքներու մէջ ընդհանրական գրադարաններ շինել:

11. Քաղաքի վարժարանները օժտել մարմնամարզական սրահով մը, նորածեւ գործիքներով:

12. Մրցանակ հաստատել քաղաքական եւ զինուորական, գրական եւ վաճառականական տեսակէտով, Հայաստանի եւ մերձաւոր երկիրներու բնակիչներու վերաբերեալ եւ անոնց փոխադարձ յարաբերութեանց մասին յօրինուած աշխատասիրութեանց:

13. Մրցանակ հաստատել այն աշխատասիրութեանց համար, որ կը պատկանին տեղական ասացուածքներու եւ լոկ հայերէն բառագիտութեան՝ բոյսերու, միջատներու, անշունչ մարմիններու, որոնք կը պակսին բառարաններու մէջ:

14. Երեւանի համալսարանը օժտել տարեկան գումարով մը, *լապօրայթուարի* գործիքներու եւ ուսման պիտանի զանազան հաւաքածոներու գնման համար:

15. Համալսարանի շրջանաւարտ արժանաւոր աշակերտներուն քսակներ շնորհել, որպէս զի երկու տարուան ժամանակամիջոցի մը մէջ կատարելագործեն իրենց ուսմունքը, օտար երկիրներու մէջ:

16. Նպաստներ յատկացնել 60 տարեկանէն աւելի ծեր մտաւորականներու, վարժապետներու, դասատուներու, գրագէտներու, *արթիսթ*ներու, որոնք չեն կրնար աշխատիլ եւ նեղութեան մէջ կը գտնուին:

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Օգնելու համար գիւղացիին, որպէս զի բարելաւէ իր բերքը եւ աւելցնէ իր բարեկեցութիւնը, կարելի է.

1. Կով մը, գոմէշ մը, այծ մը կամ ոչխար մը տալ աղքատ գիւղացիին:

2. Մէկ կամ աւելի գիւղերու տալ, լաւ տեսակէն ցուլ մը, արու գոմէշ մը, խոյ մը, նոխազ մը, գիւղացիին արջառին տեսակը բարելաւելու համար:

3. Հաւեր, սագեր, հնդկահաւեր տալ գիւղացիներուն:

4. Մեղուի կատարելագործեալ փեթակներ տալ:

5. Առաջին տեսակէն ցորենի, գարիի, հաճարի, եգիպտացորենի, կորեկի, բամպակի եւն. սերմնացուներ տալ:

6. Իւրաքանչիւր գիւղի հացահատիկի լաւ զտիչներ տալ, որպէս զի գիւղացիները կարենան մաքրել իրենց սերմնացուները:

7. Գիւղացիներուն յարմարագոյն երկրագործական գործիքներ տալ, ինչպէս արօր, գութան, լող, քերթիչ (herse), մանգաղ եւն.

8. Իւրաքանչիւր գիւղը բաժանորդագրել երկրագործական եւ ժողովրդական-բժշկական թերթի մը:

9. Տասը անգլ. ոսկի մրցանակ մը տալ այն գիւղացիին, որուն դաշտը լաւագոյն ձեւով պատրաստուած է եւ որուն հունձքը ամենագեղեցիկը եւ ամենամաքուրն է:

10. Տասը անգլ. ոսկիի մրցանակ մը տալ այն գիւղացիին, որուն արջառը ամենագեղեցիկն է եւ ամենալաւ կերպով խնամուած:

11. Իւրաքանչիւր գիւղի տալ կատարելագործեալ մէկ կամ աւելի barate-ներ, կարագի շինութիւնը քաջալերելու համար:

12. Հինգ անգլ. ոսկիի մրցանակ մը տալ այն գիւղացիներուն, որոնք առնուազն տեսիաթին* մը հող պիտի աղբեն, քաջալերելու համար քիմիական աղբին գործածութիւնը, որ ցարդ գրեթէ անծանօթ է մեր երկրին մէջ:

13. Պտղատու եւ անտառի ծառերու տնկարաններ ստեղծել:

* Տարածութիւն չափելու ռուսական հին չափ մը. 1 տեսիաթինը հաւասար է 1,0925 հեքթարի:

14. Նպաստել հայ կառավարության, որպես զի փութացնէ ոռոգման գործերը, խոպան հողերը մշակելի դարձնելու համար:
15. Նպաստել խոնաւ հողերուն չորացմանը:
16. Գիւղացի հողագործներուն համար տնակներ կառուցել:

ԿՏԱԿԻ ՕՐԻՆԱԿ ՄԸ

Ի ներկայութեան նօտարի

Մէկ կողմէն՝ Հ.Բ.Ը.Միութիւնը,

Միւս կողմէն՝ Պր. X որ կը գործէ անձնապէս,

կնքեցին հետեւեալ պայմանագրութիւնը.

Յօդ. 1- Պր. X կը նուիրէ Հ.Բ.Ը.Միութեան հետեւեալ արժեթուղթերը.

.....

.....

Այս նուիրատուութիւնը կը կնքուի հետեւեալ պարտադրութիւններով եւ պայմաններով, որոնք օրէնք կը նկատուին երկու կողմերուն համար:

Յօդ. 2- Նուիրատուութեան առարկայ կազմող վերոյիշեալ բոլոր արժեթուղթերը ի պահ պիտի դրուին Y դրամատան մօտ, որ յանձնառու եղած է զանոնք պահել իբր մշտնջենական ասանդ «Հ.Բ.Ը.Միութեան Հիմնադրամ S» անուամբ *պարութայի* մը մէջ եւ անոնց հասոյթները վճարել Հ.Բ.Ը.Միութեան, որպէս զի գործածուին ըստ նուիրատուի, սոյն վաւերաթուղթին սահմանած պայմաններուն: Եթէ պատահի որ Y դրամատունը լուծուի, ան վերոյիշեալ ասանդը պիտի փոխանցէ միեւնոյն պայմաններով իրեն յաջորդող դրամատան կամ ուրիշ ոեւէ հաստատութեան, զոր պիտի նշանակէ ինք՝ համաձայնութեամբ Հ.Բ.Ը.Միութեան եւ նուիրատուին, որչափ ատեն որ ողջ է ան:

Յօդ. 3- Այն պարագային, երբ աննախատեսելի ծանր պատճառներու հետեանօք անհրաժեշտ լինի նուիրուած արժեթղթերը փոխանցել ուրիշ դրամատան մը, այս փոխանցումը կրնայ տեղի ունենալ միայն համաձայնութեամբ Հ.Բ.Ը.Միութեան եւ նուիրատուին, որչափ ժամանակ որ նա ողջ է: Նորա մահուանէն վերջ Հ.Բ.Ը.Միութեան Կեդր. Ժողովոյ մէկ որոշումը բաւական է այդ փոխանցումը կատարելու, պայմանաւ որ նոր դրամատունը ստանձնէ Y դրամատան նախկին բոլոր պարտականութիւնները:

Յօդ. 4- Նուիրատուի ողջութեան, վերոյիշեալ արժեթուղթերու վաճառումը եւ անոնց տեղ ուրիշներ գնելու գործողութիւնը կը կատարուի միայն համաձայնութեամբ նուիրատուի եւ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան: Նուիրատուի մահէն վերջ Հ.Բ.Ը.Մ. կրնայ ծախել այդ արժեթուղթերը համաձայնութեամբ ասանդապահ դրամատան, բայց փոխարժէքով պարտական է անմիջապէս առաջնակարգ արժեթուղթեր գնել:

Յօդ. 5- Y դրամատունը պիտի վճարէ հասոյթները Հ.Բ.Ը.Մ. եւ նա իր կարգին այդ գումարէն 5 % զեղչելով իր վարչական ծախքերուն համար, պիտի վճարէ մնացորդը

**Պր. X-ին, անոր կեանքին ամբողջ տեւողութեան միջոցին,
Տիկ. X-ին, նուիրատուի ամուսնոյն.**

Եւ եթէ Պր. X վերապրի, իր ամուսնոյն՝ հանգուցեալ Տիկնոջ յատկացուած գումարը կը փոխանցուի իրեն, մինչեւ իր մահը: Այս եկամուտները պէտք է յատկացուին միմիայն Պր. X-ի եւ Տիկ. X-ի ծախքերուն եւ պիտի վճարուին անձամբ Տիկ. X-ին եւ անոր մահէն յետոյ անձամբ Պր. X-ին, կամ անձամբ Պր. X-ին եւ անոր մահէն յետոյ Տիկ. X-ին, առանց որ երբ եւ իցէ երրորդ անձ մը ռեւէ պահանջ կարողանայ յարուցանել տրամադրելի գումարներուն մէկ մասին կամ ամբողջութեանը նկատմամբ:

Յօդ. 6- Հասութառուի կամ երկու հասութառուներու մահէն վերջ, այդ հասոյթները պիտի գործածուին հետեւեալ ձեւով, առանց որ Պր. X-ի եւ Տիկ. X-ի ժառանգորդները իրաւունք ունենան միջամտելու ռեւէ կերպով:

ա.- 5 առ հարիւր տարեկան հասոյթէն պիտի հաւաքուի դրամատան մօտ եւ աւելցուի նուիրատուութեան գումարին, իսկ մնացորդը պիտի յանձնուի Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան:

բ.-15 առ հարիւր տարեկան հասոյթէն պիտի գանձուի Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան կողմէ, իր վարչական ծախսուց համար:

գ.- Մնացորդը, այսինքն 80 առ հարիւրը պիտի գործածուի Հ.Բ.Ը.Միութեան ձեռամբ հետեւեալ՝

(նշանակել նուիրատուի սահմանումները)

Յօդ. 7- Ներկայ վաւերաթուղթի տրամադրութիւնները կը կիրարկուին ոչ միայն նուիրեալ արժեթուղթերուն, այլեւ անոնց, որոնք կրնան փոխարինել նախկին արժեթուղթերը, ինչպէս նաեւ դրամատան գանձած 5 առ հարիւրով յետագային գնուածները, ըստ վերոյիշեալ 6-րդ յօդուածի

ա. պարբերութեան:

Յօդ. 8- Այն պարագային երբ Հ.Բ.Ը.Միութիւնը լուծուի, ըստ նորա կանոնագրի 28-րդ յօդ.ի տրամադրութեանց՝ ներկայ նուիրատուութիւնը պիտի պատկանի այն ընկերակցութեան, որ փոխարինէ Հ.Բ.Ը.Միութեան եւ կամ առ ի չգոյլէ անոր,

(Հայկ. ամենաբարձր իշխանութեան. նուիրատուն կրնայ նշանակել այս տեղ իր ընտրած մէկ հաստատութիւնը)

որ պիտի շարունակէ նուէրի յանձանձումը, ճշգրտօրէն գործադրելով ներկայ վաւերաթուղթի պայմաններն ու տրամադրութիւնները:

Յօդ. 9- Այն պարագային, որ նուիրատութեան հասոյթները կանոնաւոր կերպով չգործածուին (ըստ վերոյիշեալ 6-րդ յօդ.) եւ կամ այն պարագային, որ արժեթուղթերը ծախուին կամ ուրիշ դրամատան մը փոխանցուին առանց նուիրատուներուն կամ հաստատուներուն հաւանութիւնը տանալու (տես յօդուած 4-րդ), անոնք իրաւունք պիտի ունենան ջնջելու ներկայ նուիրատուութիւնը:

Ե. Գ. ԱՂԱԹՕՆ



Շատ անգամներ ազգայիններէն ոմանք կը հարցնեն, թէ եթէ օրին մէկը Միութիւնը կազմալուծուի ի՞նչ պիտի լինին իր դրամագլուխները: Ահա պատասխանը Միութեան կանոնագրին:

ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄ

(Յօդուած 28)

Երբոր Ընդհանուր Ժողովը կազմալուծման որոշում տայ, պէտք է նշանակէ այն հայկական ընկերակցութիւնը կամ հաստատութիւնը, որ պիտի յաջորդէ Հ.Բ.Ը.Միութեան եւ շարունակէ անոր գործերուն վարչութիւնը եւ տնօրինութիւնը, համաձայն Միութեան Կանոնագրին մէջ սահմանուած նպատակներուն, ինչպէս նաեւ համաձայն նուիրատուներուն եւ կտակարարներուն կամքին, նուիրատուութեանց եւ կտակներուն վերաբերմամբ:

Այն պարագային, ուր կազմալուծումը որոշելու համար ի նիստ հրաւիրուած Ընդհանուր Ժողովը չկարենայ օրինաւորապէս գումարուիլ Կանոնագրով նախատեսուած պայմաններուն համաձայն, Կեդր. Վարչական Ժողովին նախագահը, կամ անոր տեղը բռնող անձը՝ ի նիստ պիտի հրաւիրէ հետեւեալ անձերէն բաղկացած Յանձնախումբ մը, որ Միութեան կազմալուծումը պիտի որոշէ եւ պիտի նշանակէ Միութեան յաջորդելիք հայկական ընկերակցութիւնը կամ հաստատութիւնը:

Այդ Յանձնախումբը պիտի բաղկանայ հետեւեալ անձերէն.

ա) Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովին Նախագահը կամ Փոխ-Նախագահներէն մին:

բ եւ գ) Միութեան Ամերիկայի Միացեալ Նահանգներու Շրջանակային Յանձնաժողովէն եւ Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովէն կամ անոնց յաջորդած կազմակերպութիւններէն մէյ մէկ պատուիրակ,

դ) Երեւանի քաղաքային վարչութենէն պատուիրակ մը,

ե) Էջմիածնի Վեհ. Ս. Կաթողիկոսէն պատուիրակ մը,

զ) Կիլիկիոյ Վեհ. Ս. Կաթողիկոսէն պատուիրակ մը,

է) Կ. Պոլսի Հայոց Ամեն. Ս. Պատրիարքէն պատուիրակ մը,

ը) Երուսաղէմի Հայոց Ամեն. Ս. Պատրիարքէն պատուիրակ մը,

թ) Ամերիկայի Միացեալ Նահանգներու Հայ Բողոքական

Եկեղեցիներէն պատուիրակ մը,

ժ)Վենետիկի Մխիթարեան Միաբանութենէն պատուիրակ մը:

Եթէ ռեւէ պատճառաւ, վերոյիշեալ անձերէն մին, հրաւիրագիրներուն մէջ նշանակուած թուականէն առ առաւելն մէկ ամիս պայմանաժամու մէջ չկարենայ ներկայանալ Կեդրոնական Վարչական Ժողովին կեդրոնատեղին, քուէարկութեան մասնակցելու համար, այդ պարագային ներկայ անդամներուն խորհրդակցութիւնը օրինաւոր պիտի նկատուի եւ անոնք պիտի կրնան, ծայներու մեծամասնութեամբ, ընտրելու Միութեան յաջորդելիք հայկական ընկերակցութիւնը եւ կամ հաստատութիւնը, կը բաւէ որ առնուազն հինգ անդամ ներկայ ըլլան:

Վերջապէս, այն պարագային ուր յիշեալ Յանձնախումբը չկարենայ գումարուիլ ռեւէ պատճառաւ, կամ գումարուելէ յետոյ չկարենայ որոշման մը յանգիլ, վերոյիշեալ կազմակերպութիւններէն կամ անձերէն ռեւէ մէկը իրաւունք պիտի ունենայ Հ.Բ.Ը.Միութեան կազմալուծման եւ անոր յաջորդելիք հայկական ընկերակցութեան, հաստատութեան կամ կազմակերպութեան ընտրութեան հարցը ենթարկել Հ.Բ.Ը.Միութեան կեդրոնատեղին եղող Լօզանի Դաշնակցային Դատարանին նախագահին կողմէ, եւ այս դատարանին չգոյութեան պարագային՝ Անգլիոյ Արդարութեան Բարձրագոյն Ատեանին կողմէ նշանակուած իրաւարարի մը իրաւարարութեանը:

Միութիւնը իր հիմնական Դրամագլուխը եւ իր մասնաւոր Դրամագլուխներուն մէկ մասը *թրըսթի* վերածած ըլլալով, եթէ վերոյիշեալ անձերէն կամ կազմակերպութիւններէն մին իրաւարարութիւնը յառաջ չբերէ, այն ատեն *թրըսթիին* – որ չի կրնար անգործածելի թողուլ *թրըսթիին* եկամուտները որ որոշ նպատակներու յատկացուած են – անկ պիտի ըլլայ յառաջ բերել իրաւարարութիւնը, նշանակելու համար այն հայկական ընկերակցութիւնը կամ հաստատութիւնը կամ կազմակերպութիւնը, որուն պէտք է *թրըսթին* (trustee) յանձնէ *թրըսթին* տարեկան եկամուտները:

Երկու պարագային մէջ ալ իրաւական վճիռը վերջնական եւ անվերաքննելի պիտի ըլլայ եւ ծախքերն ալ *թրըսթին* կողմէ պիտի հոգացուին:



ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՏԻԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ

Արդի Նախագահ Հ.Բ.Ը.Միութեան

Նուպար Փաշայի հրաժարելէն յետոյ, նախագգալով որ օր մը չէ օր մը Բարեգործականը պիտի գրկուէր իր սիրելի հիմնադիր ու պետէն եւ պիտի ստիպուէր անոր թափուր թողած նախագահական աթոռը գրաւելու արժանաւոր եւ կարող յաջորդ մը գտնել, խորհեցայ այս խնդրոյն վրայ ու այն եզրակացութեան հասայ, որ Տիար Գալուստ Կիւպէնկեան, իր մեծ կարողութիւններովը, իր յարաբերութիւններովը, իր հարստութեամբն ու ազգասիրութեամբը պէտք եղած անձն է:

Դիւրին չէր Տիար Կիւպէնկեանի մօտենալ, այնքան զբաղած էր ան. ուստի իրեն գրեցի, խնդրելով որ ժամադրութիւն մը որոշէ: Սիրով ընդունեց: Մեր տեսակցութեան միջոցին (1928), երբ իրեն առաջարկեցի Բարեգործ.ի մէջ մտնել եւ Կեդր. Վարչեան անդամակցիլ, մերժեց, առարկելով իր բազմազբաղ վիճակը: Բայց երբ իրեն ըսի, թէ նկատելով

որ ամբողջ Երոպայի մէջ իբր մեծ ելմտագէտ համբաւ կը վայելէր եւ հետեւաբար կրնար խիստ օգտակար ըլլալ Միութեան, իր կարծիքն ու խորհուրդները տալով անոր ունեցած զանազան եւ բազմաթիւ արժեթուղթերու մասին, ինձ պատասխանեց. «Ղրկեցէ՛ք ինձի Միութեան արժեթուղթերուն ցանկը, կը քննեմ զայն ու ձեզ կը պատասխանեմ: Վստահ եղէ՞ք թէ հաճոյքով պիտի ընեմ այս բանը»:

Հետեւեալ օրը Բարեգործականի գրասենեակը երթալով Տիար Մալէզեանը տեսայ եւ հաղորդեցի Տիար Կիւլպէնկեանի հետ տեսակցութիւնս: Խնդրեցի իրմէ որ անմիջապէս մեր արժեթուղթերուն ցանկը դրկէ Տիար Կիւլպէնկեանի, որ փութաց իր կարծիքը յայտնել:

Երբ մեր յոյժ ողբացեալ Նուպար Փաշան մեռաւ, Բարիզ, 25 Յունիսին, հիւանդ էի ես եւ ժընէվ կը գտնուէի: Այդուհանդերձ Կեդր. Վարչ.եան գրեցի խնդրելով, որ չաճապարէ մեր սիրելի Հանգուցեալին յաջորդ մը անուանել. կ'ուզէի ժամանակ ունենալ թեկնածուիս՝ Տիար Գ. Կիւլպէնկեանի ի նպաստ աշխատելու համար:

Վարչ.եան ընկերներէս ոմանց գրած ըլլալով Տիար Կիւլպէնկեանի մասին, ինձ պատասխանեցին որ համակարծիք էին ու զայն Միութեան նախագահութեան իբր միակ արժանաւոր թեկնածուն կը նկատէին:

Ատոր վրայ երկար նամակ մը գրեցի Տիար Կիւլպէնկեանին խնդրելով, որ չմերժէ, եթէ նախագահ ընտրուելու ըլլայ: Քանի մը օր յետոյ իր պատասխանը ստացայ. տրամադիր չէր երեւար ու կը թուէր իր բոլոր պատճառները:

Տիար Լեւոն Կիւմիշկէրտան ալ իր կողմէ, ինձի պէս խորհած ըլլալով նախագահութեան ընտրելիին մասին, մի քանի անգամներ գնաց տեսաւ Տիար Կիւլպէնկեանը եւ անձնական երկար նամակով մը ինձ հաղորդեց իրենց տեսակցութեան արդիւնքը: Քիչ յետոյ, Զուլիցերիոյ մէջ Տիար Լ. Կիւմիշկէրտանի հետ տեսակցութիւն մը ունեցայ Լօզանի Բալաս Օթէլը, ուր ներկայ գտնուեցաւ Կեդր. Վարչ.եան մեր ընկերներէն Տիար Փիլիպպոսեան եւս:

Տիար Կիւմիշկէրտան մեզ երկարօրէն պատմեց իր տեսակցութիւնները Տիար Կիւլպէնկեանի հետ եւ ըսաւ, որ ընդունելու տրամադիր էր ան, եթէ հանրաքուէով անուանուէր:

Այդ դրութիւնը մեր Միութեան կանոնադրին հակառակ էր եւ ոչ շատ գործնական, տրուած ըլլալով որ հայերը ցրուած են աշխարհի հինգ մասերուն մէջ: Այդ դժուարութեան յաղթելու համար որոշեցինք

զանազան գաղութներու մէջ մեր ունեցած բարեկամներուն գրել: Այս աշխատութիւնը կատարել ես յանձն առի:

Տիար Կիւմիշկէրտանի հետ մեր տեսակցութենէն առաջ, Տիար Վաղարշ Թագորեան, որ Բարիզի Տեղական Վարչեան ատենապետն էր, Էվիան եկաւ օդափոխութեան: Զինքը տեսայ: Միութեան հանդէպ իր տածած մեծ սէրը յայտնեց ինձ ու ըսաւ, թէ տրամադիր էր ամէն կերպով աշխատելու Տիար Կիւպէնկեանի ընտրութեան, որուն մեծ կողմնակիցներէն էր:

Տիար Կիւմիշկէրտանի հետ մեր տեսակցութենէն յետոյ դարձեա՛լ տեսայ Տիար Թագորեանը, Թօնօնի մէջ, Էվիանի մօտ եւ միասին մեր ծրագիրը պատրաստեցինք ու պէտք եղած տեղերը նամակ գրեցինք:

Մասնաւոր նամակով մը խնդրեր էի Առաքել Պէյ Նուպարէ, - սերտ բարեկամութեամբ կապուած Տիար Կիւպէնկեանի հետ, - որ ինք ալ իր կողմէ պէտք եղածը խօսէր, Միութեան նախագահութիւնը ընդունիլ տալու համար:

Առաքել Պէյ պատասխանեց, թէ Շամօնիէն Բարիզ վերադարձին պիտի երթար տեսնէր Տիար Կիւպէնկեանը եւ պիտի խօսէր: Ինք ալ խիստ կողմնակից կ'երեւար այս ընտրութեան:

Ամէն կողմէ նամակներ հասան Միութեան ի նպաստ Տիար Կիւպէնկեանի անուանման եւ նամակներ ու հեռագրեր ուղղուեցան իրե՛ն՝ Տիար Կիւպէնկեանի, խնդրելով որ նախագահութիւնը ընդունի, երբ ընտրուելու ըլլայ:

Կը յայտարարեմ, թէ մեր թեկնածուին անուանուելուն մէջ մեծ բաժին մը կ'իյնայ Տիար Լ. Կիւմիշկէրտանի:

Հոկտեմբերին, Ժընէվէն Նիս երթալուս, հեռագիր մը ստացայ Տիարը Մալէզեանէ եւ Կիւմիշկէրտանէ, որով կ'ըսէին թէ Տիար Կիւպէնկեան կը վարանէր. ու կ'առաջարկէին ինձ, որ երթամ տեսնեմ Տիար Տեկանցը (որ Տիար Կիւպէնկեանի խորհրդականն էր ազգային գործերու մասին) եւ խնդրեմ իրմէ գրել Տիար Կիւպէնկեանի, որ չմերժէ նախագահութիւնը:

Ինձմէ ուզուածը կատարեցի եւ Տիար Տեկանց հեռագրեց Տիար Կիւպէնկեանի խնդրելով, որ նախագահութիւնը ընդունի, քանի որ ազգին միահամուռ բաղձանքն էր այդ: Արդարեւ Տիար Կիւպէնկեան այլեւս չընդդիմացաւ:

Տիար Կիւպէնկեանի համար, որ, ինչպէս ամէն մարդ գիտէ, վերջին

ծայր զբաղեալ է, ճշմարիտ զոհողութիւն մըն էր այս տեսակ պաշտօն մը ընդունիլը: Եթէ ընդունեց, ասիկա կը պարտինք իր մեծ հայրենասիրութեան ու ազգին օգտակար ըլլալու փափաքին: Տեսնելով, որ ամէն կողմէ կը խնդրէին, տեղի տուաւ. ու այս՝ ոչ թէ փառքի, այլ լոկ հայրենակիցներուն օգտակար ըլլալու համար:

ԹԷ ԻՆՉՊԷՍ ԾԱՆՕԹԱՑԱՅ ՏԻԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԿԻԼՊԷՆԿԵԱՆԻ

Երբ 1907-ին Անգլիա գացի Լոնտոնի եւ Մանչեսթրի հայոց այցելութեան, բացատրելու համար անոնց Բարեգործականի նպատակը եւ յորդորելու զիրենք, որ անդամ արձանագրուին, տեղական վարչութիւններ կազմեն, - Տիար Կիլպէնկեանի ալ գացի, Լոնտոն եւ մեր Միութեան մասին մի քանի տեղեկութիւններ տուի: Խնդրեցի իրմէ, որ հաճի շահեկան գրքեր նուիրել այն նոր մատենադարանին, զոր հիմնած էինք Գահիրէ, Միութեան գրասենեակին մէջ: Ազնուութիւնը ունեցաւ երկու սնտուկ անգլիերէն գրքեր ղրկելու, որոնց մէջ գտայ խիստ շահեկան հատոր մը, զոր Տիար Կիլպէնկեան քսանհինգ տարեկանին գրած էր, իր դէպի Կովկաս ճամբորդութեան ու Պաքուի քարիւղներուն մասին:

Մեծ պատերազմէն առաջ, ամէն անգամ Բարիզ երթալուս, իրեն կ'այցելէի: Գիտնալով որ միշտ Բարեգործականին համար կ'աշխատէի, կը հարցնէր ինձ, թէ ի՞նչ կրնար ընել օգտակար ըլլալու համար: Անգամ մը 3,000 \$-ը. տուաւ *քինին* գնուելու եւ Կիլիկիա ղրկուելու նպատակաւ, ուր ժողովուրդը ջերմէ կը տառապէր: Ուրիշ անգամ մըն ալ 5,000 \$-ը. տուաւ:

Պատերազմը վրայ հասնելով, մեր յարաբերութիւնները դադրեցան եւ տասնչորս տարի վերջը միայն, 1928-ին զինքը տեսայ դարձեալ:

Պատերազմէն առաջ մեր խօսակցութեանց միջոցին, երբ իր քաղաքական տեսակէտները կը պարզէր, հաճոյ չէին գար ինձ, սխալ կը նկատէի զանոնք: Բայց տարիներ վերջը դէպքերը ցոյց տուին, որ իրաւունք ունէր, թէ ճիշդ գուշակեր էր, թէ ե՛ս սխալեր էի:

Այսօր երջանիկ կը զգամ ինքզինքս, նպաստած ըլլալուս համար Միութեան իր նախագահ ընտրուելուն, եւ եթէ վաղը աչքերս փակեմ, հանգիստ սիրտով պիտի մեռնիմ խորհելով, որ սիրելի

Բարեգործականս, որուն նուիրուեցայ հոգուով մարմնով քսանըհինգ տարիէ ի վեր, լաւ ձեռքբերու մէջ կը գտնուի ու իր ապագան ապահովուած է:

ՈՍԿԵՄԱՏԵԱՆ

Ասկէ 5-6 տարի առաջ Բարեգործականի Ամերիկայի մասնաճիւղերը Ֆիլատելֆիայի մէջ տեղի ունեցած Միութեան Քօնկրէին միջոցին, Բարեգործականի քսանըհինգ ամեայ յրբեւեանին առթիւ 250,000 տոլար դրամ հաւաքելու եւ Միութեան տրամադրութեան ներքեւ դնելու որոշումը տուած էին: Ատկէ՛ ծագում առած է Նուպարաշէնի հիմնարկութիւնը:

Այն ատեն, մտածելով թէ այդ յրբեւեանին համար ոսկեմատեան մը պէտք պիտի ըլլար, որ Միութեան քսանըհինգ տարուան միջոցին ազգէն ստացած դրամներուն հաշիւը եւ Կեդրոնին ու հարիւր յիսունէ աւելի մասնաճիւղերուն գործունէութիւնը պարունակէր, - ձեռնարկեցի սոյն կարգի հատորի մը ծրագրին պատրաստութեան:

Սիրելի բարեկամիս՝ Տիար Տիգրան Կամսարականի հետ համառօտ բան մը պատրաստեցինք եւ յանձնեցինք Միութեան պիւնտին: Տիար Վ. Մալէգեան այն ժամանակ Վարիչ-Պատուիրակ եւ Ընդհ. Տնօրէն անուանուած չէր տակաւին:

Երեք տարի առաջ, խնդրանքիս վրայ, Բարեգործականի Կեդր. Ժողովը Տիարը Կամսարականէ, Մալէգեանէ եւ ինձմէ յանձնախումբ մը կազմեց, որպէս զի ոսկեմատեանի խնդրով զբաղինք: Տիար Մալէգեան անմիջապէս պէտք եղած հրահանգները տուաւ բոլոր մասնաժողովներուն:

Գործը մեծ եւ դժուար էր. պէտք էր ժողովուրդին ներկայացնել Բարեգործականի քսանըհինգ տարուան մանրամասն պատմութիւնը եւ գործունէութիւնը, ինչ որ գրեթէ ազգին վերջին քսանըհինգ տարուան պատմութիւնը կը նշանակէ:

Այսպիսի աշխատութիւն մը հրատարակելու համար, բնական է, մեծ գումարի մը պէտք պիտի ըլլար:

Նկատի առնելով, որ Բարեգործականի պիւնտէն չէր թոյլատրեր այսպիսի ծախք մը, որոշեցի մի քանի բարեկամներու դիմելով գումար մը մէջտեղ բերել եւ պէտք եղած դիմումները կատարեցի: 1930-ին, երբ տակաւին մեր սիրելի Պօղոս Փաշա Նուպար ողջ էր, այս գործին համար տուաւ 200 անգլ. ոսկի: Քոյրը՝ Տիկ. Նոյեմի Գափամաճեան՝ 100 ոսկի,

գաւակը՝ Վահրամ Պէյ Նուպար 100, Լեւոն Պէյ Յակոբեան՝ 100, Դարուի Յակոբեան հիմնադրամէն՝ 100 եւ եւ ալ 50 ոսկի. եւ կը յուսամ թէ տակաւին մի քանի պատուական ազգայիններ պիտի գտնուին իրենց բաժինը բերելու:

Այս տարուան սկիզբէն Տիար Մալեգեան լծուած է այս դժուարին ու փափուկ գործին՝ խմբագրութեան եւ տպագրութեան, որ կը յուսամ թէ քիչ ժամանակէն լոյս տեսնայ:

Այս ոսկեմատեանին վաճառումէն մնացած շահը պիտի յատկացուի Բարեգործականի որբերուն:



Հ.Բ.Ը.Միութեան առաջին խորհրդապատկերը

ՅՈՒՑԱԿ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ՄԻՆՉԵՒ 1860-Ի ՎԵՐՁԸ

Աղագարեան Յովսէփ	1	Անուիւեան Եսայի	1
Աղագարեան Ստեփան Վրդ.	1	Աշնան Մկրտիչ	2
Ազնաւոր Սերոբէ	1	Աշնան Պօղոս	1
Ալաճաճեան Յակոբ	1	Ապտուլլահ Միքայէլ Էֆ.	2
Ալաճաճեան Պետրոս	1	Ապտուլլահ Գեորգ	1
Ալանեան Յարութիւն	1	Ապտուլլահ Պետրոս	1
Ալթուն Էֆէնտի	1	Ապտուլլահ Վիչէն	1
Ալթունեան Արթաքի	2	Ապրօ Անտոն	2
Ալթունճեան Համբարձում	1	Ապրօ Քաթինկօ Տիկին	2
Ալեանագեան Խաչատուր	1	Ասլանեան Ստեփան Պէլ	1
Ալիշան Միքայէլ	1	Ասքարեան Յովհաննէս	1
Ալիշան Սերոբէ	1	Արդարեան Հաճի Յովհ.	1
Ալիշան Վիչէն	1		
Ախիկեան Մերկեր	1	Արզուման Միքայէլ	1
Աղաթօն Գրիգոր Էֆ.	1	Արշակ Յակոբոս	1
Աղաթօն Միքայէլ	1	Արփաճեան Յակոբ	1
Աղաթօն Մկրտիչ	1	Բանոսեան Կարապետ	1
Աղաթօն Յովհաննէս	1	Բարլատի Գ. Միքայէլ	1
Աղաթօն Նեքտառ Տիկին	1	Բարունակ Պէլ	1
Աղաթօն Սօֆիկ Տիկին	1	Բարսեղեան Գրիգոր	1
Այվատեան Մատթէոս	1	Գաբրիէլ Քահանայ	1
Այվատեան Մեսրոպ	1	Գ. Յ.	1
Այտընեան Գեորգ	1	Գամալիկեան Պօղոս	1
Գառնիկեան Մարտիրոս	1	Երկանեան Մկրտիչ	1
Գասեան Յարութիւն	1	Երկանեան Նիկողայոս	1
Գասպարեան Բեթեր	1	Երկանեան Պօղոս	1
Գատէմեան Կարապետ	1	Զարդարեան Գեորգ	1
Գարագաշեան Ստեփան	1	Զարֆճեան Գրիգոր	1
Գարակէօզեան Միքայէլ	1	Զեմպէրէկճեան Խոսրով	1
Գարկաեան Մարկոս	1	Զօհրապեան Մեսրոպ	1
Գըլճեան Յովհաննէս	1	Էմինեան Յովհաննէս	1

Գլխչեան Ալէքօ	2	Էնտագեան Աւիք	1
Գրասէրեան Գաբրիէլ	1	Թագուրեան Բասգալ	1
Գրիգորեան Մարտիրոս	1	Թագուրեան Գէորգ Տոքթ.	1
Գօլօլեան Աւետիս	1	Թագուրեան Յովհաննէս	1
Եազըճեան Ստեփ. Վրդ.	1	Թագուրեան Սերոբէ	5
Եագմաճեան Աւետիս	1	Թարապուլուսի Սօֆի Տու.	1
Եագմաճեան Երանուհի Տիկ.	1	Թէոփիլեան Բասքալ	1
Եագմաճեան Մարգար	1	Թընկըրեան Կարապետ	1
Եղեսեան Յովհ. Եպիսկ.	1	Թընկըրեան Տիմոթէոս Վրդ.	1
Եըլտըզեան Պօղոս	1	Թիրեաքեան Գ. Կարապետ	1
Եուսուֆեան Յովհաննէս	1	Թիւլպէնտճեան Անտօն	1
Եուսուֆեան Տիգրան	1	Թիւլպէնտճեան Կարապետ	1
Եսայեան Եսայի	1	Թիւսիւզեան Սերոբէ	1
Եսայեան Թովմայ	1	Թօքաթլեան Բարթօղիմ.	1
Եսայեան Մանուէլ	1	Թընկըրեան Յովհաննէս	1
Եսայեան Յովհաննէս	1	Թօքաթլեան Մարտիկ	1
Եսայեան Յովսէփ	1	Թօքաթլեան Մինաս	1
Երամ Անտօն	1	Ինճէճիքեան Մարտիրոս	1
Երեքեղբայրեան Մկրտիչ	1	Իսկէնտէրեան Մելքոն	2
Իւթիւճեան Կարապետ	1	Կիւլլիւեան Յ. Գ.	1
Լաթիֆեան Պետրոս	1	Կիւմիւշեան Խաչիկ	1
Լութիեան Յարութիւն	1	Կիւմիւշկէրտանեան Ռուբէն	1
Խանտուրեան Յակոբ	1	Կիւմիւշկէրտանեան Տիգրան	1
Խաչիկեան Հաճի Կարապ.	1	Կիւմիւշճեան Գէորգ	1
Խոտիկ Զենոբ	2	Կոճիկեան Անդրանիկ Պէլ	1
Խոտիկ Յովսէփ	2	Կոճիկեան Յովհաննէս	1
Խումարեան Կարապետ Էֆ.	1	Հաճիեան Տիգրան	1
Խուրտաճեան Գրիգոր	1	Համամճեան Սարգիս Էֆ.	1
Խուրտաճեան Յովհաննէս	1	Համբարձումեան Մկրտիչ	1
Խուրտաճեան Սրբուհի Տիկ.	2	Համբարձումեան Յովհ.	1
Խօճասարեան Օզսէն	1	Հանըմեան Բ. Յովսէփ	1
Խօրասանճեան Գէորգ	3	Հանըմեան Յ. Յակոբ	1
Խօրասանճեան Թովմաս Է.	1	Հանըմեան Մկրտիչ	1
Խօրասանճեան Պետրոս	10	Հարենց Աբրահամ	1
Ծաննի Վիչէնցօ	1	Հէքիմեան Սրապիոն	1
Կարապետօֆ Սարգիս	1	Հիսարլեան Սարգիս	1

Կեսարեան Թովմաս	1	Հիրամիւզ Սերոբէ	1
Կելկէլեան Մկրտիչ	2	Հիրամիւզ Յովհաննէս	1
Կելկէլեան Յովհաննէս	5	Հովիւեան Յովհաննէս	1
Կելկէլեան Պօղոս	2	Հօլաս Վիչէն	1
Կելկէլեան Փիլիպպոս	3	Ղազարոսեան Յակոբ	1
Կէօնճիւեան Դաւիթ	1	Ճանազեան Մարտիրոս	1
Կէօչէեան Խաչատուր	1	Ճանըմեան Աննիկ Տիկին	1
Կէօչէեան Միքայէլ	1	Ճանըմեան Մկրտիչ	1
Կէօչէեան Սերոբէ	1	Ճանըմեան Յովհաննէս	1
Կիւզէլեան Բէթէր	1	Ճաֆճաֆեան Մինաս	1
Կիւզէլեան Բօլ	1	Ճերմակեան Բարսեղ	2
Ճէպէճեան Յարութիւն	1	Միսաքեան Ստեփան	2
Ճէվահիրճեան Անտօն	1	Միսաքեան Վարդերես	5
Ճէվահիրճեան Եղիազար	1	Միսիլեան Ժան	6
Ճէվահիրճեան Նունիկ Տիկ.	1	Միսքճեան Լուսֆի	1
Ճիլաճեան Մկրտիչ	1	Միւհէնտիսեան Էֆտիկ Տ.	1
Ճիլաճեան Պօղոս	1	Միւհէնտիսեան Լուցիքա Տ.	1
Ճիվէլէկեան յովհաննէս	1	Միւհէնտիսեան Կարապետ	1
Մալխազունեան Մարգիս	2	Միւհէնտիսեան Մարտիրոս	1
Մալխասեան Անտօն	1	Միւհէնտիսեան Մկրտիչ	1
Մալխասեան Յովսէփ	1	Միւհէնտիսեան Յովհաննէս	1
Մալխասեան Ստեփան	1	Միքայէլեան Սիմօն	1
Մակազեան Գրիգոր	1	Մկրեան Յովհաննէս	1
Մաղաքեան գալուստ	1	Մկրեան Մարգիս	1
Մամուռեան մատթէոս	1	Մկրտիչեան Ստեփան	1
Մանաս Էֆէնտի	1	Մկրտիչեան Վիչէն	1
Մանասեան Աբիկ	2	Մումճեան Մկրտիչ	1
Մանուէլ Վարդապետ	1	Մումճեան Պետրոս	1
Մանուկեան Ստեփան	1	Մուպահաճեան Յակոբ	10
Մարգարեան Արսէն	1	Մօսկօֆլու Ստեփան	1
Մարկոսեան Յակոբ	1	Յ. Ե.	1
Մաքսուտեան Սիմօն	1	Յակոբեան Թովմաս	1
Մեսրոպ Վարդապետ	5	Նալբանդեան Միքայէլ	2
Մելիքեան Եղիազար	1	Նահապետեան Համբարձում	1
Մէրասէտեան Պետրոս	1	Նարին Սիմօն	1
Մինասեան Մինաս Էֆ.	1	Ներսէսեան Կարապետ	1

Միսաքեան Աւետիս	3	Նեվրուզեան Երմոնիկ Տիկ.	1
Միսաքեան Յովսէփ	2	Նեվրուզեան Հոփիսիմէ Տիկ.	1
Միսաքեան Նիկողայոս	3	Նեվրուզեան Յովակիմ	5
Միսաքեան Պետրոս	3	Նորատունկեան Գրիգոր	1
Նորատունկեան Յակոբ	1	Պապաեան Սիմօն	1
Նորատունկեան Պաղտ.	1	Պտր Կ. Պոլսոյ Սարգիս Արք.	10
Նորատունկեան Սօֆիկ Տիկ.	1	Չուպուքճեան Գրիգոր	1
Նորիկեան Նշան	1	Պարթեւեան Գեորգ	1
Նորիկեան Պետրոս	1	Պարտիզպանեան Թազուր	1
Նուհ Ռուբէն	1	Պետրոսեան Սարգար	1
Նուռեան Կարապետ	1	Պէհզար Ումէտ	1
Նուռեան Յարութիւն	1	Պէլլերեան Խոսրով	2
Նուռեան Յովհաննէս Էֆ.	1	Պէլլերեան Հաճի Տիկիւն	4
Շալճեան Թազուր	1	Պէլլերեան Սաքրուհի Օր.	2
Շահանեան Օզսէն Էֆ.	1	Պէլլերեան Յակոբ	6
Շահպազեան Կարապետ	1	Պէլլիկճեան Եղիազար	1
Շաշեան Անդրէաս	1	Պէլլիկճեան Լուցիքա Տիկ.	1
Շաշեան Պօղոս Տոքթ.	1	Պէլլիկճեան Ճանիկ	1
Շէխեանց Յ. Աղէքսանդր	1	Պէլլիկճեան Մ. Թադէոս	1
Շիշմանեան Սարիամ Տիկ.	1	Պէլլիկճեան Սարգար	1
Շիշմանեան Միրիճան	1	Պէլլիկճեան Ստեփան	1
Շիշմանեան Յովսէփ Տոքթ.	1	Պէնտերեան Մկրտիչ	1
Շիշմանեան Պօղոս	1	Պէշիկթաշլեան Բառնաբաս	1
Չամիչեան Աննիկ Օր.	1	Պէշիկթաշլեան Մկրտիչ	1
Չամիչեան Գեորգ	1	Պէտան Պէլ	1
Չամիչեան Յովհաննէս Էֆ.	3	Պիլէզիկճեան Յովսէփ	1
Չայեան Թովմաս	1	Պուկարեան Ռուբէն	1
Չարազեան Յակոբ	1	Պուրունսուզեան Յակոբ	3
Չուպուքճեան Քերոբէ	1	Պուրունսուզեան Տիրուհի Տ.	1
Չօլաքեան Մանուկ	1	Պօղոսեան Ղազարոս	1
Պալճեան Թազուր	1	Պօյաճեան Յակոբ	1
Պաղտասարեան Երեմիա	1	Պօյաճեան Յովհաննէս	1
Սամանճեան Մկրտիչ	1	Տավուտ Մկրտիչ	1
Սամանճեան Սէրէնա Տիկ.	1	Տավուտ Յակոբ Էֆ.	1
Սանտալճեան Թումիկ	2	Տավուտ Յ. Կարապետ	1
Սարաֆեան Յովհաննէս	1	Տավուտ Պօղոս	1

Սագրգեան Յովհաննէս Էֆ.	1	Տավուտեան Վարդան Յովհ.	1
Սերովբեան Տ. Քրիստափոր	1	Տավուտեան Վարդան Տիգր.	1
Սերվիչէն Էֆ.	1	Տէմիրճիպաշեան Սեպուհ	1
Սեւեան Գաբրիէլ	1	Տէյիբմէնճեան Գրիգոր	1
Սըվաճեան Յարութիւն	1	Տիւզեան Յովհաննէս Պէյ	1
Սըվաճը Պետրոս	1	Տօնելեան Յակոբ	1
Սիմօնովիչ Սիմօն	1	Փափազեան Անդրանիկ	1
Սինանեան Գրիգոր	1	Փափազեան Գարեգին	1
Սիրունեան Կարապետ	1	Փափազեան Հաճի Արթին	3
Սինապեան Գասպար Պէյ	1	Փափազեան Ստեփան	1
Սիսակեան Գրիգոր	1	Փափազեան Վարդան	1
Սիւնկիւճեան Յովհաննէս	1	Փափազօֆ Համբարձում	1
Սիրմէլեան Ստեփան	1	Փէշտիմալճեան Թագուհի	1
Սրապեան Պետրոս	1	Փէշտիմալճեան Յովսէփ	
Սօֆեալեան Յ. Գ.	1	Փէքմէզեան Փէթէր	1
Սօֆեալեան Վիչէն	1	Փիշմիշ Գրիգոր	1
Վասիլեան Սերոբէ	1	Փիշմիշ Սկրտիչ	1
Վասիլեան Քաթինկօ Տիկ.	1	Փիշմիշ Մովսէս	1
Վարդանեան Յովսէփ Փաշա	1	Փիշմիշ Նշան	1
Վարպետեան Յովսէփ	1	Փուլճեան Պօղոս	10
Վրթանէս Քահանայ	1	Փորթուզալեան Յովսէփ	1
Տամատեան Մատթէոս	1	Քեահեանեան Գրիգոր	1
Տամատեան Յովսէփ	1	Քեահեանեան Մարտիրոս	1
Տավուտ Կարապետ Էֆ.	1	Օտեան Նշան	1
Քիւրքճիլիսանլեան Մուրատ	1	Օտեան Պօղոս	1
Քիւրքճիլիսանլեան Պօղոս	1	Ֆերնանտօ Բավլաքի	1
Քէօսէեան Նշան Եղիկ	1	Ֆրէնկեան Աբրահամ	1
Օղուլուխեան Մինաս	1	Ֆրէնկեան Գ.	1
Օտեան Գրիգոր Էֆ.	1	Փէքմէզեան Կոմիտաս	1
Օտեան Թագուհի Տիկին	1	Փէշտիմալճեան Սահակ	1
Օտեան Կիրակոս	1		

ԳՈՒՄԱՐ 446 բաժին

ՑԱՆԿ ՆԻԻԹՈՑ

Ձօն	3
Երկու խօսք	5
Դպրոցական տարիքիս մէջ Բարեգործականի մը գաղափարը ի՛նչպէս ունեցայ.....	7
Ի՛նչպէս Գահիրէի մէջ հիմնուեցաւ Բարեգործականը.....	10
Ցանկ առաջին ժողովին անդամներուն	17
Յայտարարութիւն Կեդր. Վարչական ժողովի.....	20
Բարեգործականի իրաւական հանգամանքը.....	22
Թրըսթ.....	22
Տկեանս թոշակ	24
Ապահովագրութիւն	24
Թէ ի՛նչպէս Բարեգործ.ը մարդ գլուխ կէս ֆրանք ծախսելով տասը հազար հայ մահուրնէ ազատեց.....	27
Ինչո՞ւ Բարեգործականը այսքան առաջ գնաց	29
Հ.Բ.Ը.Միութեան Կեդր. ժողովի այսօրուան կազմը.....	31
Յայտարարութիւն Բարեգործական Ընկերութեան Հայոց 1860	32
Հիմնական կանոնադրութիւն.....	42
Յաւելուած.....	47
Նուիրատուութիւնք եւ Կտակք.....	52
Կազմալուծում	68
Յաւելուած - Տիար Գալուստ Կիւլպէնկեան	70
Թէ ի՛նչպէս ծանօթացայ տիար Գալուստ Կիւլպէնկեանի	73
Ոսկեմատեան	74
Ցուցակ Բաժանորդաց.....	76